ԴԵՊԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Կենսաբանական բազմազանության
մասին կոնվենցիայի
Պահպանվող տարածքների վերաբերյալ
աշխատանքների ծրագրի
իրականացման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Նայջլ Դուդլեյ,
Քալեմանի Զո Մուլոնգոյ,
Շելդոն Քոհեն,
Սյու Սթոլթոն,
Չարլզ Վիկտոր Բարբեր
և
Սարատ Բաբու Գիդա

Copyright © 2005, Secretariat of the Convention on Biological Diversity

Անգլերեն բնօրինակ. Nigel Dudley, Kalemani Jo Mulongoy, Sheldon Cohen, Sue Stolton, Charles Victor Barber and Sarat Babu Gidda (2005). Towards Effective Protected Area Systems. An Action Guide to Implement the Convention on Biological Diversity Programme of Work on Protected Areas. Secretariat of the Convention on Biological Diversity, Montreal, Technical Series no. 18, 108 pages.

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագրի իրականացման ուղեցույց Նայջլ Դուդլեյ, Քալեմանի Ջո Մուլոնգոյ, Շելդոն Քոհեն, Սյու Սթոլթոն, Չարլզ Վիկտոր Բարբեր և Սարատ Բաբու Գիդա

Ուղեցույցը թարգմանվել և հրատարակվել է որոշ փոփոխություններով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից (ԲՀՀ Հայաստան/WWF Armenia, www.panda.org/armenia):

ԲՀՀ Հայաստանը շնորհակալություն է հայտնում MAVA Foundation Pour La Nature հիմնադրամին աշխատության թարգմանության և հրատարակության նպատակով ֆինանսական օժանդակություն տրամադրելու համար:

Լուսանկարները՝ ©WWF Հայաստան/ Ա. Մալխասյան

WWF *for a living planet*

Protected Areas for a Living Planet

delivering on CBD commitments

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան
Խոսք շնորհակալության
Հապավումներ

ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 1.
Աշխատանքների ծրագրի հիմնական փուլեր
ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 2.
Աշխատանքների ծրագրի նպատակներ
ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 3.
Աշխատանքների ծրագրի վերջնաժամկետ ունեցող գործողություններ
ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 4.
Աշխատանքների ծրագրի գործողությունների ամբողջական ցուցակ

ՄԱՍ I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
ԳԼՈՒԽ 1. ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ
Ինչպես օգտվել ուղեցույցից
Ի՞նչ են պահպանվող տարածքները և ինչու՞ են դրանք կարևոր
Պահպանվող տարածքներ և Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա
Աշխատանքների ծրագրի պահանջները
ՄԱՍ II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԳԼՈՒԽ 2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԿՆԱՐԿ
ԳԼՈՒԽ 3. ԹԵՄԱ 1. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ (Խնդիրներ 1.1,1.2 և 1.3)
ԳԼՈՒԽ 4. ԹԵՄԱ 2. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (Խնդիր 1.4)
ԳԼՈՒԽ 5. ԹԵՄԱ 3. ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻՆ (Խնդիր1.5)
ԳԼՈՒԽ 6. ԹԵՄԱ 4. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ (Խնդիրներ 2.1, 2.2 և մասամբ 1.1)
ԳԼՈՒԽ 7. ԹԵՄԱ 5. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ (Խնդիր 3.1
ԳԼՈՒԽ 8. ԹԵՄԱ 6. ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ (Խնդիրներ 3.2, 3.3. և 3.5)
ԳԼՈՒԽ 9. ԹԵՄԱ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ (Խնդիր 3.4)
ԳԼՈՒԽ 10. ԹԵՄԱ 8. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ (Խնդիրներ 4.1, 4.2 և 4.3)
ԳԼՈՒԽ 11. ԹԵՄԱ 9. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ (Խնդիր 4.4)
ՀԱՎԵԼՎԱԾ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

Հատուկ պահպանվող տարածքները (ՊՏ) սկսեցին ստեղծվել ավելի քան 100 տարի առաջ՝ դրանց բնական գեղեցկության և կենսաբազմազանության կարևոր էլեմենտների պահպանության համար: ՊՏ-ները վաղուց հայտնի են որպես համաշխարհային կենսաբազմազանության պահպանության հիմնական միջոց: Սակայն, վերջին 40 տարիների ընթացքում տեղի ունեցավ ՊՏ-ների դերի ընկալման փոփոխություն՝ «ազգային պարկերից և արգելոցներից» դեպի ավելի լայն գաղափարական և գործնական մոտեցումներ ունեցող տարածքներ, ներառյալ կայուն օգտագործվող տարածքները: Ներկայումս ընդունվում է, որ ՊՏ-ները, բացի իրենց պահպանական նշանակությունից, կատարում են ներդրում նաև մարդկանց բարեկեցության, չքավորության նվազեցման և կայուն զարգացման համար: Դրանք նպաստում են տեսակային և գենետիկական բազմազանության պահպանությանը, էկոհամակարգային ծառայությունների իրականացմանը, տեղաբնակների ապրելամիջոցների ապահովմանը, ինչպես նաև ստեղծում են հնարավորություններ տուրիզմի և ռեկրեացիայի համար:

Ընդհանուր առմամբ վերջին տասնամյակի ընթացքում ՊՏ-ների քանակը գնալով ավելանում է: Ներկայումս կան ավելի քան 100 000 ՊՏ-ներ, որոնք զբաղեցնում են երկրագնդի մակերեսի մոտ 12% և հանդիսանում են հողօգտագործման ամենակարևոր ձևերից: Թեև ՊՏ-ների թիվը և տարածքն ավելանում է, կենսաբազմազանության կորուստը շարունակվում է: ՊՏ-ների գոյություն ունեցող գլոբալ համակարգը թերի է. 1) դրանք չեն ընդգրկում բոլոր բիոմները և կրիտիկական տեսակները, 2) դրանք չեն իրականացնում կենսաբազմազանության պահպանության իրենց խնդիրները, 3) անբավարար է տեղական համայնքների մասնակցությունը ՊՏ-ների ստեղծման և կառավարման հարցերում, և 4) զարգացող երկրներում ՊՏ-ները վատ են ֆինանսավորվում:

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի (ԿԲԿ) Կողմերի Կոնֆերանսի (ԿԿ) 7-րդ հանդիպումը, հիմնվելով Հազարամյակի զարգացման նպատակների, Կայուն զարգացման համաշխարհային վեհաժողովի Իրականացման պլանի և Պարկերի 5-րդ համաշխարհային կոնգրեսի Գործողությունների պլանի վրա, ընդունեց Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագիր: Պատմական նշանակություն ունեցող այս փաստաթուղթը միջազգային հանրության կողմից ստանձնած ՊՏ-ներին վերաբերվող ամենաամբողջական և կոնկրետ պարտավորություններից է: *Աշխատանքների ծրագրի* ընդհանուր նպատակն է ստեղծել և պահպանել «ՊՏ-ների ընդգրկուն, արդյունավետ կառավարվող և էկոլոգիական առումով ներկայացուցչական համակարգեր», որոնք բոլորը միասին զգալի կնվազեցնեն գլոբալ կենսաբազմազանության կորուստի չափը ցամաքային և ծովային տարածքներում՝ համապատասխանաբար մինչև 2010թ. և 2012 թ.: *Աշխատանքների ծրագրում* ԿԿ-ը սահմանել է կոնկրետ նպատակներ, խնդիրներ և գործողություններ: ԿԿ-ը հստակեցրել է, որ *Աշխատանքների ծրագրի* լիարժեք իրականացումը կպահանջի աննախադեպ միջազգային համագործակցություն, ներառյալ ավելի շատ ֆինանսական և տեխնիկական միջոցների տրամադրում զարգացող երկրներին:

ՊՏ-ների արդյունավետ գլոբալ համակարգը կստեղծի մեծ հուսալիություն բնական էկոհամակարգերի, ապրելավայրերի և տեսակների կենսունակ ու ներկայացուցչական տարածքների պահպանության համար, որը պետք է օգնի 2010 թ-ի կենսաբազմազանության նպատակին հասնելու գործին: Ընդունելով *Աշխատանքների ծրագիրը* ՝ համաշխարհային հանրությունը համաձայնվեց աշխատել համատեղ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում համաշխարհային ՊՏ-ների վերաբերյալ հստակ սահմանված նպատակների և ժամկետային խնդիրների իրականացման համար:

Այս ուղեցույցը ներկայացնում է *Աշխատանքների ծրագրի* խնդիրները և ժամանակացույցերը, ինչպես նաև իրականացման հնարավոր քայլերը, օրինակները, գործիքները և միջոցները: Ուղեցույցը կազմված է երկու մասից: Առաջին մասը հակիրճ ներկայացնում է ՊՏ-ների դերն ու կարևորությունը և ԿԲԿ-ի *Աշխատանքների ծրագրի* պահանջները: Երկրորդ մասն ուղեցույց է *Աշխատանքների ծրագրում* սահմանված գործողությունների իրականացման վերաբերյալ: *Աշխատանքների ծրագրի* ամբողջական տեքստը բերվում է հավելվածում: Ուղեցույցի մշակման համար իրենց ներդրումն են կատարել բազմաթիվ կազմակերպություններ, հաստատություններ և փորձագետներ: Այն քննարկվել է կենսաբազմազանության մասնագետների և ՊՏ-ների ազգային կառույցների կողմից:

Ուղեցույցը նպատակաուղղված է աջակցություն ցույց տալ ՊՏ-ների ղեկավարներին և քաղաքականություն մշակող կառավարություններին, ինչպես նաև ՀԿ-ներին, համայնքներին և բոլոր նրանց, ովքեր ջանքեր են ներդնում ապահովելու համար ՊՏ-ների հնարավորությունների լիարժեք իրականացումը՝ որպես հիմք կենսաբազմազանության պահպանության և կայուն զարգացման համար՝ կենտրոնացնելով ուժերն *Աշխատանքների ծրագրի* առաջնահերթ խնդիրների իրականացման ուղղությամբ:

Նիկիտա Լոպուխին
Նախագահ
ԲՊՄՄ-ՊՏՀՀ

Համդալահ Զեդան
Քարտուղար
Կենսաբազմազանության մասին կոնվենցիա

ԽՈՍՔ ԵՎՐՇԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Այս ուղեցույցի մշակմանն աջակցել են շատերը՝ հաճախ աշխատելով շատ սուղ ժամկետներում: Չափազանց արժեքավոր արձագանք է ստացվել ՊՏ-ների հետ կապված մի շարք կառավարական կառույցների ներկայացուցիչների կողմից, ներառյալ Ռաունո Վահսանենը (Ֆինլանդիայում Բնական ժառանգության ծառայությունների, Մեծահալիտուսի տնօրեն), Էդգար Բուհանգան (Ուգանդայի Վայրի բնության լիազոր մարմին), Սարա Պիզեյը և Պիտեր Կոչրեյնը (Ավստրալիայի պարկեր կազմակերպություն), ինչպես նաև Նիկիտա Լոպուխինը (Կանադայի պարկեր կազմակերպության նախկին գործադիր տնօրեն և ներկայումս ՊՏՀՀ-ի նախագահ): ՊՏՀՀ-ն ակտիվ մասնակցել է ողջ գործընթացում և մենք երախտապարտ ենք Դեյվիդ Շեպերդին և Պեդրո Ռոզաբալին աջակցության համար, ինչպես նաև Անդրեա Աթանուսին ԲՊՄՄ-ի տնտեսական բաժնի տեսանկյունից մեկնաբանություններ կատարելու համար: Գրազիա Բորինի-Ֆեյերաբենդը տրամադրել է օգտակար և մանրամասն քննադատություն ԲՊՄՄ-ի ԲՏԱՔՀ և ԲՏՀՀՊՏԹ-ի կողմից:

Քուինսլենդի համալսարանից և ՊՏՀՀ-ից Մարկ Հոկինգսը մանրամասն մեկնաբանություններ է ներկայացրել կառավարման արդյունավետության բաժնի վերաբերյալ: Մանրիք Ռոյասը և Ջեֆ Պերիշը ԲՊԿ-ից տվել են ընդհանուր ուղղություն աշխատանքին: Մարիո Վիերոսը ԿԲԿ-ի Քարտուղարությունից ներդրում է կատարել ծովային ՊՏ-ների վերաբերյալ: Ռեբեկա Լիվերմորը, Էլիզաբեթ Օնեյլը, Լյուիս Պաբոնը, Շանոն Քվեսադան և Գրեյս Ոնգը Քոնսերվեյշն Ինտերնեյշնլից, ինչպես նաև Լեոնարդո Լացերդան ԲՀՀ Ինտերնեյշնլից ներկայացրել են մեկնաբանություններ և լրացումներ տեքստի տարբեր մասերի վերաբերյալ:

ԲՊԿ-ն և ԲՀՀ-ն տրամադրել են ֆինանսական աջակցություն ներկա փաստաթղթի հետ կապված ուսումնասիրությունների և դրա մշակման համար:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

■ ԱՊՏ (TBPA)	Անդրսահմանային պահպանվող տարածք
■ ԲՀՀ (WWF)	Բնության համաշխարհային հիմնադրամ
■ ԲՄՀԿ (WCMC)	Բնապահպանական մոնիտորինգի համաշխարհային կենտրոն
■ ԲՊԿ (TNC)	Բնության պահպանության կազմակերպություն
■ ԲՊՄՄ (IUCN)	Բնության պահպանության միջազգային միություն
■ ԲՊՄՄ – ՊՏՀՀ (IUCN – WCPA)	ԲՊՄՄ – Պահպանվող տարածքների համաշխարհային հանձնաժողով
■ ԲՏՀՀՊՏԹ (TILCEPA)	Բնիկների և տեղական համայնքների, հավասարության և պահպանվող տարածքների թեմա
■ ԲՏՍՔՀ (CEESP)	Բնապահպանական, տնտեսական և սոցիալական քաղաքականության հանձնաժողովի կայք
■ ԳԷՀ (GEF)	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
■ ԳՏՏԽՕՄ (SBSTTA)	Գիտական, տեխնիկական և տեխնոլոգիական խորհրդատվության օժանդակ մարմին
■ ԿԱՌԳԾ (NBSAP)	Կենսաբազմազանության ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր
■ ԿԲԿ (CBD)	Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա
■ ԿՁՀՎ (WSSD)	Կայուն զարգացման համաշխարհային վեհաժողով
■ ԿԿ (COP)	Կողմերի Կոնֆերանս
■ ԿՊ (MP)	Կառավարման պլան
■ ՀԲ (WB)	Համաշխարհային բանկ
■ ՀՁՆ (MDG)	Հազարամյակի զարգացման նպատակներ
■ ՀԿՀԻ (CEPA)	Հաղորդակցություն, կրթություն և հանրային իրազեկություն
■ ՄԱԿ (UN)	Միավորված ազգերի կազմակերպություն
■ ՄԱԿԳՄԿ (UNESCO)	Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
■ ՄԱՇՄԾ (UNEP)	Միավորված ազգերի շրջակա միջավայրի ծրագիր
■ ՇՄԱԳ (EIA)	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
■ ՈԿԿ (NGO)	Ոչ կառավարական կազմակերպություն
■ ՊԳԿ (FAO)	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
■ ՊՏ (PA)	Պահպանվող տարածք
■ ՊՏՀՏԲ (WDPA)	Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազա

ԴԵՊԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագրի իրականացման ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐ

2004 թ-ին Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի (ԿԲԿ) Կողմերի Կոնֆերանսի (ԿԿ) 7-րդ խորհրդակցության ժամանակ 188 Կողմերը համաձայնության եկան պատմության մեջ կարևոր բնապահպանական ռազմավարություններից մեկի՝ *Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագրի վերաբերյալ*:

Ծրագրի նպատակներն են ստեղծել «ընդգրկուն, արդյունավետ կառավարվող և էկոլոգիական առու-մով ներկայացուցչական պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգեր» ցամաքային և ծովային տարածքների համար՝ համապատասխանաբար մինչև 2010թ. և 2012թ.:

Աշխատանքների ծրագիրը (որի տեքստը բերվում է հավելվածում) կարելի է բաժանել ստորև ներկայացվող երեք հիմնական փուլերի:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՓՈՒԼԵՐ	
ՓՈՒԼԵՐ	**ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՓՈՒԼԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
ՓՈՒԼ I (2004-2006)	**Պահպանվող տարածքների «գլխավոր պլան»:** Պահպանվող տարածքների (ՊՏ) համակարգի համար «գլխավոր պլանի» մշակում (հիմնական էլեմենտներն ընդգրկում են, օրինակ, էկոլոգիական բացերի լրացման պլաններ, ֆինանսական միջոցների ապահովում, հզորությունների ստեղծում, աջակցություն կառավարման ձևերին, ինչպես նաև արձագանքում քաղաքականության, օրենսդրական և ինստիտուցիոնալ խոչընդոտներին): **Ուսումնասիրություններ** և **գնահատումներ** «գլխավոր պլանների» համար: Դրանք վերաբերվում են, օրինակ, ՊՏ-ների սոցիալ-տնտեսական ներդրումներին, ՊՏ-ների համակարգերի էկոլոգիական բացերին և կառավարման ձևերին: **Նոր պահպանվող տարածքներ:** Նոր ՊՏ-ների ստեղծում այն վայրերում, որտեղ պահանջվում են հրատապ գործողություններ:
ՓՈՒԼ II (2007-2008)	**Վտանգներ:** Առկա են հիմնական վտանգներին արձագանքելու մեխանիզմներ: **Ֆինանսական միջոցներ:** Ապահովված են բավարար ֆինանսական միջոցներ: **Բնիկներ** և **տեղական համայնքներ:** Քաղաքականություններ և մեխանիզմներ, որոնք նպաստում են բնիկների և տեղական համայնքների մասնակցությանը և ծախսերի ու օգուտների հավասար բաշխմանը: **Ստանդարտներ:** ՊՏ-ների բոլոր հիմնական ասպեկտների համար ընդունված ստանդարտներ:
ՓՈՒԼ III **(2009-2015)**	**Պահպանվող տարածքների արդյունավետ համակարգեր:** Ընդգրկուն, էկոլոգիական առումով ներկայացուցչական և արդյունավետ կառավարվող ՊՏ-ների համակարգեր: ՊՏ-ների **ինտեգրում** ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում:

Այս աղյուսակը չի ներկայացնում *Աշխատանքների ծրագրի* շրջանակներում ակնկալվող հիմնական արդյունքների ամբողջական ցուցակը: Այն չի հանդիսանում նաև գործողությունների փուլերի իրականացման ամրագրված բաշխում: Այն ընդամենը գործիք է, որը կօգնի Կողմերին գործողությունների լավագույն հաջորդականությունը սահմանելու և *Աշխատանքների ծրագրի* շրջանակներում հաջորդական արդյունքների ստացման ուղղությամբ մտածելու հարցերում: Փուլերի կոնկրետ ժամանակացույցերը և արդյունքները պետք է հարմարեցվեն յուրաքանչյուր երկրի կոնկրետ պայմաններին:

ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Աշխատանքների ծրագրի հիմքում ընկած են 16 «խնդիրներ», որոնց համապատասխանում են «նպատակներ». համարյա բոլոր դեպքերում առկա են դրանց իրականացման վերջնաժամկետները: Այդ նպատակները բերվում են ստորև ժամանակագրական կարգով:

ՄԻՆՉԵՎ 2006թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ	**ՆՊԱՏԱԿ**
1.5	Առկա են արդյունավետ մեխանիզմներ ՊՏ-ների **հիմնական վտանգների** հայտնաբերման և կանխարգելման, և/կամ դրանց բացասական ազդեցությունների նվազեցման համար:
2.1	Մշակել մեխանիզմներ ՊՏ-ների ստեղծման և կառավարման **ծախսերի և օգուտների հավասար բաշխման** համար:
2.2	**Բնիկների և տեղական համայնքների** լիարժեք և արդյունավետ **մասնակցություն՝** հարգելով նրանց իրավունքները և ընդունելով նրանց պարտականությունները, համաձայն ազգային օրենսդրությանը և առնչվող միջազգային պարտավորություններին, և համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցություն գոյություն ունեցող ՊՏ-ների կառավարման, ինչպես նաև նորերի ստեղծման և կառավարման հարցում:
3.1	Ընդհանուր ամփոփել և վերանայել **քաղաքականությունները**, ինչպես նպատակահարմար է, ներառյալ սոցիալական և տնտեսական գնահատման և խթանների օգտագործումը, որպեսզի ՊՏ-ների և ՊՏ-ների համակարգերի ավելի արդյունավետ ստեղծման և կառավարման համար ապահովվեն նպաստավոր հնարավորություններ ստեղծող պայմաններ:
3.4	Ապահովել բավարար **ֆինանսական, տեխնիկական և այլ միջոցներ** ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի արդյունավետ վարման և կառավարման ծախսերի համար, ներառյալ ազգային և միջազգային աղբյուրները, մասնավորապես զարգացող և անցումային տնտեսությամբ, ինչպես նաև զարգացող փոքր կղզի պետությունների կարիքներին աջակցելու համար:
3.5	Զգալի բարձրացնել ՊՏ-ների կարևորության և օգուտների վերաբերյալ **հանրային իրազեկությունը**, ինչպես նաև դրանց **ըմբռնումը և գնահատումը**:
4.1	Մշակել և ընդունելՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի պլանավորման, ընտրության, ստեղծման, կառավարման և ղեկավարման **ստանդարտներ, չափանիշներ և լավագույն պրակտիկաներ**:

ՄԻՆՉԵՎ 2008թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ	**ՆՊԱՏԱԿ**
1.1	Ստեղծել ընդգրկուն, ներկայացուցչական և արդյունավետ կառավարվող ազգային և տարածաշրջանային **ցամաքային** ՊՏ-ների համակարգերի **գլոբալ ցանց**:

1.3	Ստեղծել և հզորացնել **անդրսահմանային պահպանվող տարածքները (ԱՊՏ)**, ազգային սահմանների երկարությամբ հարևան պահպանվող տարածքների միջև համագործակցության այլ ձևերը և տարածաշրջանային ցանցերը, կենսաբանական բազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը նպաստելու համար՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և բարելավելով միջազգային համագործակցությունը:
3.2	Իրականացնել **հզորությունների ստեղծման** ընդգրկուն ծրագրեր և նախաձեռնություններ անհատական, համայնքային և ինստիտուցիոնալ մակարդակներում գիտելիքների և հմտությունների զարգացման և մասնագիտական ստանդարտների բարձրացման համար:
3.3	Զգալի բարելավել ՊՏ-ների արդյունավետ կառավարման **համապատասխան տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների** զարգացումը, հաստատումը և փոխանցումը՝ հաշվի առնելով ԿԿ-ի որոշումները տեխնոլոգիաների փոխանցման և համագործակցության մասին:
4.2	Կողմերն ընդունել և իրականացնում են ՊՏ-ների կառավարման արդյունավետության **մոնիտորինգի, գնահատման և զեկուցման** շրջանակներ՝ տարածքների, ազգային և տարածաշրջանային համակարգերի, ինչպես նաև ԱՊՏ-ների մակարդակներում:
4.3	Ստեղծվել են ազգային և տարածաշրջանային համակարգեր, որոնք հնարավորություն են ստեղծում արդյունավետ **մոնիտորինգի** ենթարկել ՊՏ-ների ընդգրկման գոտին, կարգավիճակը և միտումներն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, և աջակցել կենսաբազմազանության գլոբալ նպատակներին հասնելու գործում առաջընթացի գնահատմանը:
ՄԻՆՉԵՎ 2012թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ	**ՆՊԱՏԱԿ**
1.1	**Ծովային** տարածքներում ստեղծել ընդգրկուն, ներկայացուցչական և արդյունավետ կառավարվող ազգային և տարածաշրջանային ՊՏ-ների համակարգերի **գլոբալ ցանց**:
1.4	Բոլոր ՊՏ-ներում առկա է **արդյունավետ կառավարում**, որն օգտագործում է մասնակցային և գիտականորեն հիմնավորված տարածքային պլանավորման գործընթացներ, որոնք ընդգրկում են կենսաբազմազանության հստակ խնդիրներ, նպատակներ, կառավարման ռազմավարություններ և մոնիտորինգի ծրագրեր՝ հաշվի առնելով գոյություն ունեցող մեթոդները և երկաժամկետ կառավարման պլանը, շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ:
ՄԻՆՉԵՎ 2015թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ	**ՆՊԱՏԱԿ**
1.2	Բոլոր **ՊՏ-ները և ՊՏ-ների համակարգերն ինտեգրել ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում**, և առնչվող սեկտորներում՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և հաշվի առնելով էկոլոգիական կապերի ապահովումը և, որտեղ նպատակահարմար է, էկոլոգիական ցանցերի հայեցակարգը:

ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 3

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքների ծրագրի 16 նպատակներին համապատասխանում են մի շարք «Կողմերին առաջարկվող գործողություններ»: Դրանք նպատակներին հասնելու համար անհրաժեշտ համաձայնեցված կոնկրետ գործողություններն են:

ՄԻՆՉԵՎ 2006թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
N	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
1.1.1	Սահմանել ազգային ՊՏ-ների **նպատակները** և ցուցանիշները:
1.1.2	Ստեղծել և ընդլայնել ՊՏ-ներ **առաջնահերթ պահպանության կարիք ունեցող տարածքներում**, ներառյալ մեծ, չտարանջատված, չխախտված, չվերականգնվող կամ շատ վտանգված տարածքները:
1.1.3	Արձագանքել ՊՏ-ների համակարգերում **ներքին ջրերի** էկոհամակարգերի փոքր ներկայացվածությանը:
1.1.4	Ընդհանուր ամփոփել պահպանության առկա և պոտենցիալ ձևերը, ներառյալ **կառավարման բոլոր** ձևերը:
1.1.5	Իրականացնել ազգային և տարածաշրջանային **բացերի վերլուծություն**:
1.2.1	Հայտնաբերել ավելի ընդհանուր **լանդշաֆտային** ռազմավարություններում ՊՏ-ների ինտեգրումից քաղած դասերը:
3.1.1	Հայտնաբերել օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը և խոչընդոտները, որոնք խանգարում են ՊՏ-ների արդյունավետ ստեղծմանը և կառավարմանը, և ստեղծել արդյունավետ **քաղաքականության շրջանակ**:
3.2.1	Իրականացնել **հզորությունների ստեղծման** կարիքների ազգային գնահատում և մշակել հզորությունների ստեղծման ծրագրեր:
3.4.9	Ընդհանուր ամփոփել և տարածել ուսումնասիրություններ ՊՏ-ների **էկոհամակարգային ծառայությունների** վերաբերյալ:
4.2.1	Մշակել և ընդունել **կառավարման արդյունավետության** գնահատման մեթոդներ և ստանդարտներ:

ՄԻՆՉԵՎ 2008թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
N	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
1.1.3	Արձագանքել ՊՏ-ների համակարգերում **ծովային** էկոհամակարգերի փոքր ներկայացվածությանը:
1.2.2	Հայտնաբերել և իրականացնել գործնական քայլեր ՊՏ-ներն ավելի մեծ **ցամաքային և ծովային լանդշաֆտներում** ինտեգրելու ուղղությամբ:
2.1.1	Հարմարեցնել քաղաքականությունները **բնիկների և տեղական համայնքների** ծախսերը և օգուտները գնահատելու համար, նպաստել դրական օգուտներին և խուսափել բացասական ազդեցություններից:
3.1.2	Ապահովել **նպաստավոր հնարավորություններ ստեղծող պայմաններ** ՊՏ-ների և ՊՏ-ների համակարգերի ավելի արդյունավետ ստեղծման և կառավարման համար:
3.4.2	Մշակել ՊՏ-ների համակարգերի **կայուն ֆինանսավորման** պլաններ և սկսել դրանց իրականացումը:

4.1.2	Մշակել և ընդունել **մոնիտորինգի** համակարգեր ՊՏ-ների նվաճումները գնահատելու համար:
ՄԻՆՉԵՎ 2009թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
N	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
1.1.6	**Առանձնացնել** բացերի վերլուծության միջոցով սահմանված նոր ՊՏ-ներ (ներառյալ հստակ քարտեզները):
3.1.1	Արձագանքել **օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերին** և խոչընդոտներին, որոնք խանգարում են ՊՏ-ներին:
ՄԻՆՉԵՎ 2010թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
N	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
1.1.6	Ստեղծել **ցամաքային ՊՏ-ների** ազգային և տարածաշրջանային համակարգեր:
1.3.2	Համագործակցել **ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ծովային տարածքներում** ՊՏ-ների ստեղծման և կառավարման համար:
1.3.3	Ստեղծել, որտեղ նպատակահարմար է, նոր **անդրսահմանային** ՊՏ-ներ:
1.4.3	Մշակել կամ թարմացնել ՊՏ-ների **կառավարման պլանները**:
1.5.2	Մշակել ազգային մոտեցումներ **պատասխանատվության և արձագանքման** միջոցառումների վերաբերյալ, ներառյալ «վճար աղտոտման համար» մոտեցումը:
3.2.2-3.2.3	**Հզորությունների ստեղծման լիարժեք ծրագրեր** անհատական, համայնքային և ինստիտուցիոնալ մակարդակներում գիտելիքների և հմտությունների զարգացման և մասնագիտական ստանդարտների բարձրացման համար:
3.3.1-3.3.5	ՊՏ-ների արդյունավետ կառավարման համար **համապատասխան տեխնոլոգիաների** և նորարարական մոտեցումների զարգացում, հաստատում և փոխանցում:
4.2.2-4.2.4	Իրականացնել ՊՏ-ների առնվազն 30%-ի **կառավարման արդյունավետության** գնահատումներ, ընդգրկել ԿԲԿ-ի ազգային զեկույցներում և իրականացնել գնահատման արդյունքները:
4.3.1-4.3.5	Ստեղծել **արդյունավետ մոնիտորինգի** ազգային և տարածաշրջանային **համակարգեր** ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում ՊՏ-ների ընդգրկման գոտու, վիճակի և միտումների բացահայտման համար:
ՄԻՆՉԵՎ 2012թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
N	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
1.1.6	Ստեղծել **ծովային ՊՏ-ների** ազգային և տարածաշրջանային համակարգեր:
1.4.1-1.4.6	Մինչև 2012 թ. բոլոր ՊՏ-ներում առկա է **արդյունավետ կառավարում**:
ՄԻՆՉԵՎ 2015թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
N	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**
1.2.3	**Ինտեգրել** ՊՏ-ների համակարգերն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում:

ՀԱԿԻՐՃ ԾԱՆՈԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 4

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Աշխատանքների ծրագրի 92 գործողություններից ոչ բոլորն ունեն հստակ վերջնաժամկետներ: Այդ պատճառով ստորև բերվող աղյուսակը կարող է նպաստել Կողմերին գործողությունների փոխհարաբերության և հերթականության վերլուծության համար: Աղյուսակում նշվում են բոլոր 92 գործողությունները: Աշխատանքների ծրագրում վերջնաժամկետի բացակայության դեպքում գործողությունը նշվում է շեղատառ, իսկ մոտավոր վերջնաժամկետը բերվում է այդ գործողությանն առնչվող ընդհանուր նպատակի վերջնաժամկետի հիման վրա: Բոլոր գործողությունների համար վերջնաժամկետները պետք է հարմարեցվեն երկրների կոնկրետ հանգամանքներին: Օրինակ, 2.1.2 գործողությունը (համայնքի կողմից պահպանվող տարածքների ճանաչում) Աշխատանքների ծրագրում վերջնաժամկետ չունի, սակայն այս գործողության նպատակն է մինչև 2008թ. ստեղծել ՊՏ-ների ծախսերի և օգուտների հավասար բաշխման մեխանիզմներ: Հետևաբար, 2008թ-ը կարող է լինել 2.1.2 գործողության իրականացման տրամաբանական վերջնաժամկետը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ՎԵՐՋՆԱ-ԺԱՄԿԵՏ	ԽՆԴԻՐՆԵՐ 1.1 - 1.4 ՍՏԵՂԾԵԼ ՊՏ-ՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	ԽՆԴԻՐ 1.5 ՆՎԱԶԵՑՆԵԼ ՎՏԱՆԳՆԵՐԸ	ԽՆԴԻՐՆԵՐ 2.1 - 2.2 ՆՊԱՍՏԵԼ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ
2006թ.	Ազգային/տարածաշրջանային չափելի նպատակներ (1.1.1 և 1.4.2) Էկոլոգիական բացերի վերլուծություն (1.1.5) Հրատապ գործողություններ մեծ չխախտված կամ շատ վտանգված բնական ապրելավայրերում ՊՏ-ների ստեղծման կամ ընդլայնման ուղղությամբ (1.1.2) Հրատապ գործողություններ քաղցրահամ ջրերի էկոհամակարգերի ուղղությամբ (1.1.3) Ընդհանուր ամփոփել կառավարման տարբերակները (1.1.4) Ընդհանուր ամփոփել ինտեգրացված մոտեցումների փորձը (1.2.1) *Ընդգրկել կլիմայի փոփոխության ադապտացիան պլաններում* (1.4.5)	*Գնահատել հիմնական վտանգները* (1.5.5)	*Մշակել մասնակցային պլանավորման մեխանիզմներ* (2.2.2) *Նպաստել կառավարման տարբեր ձևերին* (2.1.2) *Աջակցել մասնակցային գնահատման գործողություններին* (2.2.3) *Իրականացնել մասնակցային ազգային ընդհանուր ամփոփումներ* (2.2.1)
2007թ.			
2008թ.	Ծովային էկոհամակարգերի պահպանության գործողություններ (1.1.3) Ինտեգրման բարելավման գործնական քայլեր (1.2.2)	*Իրականացնել ԵՄԱԳ ՊՏ-ների վրա ազդեցություն ունեցող ծրագրերի համար* (1.5.1) *Մշակել ապօրինի օգկագործմանը վերաբերվող քաղաքականություններ* (1.5.6)	*Ճանաչել համայնքների կողմից պահպանվող տարածքներ* (2.1.2) *Գենետիկական պաշարների հասանելիության ազգային քաղաքականություններ* (2.1.6) *Ընդգրկել ՊՏ-ները չքավորության նվազեցման ռազմավարության փաստաթղթերում* *Սոցիալ-տնտեսական ծախսերի և օգուտների վերլուծություն* (2.1.1 և 2.1.4)

ԽՆԴԻՐՆԵՐ 3.1 - 3.5 ՍՏԵՂԾԵԼ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ	ԽՆԴԻՐՆԵՐ 4.1 - 4.4 ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏԱՑՈՒՄ
Հայտնաբերել օրենսդրական/ինստիտուցիոնալ բացերը (3.1.1) Գնահատել հզորությունների կարիքները (3.2.1) *Փաստագրել գործիքները և գնահատել զարգացման կարիքները* (3.2.2, 3.5.1 և 3.5.2)	Ընդունել ՊՏ-ների արդյունավետության գնահատման մեթոդներ (4.2.1) *Ստեղծել ազգային/տարածաշրջանային ՊՏ-ների տվյալների բազա* (4.3.3)
Գնահատել ՊՏ-ների ներդրումները	
Վերացնել բացասական խթանները և հիմնել դրականները (3.1.5 – 3.1.6) *Օրենսդրական շրջանակներ* (3.1.7) *Ներդաշնակ դարձնել օրենքները ներառյալ կառավարումը* (3.1.3) Մշակել/իրականացնել ֆինանսական պլաններ (3.4.2) *Միջազգային ֆինանսավորում* (3.4.3) *Ֆինանսավորման ռազմավարություններ երկրի համար* (3.4.6) *Կրթական/հասարակության իրազեկության ծրագրեր* (3.5.1 - 3.5.6)	*Մշակել ՊՏ-ների կամավոր ստանդարտներ* (4.1.1) *Մշակել և իրականացնել ՊՏ-ի արդյունքների մոնիտորինգ* (4.1.2) Թեմատիկ զեկույց Աշխատանքների ծրագրի իրականացման վիճակի վերաբերյալ 9-րդ ԿԿ-ին (4.3.2)

ՎԵՐՋՆԱ-ԺԱՄԿԵՏ	ԽՆԴԻՐՆԵՐ 1.1 - 1.4 ՍՏԵՂԾԵԼ ՊՏ-ՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	ԽՆԴԻՐ 1.5 ՆՎԱԶԵՑՆԵԼ ՎՏԱՆԳՆԵՐԸ	ԽՆԴԻՐՆԵՐ 2.1 - 2.2 ՆՊԱՍՏԵԼ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ
			Ստեղծել հնարավորություններ ստեղծող օրենսդրական դաշտ (2.2.4, 2.1.3 և 2.1.6) Պլաններ բնիկների համար (2.1.3, 2.2.2 և 2.2.5)
2009թ.	Հիմնել նախատեսված ՊՏ-ներ (1.1.6) Իրականացնել տարածքի պլանավորման մասնակցային գործընթացներ (1.4.1) *Ուսումնասիրել ՊՏ-ների դերը կայուն օգտագործման հարցում* (1.2.3 և 1.4.3)	*Ուսումնասիրել վերականգնումը* (1.5.3) *Արձագանքել ինվազիվ տեսակներին* (1.5.4)	
2010թ.	Ստեղծել ցամաքային ՊՏ-ներ (1.1.6 և 1.1.7), ներառյալ օգուտները տեղական և բնիկ համայնքների համար *Անդրսահմանային ՊՏ-ներ* (1.3.1 - 1.3.4) Մշակել/թարմացնել կառավարման պլանները (1.4.4)	Մշակել պատասխանատվության և փոխհատուցման միջոցառումներ ներառյալ «վճար աղտոտման համար» սկզբունքը (1.5.2)	
2011թ.			
2012թ.	Ստեղծել ծովային ՊՏ-ներ (1.1.6) *Ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ծովային տարածքներում ՊՏ-ներ* (1.3.2) *Հզորությունների ստեղծում տարածքային կառավարման համար* (1.4.6)		
2015թ.	*Ինտեգրում միջանցքների զարգացման միջոցով* (1.2.3 և 1.2.4) *Վերականգնում ՊՏ-ներում* (1.2.5)	Աջակցել ՇՄԱԳ-ի իրականացմանը ՊՏ-ների շուրջ տեղի ունեցող զահգացումների համար (1.5.1)	

ԽՆԴԻՐՆԵՐ 3.1 - 3.5 ՍՏԵՂԾԵԼ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ	ԽՆԴԻՐՆԵՐ 4.1 - 4.4 ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏԱՑՈՒՄ
Արծագանքել օրենսդրական բացերին (3.1.1)	*Ներդնել հարմարեցված կառավարման գործընթացներ* (4.1.3)
Մշակել գործիքներ (3.5.4) *Փոխանցել գործիքները և հզորությունները ազգային ՊՏ լիազոր մարմիններին* (3.3.5)	Իրականացնել ՊՏ-ների արդյունավետության գնահատում ազգային ՊՏ-ների առնվազ 30%-ում (4.2.2) *Բարելավել տվյալների հավաքը, ՊՏՀՏԲ և ՄԱԿ-ի ցուցակը* (4.3.4)
	Բարելավել հետազոտությունները ներառյալ համագործակցությունը, տվյալների տարածումը և հրատարակությունները (4.4.1 – 4.4.7)

ՄԱՍ I
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1

ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել լավ կառավարվող, ընդգրկուն և էկոլոգիական առումով ներկայացուցչական ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի ստեղծմանը և պահպանմանը, ցամաքային և ծովային տարածքների համար՝ համապատասխանաբար մինչև 2010թ. և 2012 թ., որոնք միասին, գոյություն ունեցող գլոբալ ցանցի միջոցով նպաստում են Կոնվենցիայի երեք նպատակների իրականացմանը և 2010թ. նպատակին՝ գլոբալ, տարածաշրջանային, ազգային և ենթաազգային մակարդակներում կենսաբազմազանության կորստի ներկայիս չափի զգալի նվազեցմանը, ինչպես նաև աղքատության նվազեցմանը և կայուն զարգացմանն՝ աջակցելով Կոնվենցիայի Ռազմավարական ծրագրին, Կայուն զարգացման համաշխարհային վեհաժողովի (ԿԶՎՀ) Իրականացման ծրագրին և Հազարամյակի զարգացման նպատակներին (ՀԶՆ):

Աշխատանքների ծրագիրը բաղկացած է 4 ծրագրային էլեմենտներից, 16 ընդհանուր խնդիրներից (յուրաքանչյուրին համապատասխանում է կոնկրետ նպատակ) և Կողմերի համար նախատեսված 92 գործողություններից, որոնցից շատերն ունեն կոնկրետ ժամանակացույց: *Պահպանավող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագիրը* չափազանց մեծ նպատակներ հետապնդող ծրագրերից է, որի իրականացումը կարող է դժվար լինել կառավարությունների համար: *Աշխատանքների ծրագրի* մի շարք գործողություններ կապված են իրար հետ, իսկ որոշները՝ մասամբ համընկնում են: Որոշ գործողություններ պետք է իրականացվեն յուրաքանչյուր երկրի կողմից, իսկ մի շարք գործողություններ իրականացվում են ընդամենը մեկ անգամ՝ արդյունքները տրամադրելով մյուսներին: Երկրներն այս աշխատանքը չեն սկսում զրոյից, այլ հիմնվում են գոյություն ունեցող առաջընթացի, փորձի, միջոցների և տվյալների վրա:

Այս ուղեցույցի նպատակն է օգնել կառավարություններին և այլ շահագրգիռ կողմերին կազմակերպել, կենտրոնացնել և առաջնահերթել իրենց ջանքերն ու գործողությունները լավ կառավարվող ՊՏ-ների ընդգրկուն գլոբալ ցանցի ստեղծման համար: Ուղեցույցում չկան պատրաստի խորհուրդներ հնարավոր իրավիճակների համար: Այն ներկայացնում է անհրաժեշտ գործողությունները և գոյություն ունեցող հնարավորությունները:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԻՑ

Աշխատանքների ծրագրի իրականացման պատասխանատուները կարող են փոքր փորձ ունենալ ԿԲԿ-ի կամ կենսաբազմազանության պահպանության ոլորտում: Ուղեցույցից օգտվելու համար նախնական գիտելիքների առկայությունը պարտադիր չէ: Ավելի մեծ փորձի առկայության դեպքում ուղեցույցը կարող է օգտակար լինել որպես ռեսուրսների և գործիքների ամփոփ հավաքածու:

Ուղեցույցի I-ին մասը ներածական է և ներառում է բաժիններ **ՊՏ-ների դերի և կարևորության, ԿԲԿ-ի պատմության և նպատակների, *Աշխատանքների ծրագրի* ընդհանուր նկարագրի** վերաբերյալ, որին հաջորդում է **գործողությունների հակիրճ ցուցակը և ժամանակացույցը**, որը կօգնի գործողությունների պլանավորմանը:

Ուղեցույցի II-րդ մասում (գլուխներ 2-11) գործողությունները բաժանվում են 9-ը հիմնական **թեմաների**, որոնք ներկայացվում են աղյուսակ 1-ում: Այն կօգնի խնդիրների և գործողությունների չափազանց ընդգրկուն ցուցակը ներկայացնել ավելի պարզ ձևով՝ իրականացումը հեշտացնելու նպատակով: Օրինակ, *Աշխատանքների ծրագրում* մի քանի անգամ կրկնվող կետերն ուղեցույցում միավորվել են մեկ թեմայի մեջ:

Յուրաքանչյուր թեմատիկ գլուխ բաղկացած է հետևյալ ենթագլուխներից.

I. **Հակիրճ ակնարկ.** անհրաժեշտ գործողությունների և հիմնական հարցերի մասին 1-2 ամփոփ նախադասություն:

II. **Խնդիրներ և նպատակներ.** *Աշխատանքների ծրագրի* ընդհանուր խնդիրների և նպատակների բացատրություն: Որոշ դեպքերում այն կարող է ներառել մի քանի իրար նման նպատակներ:

Աղյուսակ 1. ԿԲԿ-ի Աշխատանքների ծրագրի 9-ը հիմնական թեմաները

Ծրագրային էլեմենտ 1. Ուղղակի գործողություններ ուղղված ՊՏ-ների համակարգերի և տարածքների պլանավորմանը, ընտրությանը, ստեղծմանը, հզորացմանը և կառավարմանը

- ՊՏ-ների ցանցերի ստեղծում և էկոհամակարգային մոտեցում
- Տարածքների հիման վրա ՊՏ-ների պլանավորում և կառավարում
- ՊՏ-ներին սպառնացող վտանգների նվազեցում

Ծրագրային էլեմենտ 2. Կառավարում, մասնակցություն, հավասարություն և օգուտների բաշխում

- ՊՏ-ների սոցիալական օգուտների ավելացում

Ծրագրային էլեմենտ 3. Հնարավորություններ ստեղծող գործողություններ

- Հնարավորություն ստեղծող քաղաքականության շրջանակի ստեղծում
- Հզորությունների ստեղծում
- Ֆինանսական կայունության ապահովում

Ծրագրային էլեմենտ 4. Ստանդարտներ, գնահատում և մոնիտորինգ

- Կառավարման ստանդարտներ և արդյունավետ կառավարում
- Գիտության կիրառում

III. **Համատեքստ.** խնդրի և դրա կարևորության հակիրճ նկարագրություն:

IV. **Խնդիրների իրականացման հիմնական գործողություններ.** նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առավել կարևոր գործողություններ:

V. **Նախատեսված գործողությունների իրականացման հնարավոր քայլեր.** հնարավոր քայլեր և դրանց գործնական իրականացման մանրամասներ:

VI. **Օրինակներ.** տարբեր երկրներում նպատակներին հասնելու համար իրականացված գործողությունների օրինակներ՝ համապատասխան ինտերնետային կայքերի հղումներով:

VII. **Գործիքներ և ռեսուրսներ.** գործիքների ընտրանի (մեթոդներ, տվյալների աղբյուրներ, գործնական տեղեկություններ և այլն), որը կարելի է օգտագործել կոնկրետ նպատակներին հասնելու համար: Այս ցուցակը վերջնական չէ և ժամանակի ընթացքում կհամալրվի (տե՛ս, օրինակ, **http://www.earthtoolbox.net**):

Ծանոթություն. այս ուղեցույցը ներկայացնում է *Աշխատանքների ծրագրի* իրականացման վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվության միայն մի փոքր մասը, սակայն այն օգնում է ընթերցողին գտնել ավելին:

ԻՆՉ ԵՆ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԻՆՉՈՒ՞ ԵՆ ԴՐԱՆՔ ԿԱՐԵՎՈՐ

Ի՞նչ է պահպանվող տարածքը

Բնության պահպանության միջազգային միությունը (ԲՊՄՄ) բնութագրում է պահպանվող տարածքը որպես *ցամաքային և/կամ ծովային տարածք, որը հատուկ ուղղված է կենսաբանական բազմազանության, ինչպես նաև բնական և դրա հետ կապված մշակութային ռեսուրսների պահպանությանը, և կառավարվում է օրենսդրական կամ այլ արդյունավետ միջոցներով*: ԿԲԿ-ն (1992թ.) սահմանում է պահպանվող տարածքը որպես *աշխարհագրական առումով սահմանված տարածք, որն առանձնացվում կամ կարգավորվում և կառավարվում է կոնկրետ բնապահպանական նպատակներին հասնելու համար:* ՊՏ-ները (ազգային պար-

կեր, արգելոցներ, արգելավայրեր և այլն) հանդիսանում են ազգային և միջազգային բնապահպանական ռազմավարությունների կարևոր տարրեր: Դրանք ապրելավայր են կարևոր տեսակների համար, ինչպես նաև օգնում են պահպանել կարևոր էկոլոգիական գործընթացները և էկոհամակարգային ծառայությունները. կառավարվող ցամաքային և ծովային լանդշաֆտները չեն կարող դա ապահովել: Այդ տարածքներում տեղի է ունենում բնական զարգացում և վերակագնում: Վերջին տարիների ընթացքում գնալով ավելանում է մարդու համար ՊՏ-ներից ստացվող օգուտների ըմբռնումը: Դրանցից են դեղագործության և գյուղատնտեսության համար անհրաժեշտ գենետիկական ռեսուրսները, ավանդական դեղամիջոցները, ռեկրեացիոն հնարավորությունները և էկոտուրիզմից ստացվող եկամուտները, ապրանքների կայուն աղբյուրները (օրինակ, անտառի ոչ բնափայտային արտադրանքը), ինչպես նաև ապրելավայրերի տրամադրումն ավանդական և մարդկային խոցելի խմբերի համար: Ինչպես հատուկ շեշտվում է Հազարամյակի էկոհամակարգերի գնահատման մեջ (**http://www.millenniumassessment.org**) ամենակարևորը, հավանաբար, այն է, որ ՊՏ-ներն ապահովում են կարևոր էկոհամակարգային ծառայություններ, որոնք նպաստում են մարդկանց բարգավաճմանը և գոյատևմանը, օրինակ, մաքուր և բավարար քանակությամբ ջուր, ջրհեղեղների ու փոթորիկների նվազեցում, ձկների համար բազմացման և վերկանգնման գոտիներ, փոշոտում և ածխածնի կլանում: Բացի այդ, շատերի կարծիքով մարդիկ բարոյապես պարտավոր են կանխելու մարդածին գործոններով պայմանավորված տեսակների կորուստը: Ներկայացուցչական ՊՏ-ները նույնքան կարևոր են ազգային ժառանգության համար, որքան, օրինակ Փարիզյան աստվածամոր տաճարը կամ Թաջ Մահալը:

Արդյո՞ք բոլոր պահպանվող տարածքներն իրար նման են

Տարբեր երկրներում ՊՏ-ներում կիրառվում են կառավարման տարբեր ձևեր: Տարբեր են նաև կառավարման նպատակները և մոտեցումները: Օրինակ, կառավարման նպատակ կարող է հանդիսանալ խստագույն պահպանությունը և առհասարակ մարդու ներկայության բացառումը: Սակայն կարող են լինել նաև ավելի լայն մոտեցումներ, օրինակ մշակութային լանդշաֆտները (կառավարվող անտառներ): Ըստ կառավարման նպատակների ԲՊՄՄ-ն դասակարգում է ՊՏ-ները հետևյալ վեց կատեգորիաների. (Ia) խիստ պահպանության արգելոցային տարածք, (Ib) վայրի բնության տարածք, (II) ազգային պարկ, (III) բնության հուշարձան, (IV) բնական ապրելավայրերի/տեսակների կառավարման տարածք, (V) պահպանվող ցամաքային և ծովային լանդշաֆտներ և (VI) կառավարվող պաշարների պահպանվող տարածք: ՊՏ-ները կարող են կառավարվել կառավարության կողմից կամ կառավարության և այլ կողմերի (օրինակ, ՈԿԿ) հետ համատեղ, կամ նույնիսկ համատեղ՝ բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների, կամ համապատասխան մասնավոր հողատիրոջ կողմից: *Աշխատանքների ծրագիրն* անդրադառնում է ինչպես պետության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից կառավարվող ՊՏ-ներին:

Պահպանվող տարածքների թիվը

Ներկայումս Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազայում (ՊՏՀՏԲ) գրանցված են ավելի քան 100000 ՊՏ-ներ՝ կազմելով երկրի ցամաքային մակերեսի 11.4 %, և ավելի քան 1300 ծովային ՊՏ-ներ՝ կազմելով օվկիանոսների մակերեսի մոտ 0.5 %: ՊՏ-ներ կան գրեթե բոլոր երկրներում: Դրանց ճնշող մեծամասնությունը հիմնադրվել է 20-րդ դարում՝ պատմության մեջ հողի օգտագործման ամենամեծ փոփոխությունների ժամանակաշրջանում:

Պետք են արդյո՞ք նոր պահպանվող տարածքները

Վիճակագրական տվյալները թյուր տպավորություն են ստեղծում երկրագնդի ՊՏ-ների ցանցի հզորության մասին: Շատ ՊՏ-ներ ստեղծվել են դժվար հասանելի վայրերում (հավերժ սառույցով ծածկված լեռնագագաթներ, անապատներ, լեռներ և այլն): Սակայն դրանք կարող են այնքան էլ նպատակահարմար չլինել կենսաբազմազանության պահպանության և բնիկ ժողովուրդների ու տեղական համայնքների համար օգուտների տեսանկյունից: Էկոլոգիական ներկայացվածության առումով նկատվում են մեծ բացեր, օրինակ, պահպանվում է Խաղաղ օվկիանոսի հարավային կղզիների բնական անտառների ընդամենը

0.1%, Կենտրոնական Աֆրիկայի Կամերունի բարձրադիր լեռների խիստ բազմազան անտառների և Գվինեայի ծովածոցի մանգրային բուսականության ընդամենը 1% և աշխարհում գոյություն ունեցող լճային համակարգերի ընդամենը 2%: Ծովային և քաղցրահամ ջրերի էկոհամակարգերը վատ են պահպանվում և հաճախ շատ վտանգված են, ինչը հատուկ ուշադրության է արժանացվել *Աշխատանքների ծրագրում*: Գոյություն ունեն նաև լուրջ բացեր ՊՏ-ներում տեսակների ներկայացվածության առումով, ներառյալ անհետացման եզրին գտնվող տեսակները: Պարկերի համաշխարհային 5-րդ կոնգրեսին ներկայացված վերլուծության համաձայն կաթնասունների, թռչունների, երկկենցաղների և կրիաների 1423 տեսակներ, որոնց 20% համարվում է վտանգված, ներկայացված չեն ՊՏ-ների գլոբալ ցանցում:

Արդյո՞ք գոյություն ունեցող պահպանվող տարածքներն ապահով են

ՊՏ-ների քանակի աճը միշտ չէ որ զուգորդվել է դրանց արդյունավետ կառավարման հետ: Շատ ՊՏ-ներ չունեն իրավաբանական կարգավիճակ և կառավարման հզորություններ: Նույնիսկ պաշտոնապես ստեղծված շատ ՊՏ-ներ վտանգի տակ են: Վտանգները տարբեր են, ներառյալ ներկայումս գոյություն ունեցող (որսագողություն, ապօրինի անտառահատումներ, հանքարդյունաբերություն, բնակեցում և անկառավարելի հրդեհներ) և ավելի երկարաժամկետ խնդիրները (միջավայրի աղտոտում և կլիմայի փոփոխություն): Դրանց հիմքում ընկած են մի շարք պատճառներ, օրինակ, վատ կառավարումը, չքավորությունը, քաղաքականությունները, անբավարար ֆինանսական միջոցները, այլընտրանքային ապրելամիջոցների բացակայությունը և այլն: Մասնավորապես ֆինանսավորման պակասը խոչընդոտում է արդյունավետ կառավարմանը: Որպեսզի ՊՏ-ները հետաքրքիր լինեն և ստանան տեղական ու քաղաքական աջակցություն և անհրաժեշտ միջոցներ իրենց արժեքների երկարաժամկետ պահպանման համար, անհրաժեշտ է հավաքել և ներկայացնել հզոր փաստարկներ դրանց պահպանության օգտին:

Իսկ մարդի՞կ

Անցյալում ՊՏ-ները հաճախ ստեղծվել են՝ զրկելով նախատեսված ՊՏ-ի տարածքում բնակվող մարդկանց տարածքից և ռեսուրսներից: ՊՏ-ներում և դրանց շրջակայքում ապրող բնիկ և տեղական համայնքները սովորաբար տուժում էին: Մինչդեռ ՊՏ-ները կենսունակ են միայն, եթե աջակցություն են ստանում այնտեղ բնակվող կամ դրանցից կախում ունեցող բնիկ և տեղական համայնքներից, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերից (տեղական, ազգային և գլոբալ մակարդակներում): Ավելին, որոշ մարդիկ կախված են ՊՏ-ներից՝ ապրելամիջոցների ապահովման և ավանդական մշակույթի տեսանկյունից: Լավագույն դեպքում, ՊՏ-ները կարևոր միջոց են իրավունքների ճանաչման, չքավորության նվազեցման և մարդ - վայրի բնություն հակամարտության լուծումների որոնման համար: Սրանք երկարատև պահպանության ապահովման կարևոր քայլերն են:

ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԿԲԿ-ի բանակցային փուլը ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (ՄԱՇՄԾ) հովանավորության տակ իրականացվել է 1991թ-ի մարտից մինչև 1992թ-ի մայիս ընկած ժամանակահատվածում, ստորագրության համար բացվել է 1992թ-ի հունիսին Ռիո դե ժանեյրոյում «Երկրի գագաթաժողով»-ում և ուժի մեջ է մտել 1993թ-ի դեկտեմբերի 29-ին: Մինչև այսօր 187 պետություններ և Եվրամիությունը վավերացրել են այն՝ դառնալով ԿԲԿ-ի Կողմեր: Այս կոնվենցիայով Կողմերը պարտավորվում են ձեռնարկել ազգային և միջազգային անհրաժեշտ միջոցներ երեք նպատակներին հասնելու համար, այն է կենսաբանական բազմազանության *պահպանությունը*, դրա բաղադրիչների *կայուն օգտագործումը* և գենետիկական պաշարների օգտագործման արդյունքում ստացված *օգուտների հավասար բաշխումը*:

1992 թ-ից սկսած կառավարությունները ԿԿ-ի որոշումների միջոցով սահմանել են կոնվենցիայի պարտավորությունները և դրա հիմնական դրույթները ներկայացրել են կոնկրետ գործողությունների ձևով: ՊՏ-ների վերաբերյալ VII/28 որոշումը և դրա հավելված հանդիսացող *Աշխատանքների ծրագիրը* հաստատ-

վել են 2004 թ-ի փետրվարին ԿԿ-ի 7-րդ գումարման ժամանակ: Սա առաջին գլոբալ միջկառավարական համաձայնությունն է, որը սահմանել է ՊՏ-ների չափելի նպատակներ և ժամանակացույցեր, մշակել է այդ նպատակներին հասնելու գործողությունները և կոչ է արել ավելացնել ՊՏ-ների միջազգային ֆինանսավորումը: ԿԿ-ն ստեղծել է ՊՏ-ների վերաբերյալ աշխատանքային խումբ, որն աջակցելու և ամփոփելու է *Աշխատանքների ծրագրի* իրականացումը: *Աշխատանքների ծրագիրը* հաշվի է առնում 2003թ-ի սեպտեմբերին Հարավային Աֆրիկայում տեղի ունեցած ԲՊՄՄ Համաշխարհային պարկերի 5-րդ կոնգրեսում ընդունված որոշումները՝ ստանալով բազմաթիվ առնչվող շահագրգիռ կողմերի աջակցությունը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԲԱՂԿԱՑԱԾ Է ՉՈՐՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻՑ

1. Ուղղակի գործողություններ ուղղված ՊՏ-ների համակարգերի և տարածքների պլանավորմանը, ընտրությանը, ստեղծմանը, հզորացմանը և կառավարմանը
2. Կառավարում, մասնակցություն, հավասարություն և օգուտների բաշխում
3. Հնարավորություններ ստեղծող գործողություններ
4. Ստանդարտներ, գնահատում և մոնիտորինգ

Էլեմենտ 1-ը սահմանում է պահպանության ենթակա *ՊՏ-ների համակարգերը* և դրանց գտնվելու *վայրը*: Էլեմենտներ 2 և 3-ը վերաբերվում են ՊՏ-ների համակարգերի *արդյունավետ իրականացմանը*, ներառյալ քաղաքականության շրջանակը, կառավարումը, մասնակցությունը, ֆինանսավորումը և հզորությունները: Էլեմենտ 4-ը վերաբերվում է 1-3 էլեմենտների շրջանակում իրականացված գործողությունների *գնահատման* և *մոնիտորինգի* համար անհրաժեշտ քայլերին: Յուրաքանչյուր ծրագրային էլեմենտ ունի մեկ կամ ավելի **խնդիրներ**, որոնց համապատասխանում են ավելի կոնկրետ **նպատակներ** ցանկալի արդյունքին հասնելու համար՝ կոնկրետ ժամկետներով: Յուրաքանչյուր նպատակի համար սահմանվում են ԿԿ 7-ի կողմից հավանության արժանացած **Կողմերին առաջարկվող գործողություններ:** Գործողությունների բաժինը ճկուն է և երկրները կարող են ընտրել դրանք ըստ իրենց կարիքների և իրականացման հնարավորությունների:

VII/28 որոշումը կոնկրետ հղում է կատարում ԿԲԿ-ի Ծովային և առափնյա կենսաբազմազանության մասին աշխատանքների ծրագրին (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=COP-07&id=7742&lg=0**) և համարում է այն Աշխատանքների ծրագրի կարևոր մաս: Բացի այդ, VII/28 որոշման համաձայն ստեղծվել է ՊՏ-ների վերաբերյալ աշխատանքային խումբ, որը պետք է հանդիպի առնվազն տարին մեկ անգամ իրականացման առաջընթացը քննարկելու համար, ներառյալ ֆինանսական միջոցները, գործիքները և ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ծովային ՊՏ-ները:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

***Աշխատանքների ծրագրի* հիմքում ընկած է պետությունների կողմից ստանձնած պարտավորությունը, որը վերաբերվում է մասնակցային, էկոլոգիապես ներկայացուցչական և արդյունավետ կառավարվող ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի ստեղծմանը՝ անհրաժեշտության դեպքում տարածվելով ազգային սահմաններից դուրս, ինտեգրված հողօգտագործման այլ ձևերի հետ և նպաստելով մարդկանց բարեկեցությանը:** 16 նպատակներից 14-ը սահմանում են վերջնաժամկետներ՝ 2008թ. կամ 2010թ. ցամաքային տարածքների և 2012թ.՝ ծովային տարածքների համար, որոնք հետագայում մինչև 2015թ. պետք է ինտեգրվեն ավելի նեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում: Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ են մի շարք աջակցող գործողություններ, ներառյալ, օրինակ, արդյունավետ քաղաքականության շրջանակի ստեղծումը, ֆինանսական և տեխնիկական միջոցների տրամադրումը, հզորությունների ստեղծումը, մոնիտորինգը և

գնահատումը, ինչպես նաև ՊՏ-ների հավասար և մասնակցային հիմունքներով ստեղծումը և կառավարումը:

Աշխատանքների ծրագրի վերջնական նպատակ

Աշխատանքների ծրագրի վերջնական նպատակն արտացոլված է Կողմերի ստանձնած պարտավորության մեջ, որի շրջանակներում իրականացրած մի շարք գործողությունները կհանգեցնեն.

... լավ կառավարվող, ընդգրկուն և էկոլոգիական առումով ներկայացուցչական ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի ստեղծմանը և պահպանմանը ցամաքային և ծովային տարածքների համար համապատասխանաբար մինչև 2010թ. և 2012 թ., որոնք միասին, գոյություն ունեցող գլոբալ ցանցի միջոցով կնպաստեն Կոնվենցիայի երեք նպատակների իրականացմանը և 2010թ. նպատակին՝ կենսաբազմազանության կորստի ներկայիս չափի զգալի նվազեցմանը:

Աշխատանքների ծրագիր և մարդկանց բարեկեցություն

Աշխատանքների ծրագրում, որտեղ հնարավոր է, պարտավորությունները սահմանված են մարդկանց բարեկեցությունն ապահովելու համար: *Աշխատանքների ծրագիրը* պարտավորեցնում է կառավարություններին նպաստել ՊՏ-ների ծախսերի և օգուտների հավասար բաշխմանը, մասնվորապես բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների համար, ինչպես նաև բարձրացնել ու ապահովել բնիկ ժողովուրդների, տեղական համայնքների և համապատասխան շահագրգիռ կողմերի լիարժեք և արդյունա-վետ մասնակցությունը:

Անդրսահմանային պահպանվող տարածքներ

Քանի որ տեսակներն ու էկոհամակրգերը հաճախ տարածվում են ազգային սահմաններից դուրս, ապա նպատակին հասնելու համար երբեմն կպահանջվեն համատեղ անդրսահմանային գործողություններ, և այդ պատճառով, Կողմերը պարտավորվել են մինչև 2010թ. և 2012թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքների համար.

... ստեղծել և հզորացնել ԱՊՏ-ներ ազգային սահմանների երկարությամբ հարևան ՊՏ-ների միջև, համագործակցության այլ ձևեր և տարածաշրջանային ցանցեր կենսաբանական բազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումը բարելավելու համար՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և բարելավելով միջազգային համագործակցությունը:

Արդյունավետ կառավարում

ՊՏ-ների համակարգերն իրենց նպատակին ծառայելու համար պետք է լավ կառավարվեն: Կողմերը համաձայնվել են, որ մինչև 2012թ. բոլոր գոյություն ունեցող ՊՏ-ները պետք է արդյունավետ կառավարվեն.

... օգտագործելով մասնակցային և գիտականորեն հիմնավորված տարածքային պլանավորման գործընթացները, որոնք ընդգրկում են կենսաբազմազանության հստակ խնդիրներ, նպատակներ, կառավարման ռազմավարություններ և մոնիտորինգի ծրագրեր՝ հաշվի առնելով գոյություն ունեցող մեթոդները և երկարաժամկետ կառավարման պլանը, շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ:

Պահպանվող տարածքների ինտեգրում

Կողմերն ընդունում են, որ նույնիսկ ընդարձակ և համեմատաբար ընդգրկուն ՊՏ-ները միայնակ չեն կարող էապես դանդաղեցնել կենսաբազմազանության կորստի տեմպը: Այդ պատճառով նրանք պարտավորվում են մինչև 2015թ. «ինտեգրել ՊՏ-ներն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և սեկտորներում, որպեսզի պահպանվեն էկոլոգիական կառուցվածքը և ֆունկցիան» այնպես, որ.

. . . բոլոր ՊՏ-ները և ՊՏ-ների համակարգերն ինտեգրված լինեն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և համապատասխան սեկտորներում՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և հաշվի առնելով էկոլոգիական կապերի ապահովումը և, որտեղ նպատակահարմար է, էկոլոգիական ցանցերի հայեցակարգը:

Ֆինանսական միջոցներ

Բացի այդ, Կողմերը հատուկ ուշադրություն են դարձնում ֆինանսական միջոցներին և ֆինանսական կայունությանը՝ պարտավորվելով մինչև 2008թ. ապահովել բավարար ֆինասական միջոցներ ՊՏ-ների ազգային համակարգերի արդյունավետ կառավարման համար: ԿԿ-ը շեշտեց նաև մինչև 2006թ. և 2008թ. մի շարք տարածքներում կարևոր գործողությունների իրականացման համար հրատապ ֆինանսավորման անհրաժեշտությունը: Առավել հրատապ գործողություններն ամփոփվում են սույն ուղեցույցի հակիրճ ծանոթագրական աղյուսակներում, իսկ մանրամասները ներկայացվում են հավելվածում:

ԳԼՈՒԽ 2

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԿՆԱՐԿ

Կառավարությունները չեն կարող իրականացնել *Աշխատանքների ծրագրում* նշված բոլոր 92 գործողություններն առանձին-առանձին: Սա նաև հակասում է *Աշխատանքների ծրագրի* բնույթին, որն ուղղված է ներկայացուցչական ՊՏ-ների ստեղծման համար միասնական մոտեցման խթանմանը, այլ ոչ թե ցուցակի առանձին գործողությունների իրականացմանը: Նախկինում արդեն իրականացված գործողությունները պետք չէ իրականացնել: Որոշ գործողություններ կարելի է միավորել կամ դրանց իրականացման համար հիմնվել այլ երկրներում ստացված արդյունքների վրա: *Աշխատանքների ծրագիրը* գործողությունների շրջանակ է, որը հաճախ անհրաժեշտ է հարմարեցնել կոնկրետ ազգային պայմաններին և ընթացիկ գործընթացներին:

Ազգային իրականացմանն աջակցող գործընկերություններ

Կողմերը պետք է մշակեն իրենց երկրներին և հատուկ կարիքներին հարմարեցված ազգային իրականացման ծրագրեր: Այս գործընթացը սկսելու համար մի շարք Կողմեր արդեն ստեղծել են ազգային իրականացմանն աջակցող գործընկերություններ, որոնք կազմված են հիմնական ազգային կառավարական գործակալություններից, ՈԿԿ-ներից և այլ շահագրգիռ կողմերից (օրինակ, բնիկ ժողովուրդների կազմակերպություններ և այլն): Բազմաթիվ շահագրգիռ կողմերից կազմված այս գործընկերությունները սովորաբար կնքում են պաշտոնական պայմանագրեր, որտեղ հստակ նշվում են հիմնական գործողությունները, ժամանակացույցերը և պարտավորությունները, որպես *Աշխատանքների ծրագրի* ազգային իրականացման պլանի բաղադրիչ մասեր: Օրինակ, Բրազիլիայում ավելի քան 30 կազմակերպություններ և կառավարական գործակալություններ պաշտոնական համագործակցության պայմանագիր են կնքել *Աշխատանքների ծրագրի* իրականացման համար: ՊՏ-ների ազգային լայն ներկայացուցչական ժողովից բացի այստեղ ստեղծվել են գերակա 6 թեմաներով զբաղվող աշխատանքային խմբեր՝ կառավարության նախագահությամբ: Ազգային իրականացման ծրագիրը ներառում է գալիք տասնամյակի ընթացքում իրականացվելիք գործողությունները: Այն պահանջում է սխեմա 1-ում նշված գործողությունները:

Սխեմա 1
Ազգային ծրագրի իրականացման բաղադրիչներ

Կառավարությունը նախաձեռնում է իրականացման պլանավորման ընդգրկուն գործընթաց

↓

Ստեղծել իրականացմանն աջակցող գործընկերություններ (հավանաբար նաև թեմատիկ կոմիտեներ)

↓

Մշակել աշխատանքային պլան

↓

Համաձայնության գալ բյուջեի և ֆինանսական կարիքների վերաբերյալ

↓

Մշակել այլընտրանքային ռազմավարություններ ՊՏ-ների համակարգի ստեղծման վերաբերյալ
և ընտրել լավագույն ռազմավարությունը՝ քննարկելով շահագրգիռ կողմերի հետ

↓

Մշակել «գլխավոր պլան» ՊՏ-ների համար
(հիմնվելով ուսումնասիրությունների, գնահատումների և այլի վրա)

↓

Իրականացնել «գլխավոր պլանի» հիմնական գործողությունները

Կապը գոյություն ունեցող գործընթացների հետ

Բազմաթիվ երկրներում *Աշխատանքների ծրագրի* ազգային իրականացումն անմիջականորեն կապված է ընթացիկ կամ նոր սկսվող գործընթացների հետ, օրինակ, Կենսաբազմազանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) և երկկողմանի դոնորային ծրագրերի մշակման, ինչպես նաև ՊՏ-ներով զբաղվող գործակալությունների ռազմավարական պլանավորման հետ:

Տեղեկությունների հավաք և գնահատումներ

Աշխատանքների ծրագրի իրականացման առաջին փուլում անհրաժեշտ է հավաքել տարբեր տեղեկություններ և իրականացնել մի շարք գնահատումներ: Ամփոփ ցուցակը ներկայացվում է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.	ԿԲԿ-ի Պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքների ծրագրում սահմանված տեղեկությունների կարիքները

- էկոլոգիական առումով ներկայացուցչական ՊՏ-ների համակարգի ստեղծման համար անհրաժեշտ բացերի վերլուծություն
- Կառավարման պլանների վիճակ
- ՊՏ-ների հիմնական վտանգներ
- Վերականգնման տարբերակներ
- Տնտեսական և սոցիալ-մշակութային ազդեցությունները բնիկ և տեղական համայնքների վրա
- Կառավարմանը և կառավարման նոր մոդելներին առնչվող քաղաքականություններ
- Ազգային քաղաքականության և օրենսդրության շրջանակներ
- ՊՏ-ների թաքնված և չթաքնված տնտեսական և սոցիալական օգուտներ
- Հզորությունների ստեղծման կարիքներ
- Գոյություն ունեցող գիտելիքների և փորձի ամփոփում
- Կարիքների և բացերի ֆինանսական վերլուծություն ազգային մակարդակում
- ՊՏ-ների պլանավորման և կառավարման համար կոնկրետ գործիքների կարիքներ
- Գիտական և տեխնիկական համագործակցության կարիքներ
- ՊՏ-ների ներկայումս կիրառվող ստանդարտներ (օրինակ, պլանավորում, կառավարում և այլն)

Ստորև ներկայացվող հարցաթերթի միջոցով ՊՏ-ների աշխատակազմից և շահագրգիռ կողմերից կարելի է ստանալ պահանջվող տեղեկություններն առկա տեղեկատվական բացերը լրացնելու համար, որոնք կօգնեն Աշխատանքների ծրագրում նշված գնահատումներից շատերի իրականացմանը:

ՊՏ-ների կառավարողների համար հարցաթերթի օրինակ

Որո՞նք են կառավարման հիմնական նպատակները: _____

_____

ՊՏ-ն ունի՞ կառավարման պլան: ☐ Այո, ժամանակակից ☐ Այո, բայց հին ☐ Ոչ

Որո՞նք են ՊՏ-ին սպառնացող հիմնական վտանգները: _____

Կա՞ն արդյոք ՊՏ-ին առնչվող սոցիալական տարածայնություններ: _____

Որո՞նք են ՊՏ-ի կենսաբազմազանության ամենակարևոր արժեքներն և պահպանության նպատակները: _____

Որո՞նք են վերականգնման տարբերակները/կարիքները: _____

Արդյո՞ք բնիկ ժողովուրդներն ապրում են ՊՏ-ներում կամ կախման մեջ են ՊՏ-ի ռեսուրսներից:

_____

Ինչպե՞ս են բնիկ ժողովուրդները ներգրավվում համապատասխան գործընթացներում:

_____

Ինչպե՞ս են տեղական համայնքները ներգրավվում համապատասխան գործընթացներում:

_____

Արդյո՞ք ՊՏ-ն ապահովում է ուղղակի տնտեսական օգուտներ:
Արդյո՞ք այդ օգուտները հասնում են ծախսերի մեծամասնությունը հոգացող անձանց:

- ☐ էկոհամակարգային ծառայություններ՞ (էրոզիա, ջրի որակ և այլն):
- ☐ Զբոսաշրջիկությու՞ն
- ☐ Կայուն պաշարնե՞ր

Արդյո՞ք ՊՏ-ն հանդիսանում է անդրսահմանային ՊՏ-ի մաս: ☐ Այո ☐ Ոչ

Առկա՞ է մոնիտորինգի համակարգ: ☐ Ոչ ☐ Այո, բայց սահմանափակ ☐ Լիարժեք

Որո՞նք են արդյունավետ կառավարման ապահովման հզորությունների հիմնական կարիքները:

_____

Որո՞նք են ընթացիկ և ծրագրավորված տարեկան ֆինանսավորման կարիքները և ինչքանո՞վ են դրանք համապատասխանում առկա ֆինանսական միջոցներին: _____

Որո՞նք են արդյունավետ կառավարման ապահովման հիմնական գործիքները: _____

Որո՞նք են արդյունավետ կառավարման ապահովման հիմնական անհրաժեշտ ուսումնասիրությունները: _____

_____

Այլ երկրների փորձի օգտագործում

Ենթադրվում է, որ մի շարք երկրներ շուտով սկսելու են ներկայացնել իրականացման վերաբերյալ իրենց հաշվետվությունները, որոնք հասանելի են լինելու լայն հանրության համար, օրինակ ՊՏ-ների ուսումնական ցանցի (PALNet) ինտերնետային կայքում (**http://palnet.whirl-i-gig.com/new/**) և ԿԲԿ-ի միջնորդության մեխանիզմի միջոցով (**http://www.biodiv.org/chm/ efault.aspx**): Այլ երկրների փորձի հիման վրա որոշ Կողմեր կկարողանան ավելի արդյունավետ իրականացնել իրենց ազգային ծրագրերը:

Սակայն, չափազանց մեծ նպատակներ հետապնդող *Աշխատանքների ծրագիրը* չի կարող հաջող իրականացվել առանց բավարար թվով մասնակիցների ներգրավման, իրականացվելիք գործողությունների համաձայնեցման և համագործակցային գործընկերությունների ստեղծման: Կարևոր է երկրի համար ՊՏ-ներից ստացվող օգուտների ըմբռնումը լայն հասարակության կողմից, ինչպես նաև ՊՏ-ների և ընդգրկուն ու արդյունավետ կառավարվող ՊՏ-ների ցանցերի ստեղծման վերաբերյալ ճիշտ տրամադրվածության և վերաբերմունքի ձևավորումը (կարևոր են այս վերջնարդյունքները, ոչ թե դրանց իրականացման մեխանիզմները):

ԳԼՈՒԽ 3

ԹԵՄԱ 1. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

I. ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ

Աշխատանքների ծրագրի առաջնային նպատակն է խրախուսել երկրներում գործող, արդյունավետ և էկոլոգիապես կապակցված ՊՏ-ների համակարգերի ստեղծումը, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տարածվել ազգային սահմաններից դուրս և արդյունավետ ինտեգրվել ջրային և ցամաքային տարածքների կառավարման մեջ՝ ԿԲԿ-ի «էկոգամակարգային մոտեցման» համաձայն:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 1.1	Ստեղծել և հզորացնել գլոբալ ցանցում ինտեգրված ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգեր որպես ներդրում գլոբալ ձևով համաձայնեցված նպատակների համար
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2010 թ. և 2012 թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքների համար ստեղծվել է ընդգրկուն, ներկայացուցչական և արդյունավետ կառավարվող ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգ, որպես ներդրում. 1) Կոնվենցիայի ռազմավարական պլանի և ԿՁՀՎ-ի նպատակին՝ մինչև 2010 թ. կենսաբազմազանության կորստի չափի զգալի նվազեցմանը հասնելու համար, 2) ՀՁՆ-ի, մասնավորապես 7-րդ նպատակի՝ բնապահպանական կայունության ապահովման համար, և 3) Բույսերի պահպանության գլոբալ ռազմավարության համար
ԽՆԴԻՐ 1.2	Ինտեգրել ՊՏ-ներն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և սեկտորներում, որպեսզի պահպանվեն էկոլոգիական կառուցվածքը և ֆունկցիան
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2015թ. բոլոր ՊՏ-ները և ՊՏ-ների համակարգերն ինտեգրել ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և համապատասխան սեկտորներում՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և հաշվի առնելով էկոլոգիական կապերի ապահովումը և, որտեղ նպատակահարմար է, էկոլոգիական ցանցերի հայեցակարգը
ԽՆԴԻՐ 1.3	Ստեղծել և հզորացնել տարածաշրջանային ցանցեր, անդրսահմանային պահպանվող տարածքներ (ԱՊՏ) և համագործակցություն ազգային սահմանների երկարությամբ հարևան ՊՏ-ների միջև
ՆՊԱՏԱԿ	Ստեղծել և հզորացնել, մինչև 2010/2012թթ., ԱՊՏ-ներ, ազգային սահմանների երկարությամբ հարևան ՊՏ-ների միջև համագործակցության այլ ձևեր և տարածաշրջանային ցանցեր կենսաբանական բազմազանության պահպանությունը և կայուն օգտագործմումը բարելավելու համար՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և բարելավելով միջազգային համագործակցությունը

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

Աշխատանքների ծրագրի ընդհանուր նպատակն է խրախուսելՊՏ-ների համակարգերի զարգացումը, որպեսզի պահպանվեն բոլոր տեսակների կենսունակ պոպուլյացիաները և բոլոր էկոհամակարգերի ներկայացուցչական օրինակները: Հետևաբար 1.1-ը ընդհանուր նպատակ է, իսկ մնացած նպատակներն ապահովում են ՊՏ-ների համակարգի ճիշտ ստեղծումը և արդյունավետ կառավարումը:

Աշխատանքների ծրագիրը շեշտում է, որ ՊՏ-ները պետք է լինեն **«ընդգրկուն, արդյունավետ կառավարվող և էկոլոգիապես ներկայացուցչական»**: Արդյունավետ կառավարման մասին խոսվում է 10-րդ գլխում: «Ընդգրկուն և էկոլոգիական առումով ներկայացուցչական» ենթադրում է, որ ՊՏ-ների ցանցում պետք է ընդգրկվեն բոլոր տեսակների և էկոհամակարգերի օրինակներ, որոնց պոպուլյացիաների չափը և տարածությունները բավարար են կենսունակության և բնական գործընթացների ապահովման համար: էկոլոգիական ներկայացուցչության գաղափարն ենթադրում է, որ ՊՏ-ները ոչ թե կազմված են մի քանի լավ հայտնի տեսակների (այսպես կոչվող խարիզմատիկ մեգաֆաունա) պահպանությանն ուղղված իրարից հեռու գտնվող *տարածքներից*, այլ ողջ կենսաբազմազանության պահպանությունն ապահովող *համակարգ են*:

Գործնականում շատ երկրներ չեն կարողանա առանձնացնել բավարար մեծ տարածքներ ՊՏ-ների սահմաններում բոլոր տեսակները պահպանելու համար: Այստեղ կարևորվում է ՊՏ-ների **ցանցերի** հայեցակարգը: Իրարից մեկուսացած ՊՏ-ները ժամանակի ընթացքում կանգնում են կենսունակության հետ կապված լուրջ խնդիրների առջև: *Աշխատանքների ծրագիրը* հատուկ նշում է ցամաքային և ջրային տարածքների մոզաիկա հանդիսացող ՊՏ-ների կարևորությունը, որոնցում ներկայացված են այնպիսի բնական ապրելավայրեր, որոնք, եթե ոչ ամբողջությամբ, ապա առնվազն բավարար կերպով ապահովում են պայմաններ տեսակների տեղափոխությունների և էկոլոգիական գործընթացների պահպանության համար: *Աշխատանքների ծրագրի* կոնկրետ գործողությունները վերաբերվում են ՊՏ-ների միջև «կապ ստեղծող բնական ապրելավայրերին», օրինակ ՊՏ-ների բուֆերային գոտիների (որտեղ թույլատրվում է ՊՏ-ի ամբողջականությունը չխախտող սահմանափակ գործունեություն), կենսաբանական միջանցքների և միգրացիա կատարող տեսակների համար կանգառի և հանգստի հնարավորություն ապահովող վայրերի միջոցով:

Քանի որ ՊՏ-ի սահմաններն երբեմն չեն համընկնում տվյալ երկրի ազգային սահմանների հետ, *Աշխատանքների ծրագիրը* խրախուսում է ահնրաժեշտության դեպքում ԱՊՏ-ների ստեղծումը: Աշխարհում արդեն կան մոտ 200 ԱՊՏ-ներ, որտեղ կիրառվում են տարբեր մոդելներ՝ տարբեր երկրների ՊՏ-ների տնօրենների միջև պարզ համագործակցությունից մինչև համատեղ միացյալ կառավարում: Քաղաքական խնդիրները և պատերազմները կարող են խանգարել նման տարածքների ստեղծմանը, սակայն նույնիսկ այդ պարագայում ՊՏ-ները կառավարող կազմակերպությունները հաճախ շարունակում են համագործակցել: Որոշ դեպքերում նրանք համագործակցում են նույնիսկ հակամարտության դեպքում, երբ պետությունների միջև պաշտոնական համագործակցություն դեռ չի վավերացվել (օրինակ, Ուգանդան, Ռուանդան և Կոնգոյի ժողովրդավարական հանրապետությունը):

էկոլոգիական տեսանկյունից լավագույն տեղերի ընտրությունն առաջին քայլն է երկրում կամ տարածաշրջանում ՊՏ-ներ ստեղծելու մասին վերջնական առաջարկի վերաբերյալ համաձայնության ձեռք բերման երկարատև գործընթացում: Խորհրդակցությունները տեղական մակարդակում կարևոր են, քանի որ *Աշխատանքների ծրագիրը* հատուկ շեշտում է նախնական հիմնավորված պայմանավորվածությունը տեղական բնակչության հետ, երբ նոր ՊՏ-ների ստեղծումը կապված է նրանց վերաբնակեցման հետ: Այդ բանակցությունները պետք է լինեն թափանցիկ և շոշափեն բոլոր հնարավոր հարցերը: Որոշումները պետք է ընդունվեն ոչ միայն ՊՏ-ների տեղի ընտրության, այլև դրանց կառավարման վերաբերյալ (այս հարցերը մանրամասն քննարկվում են 6-րդ գլխում):

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքների ծրագիրը սահմանում է 16 գործողություններ, որոնք ընդգրկում են լայն շրջանակ.

- Մինչև 2006թ. սահմանել ժամկետային և չափելի (օրինակ, թվային) ազգային/տարածաշրջանային մակարդակի ՊՏ-ների նպատակներ և ցուցանիշներ (գործողություն 1.1.1):
- Մինչև 2006թ. իրականացնել ազգային և տարածաշրջանային բացերի վերլուծություն նոր ՊՏ-ների նախատեսման նպատակով, որոնք անհրաժեշտ են էկոլոգիական առումով ներկայացուցչական ՊՏ-ների համակարգի ստեղծման համար (գործողություն 1.1.5):
- Մինչև 2006թ. ձեռնարկել գործողություններ առավել հրատապ պահպանության կարիք ունեցող տարածքների պահպանության համար, ներառյալ մեծ, չխախտված կամ չվերականգնվող բնական տարածքները, մեծ վտանգի տակ գտնվող տարածքները, վտանգված տեսակների կենտրոնները, ինչպես նաև ծովային և ներքին ջրերի էկոհամակարգերը (գործողություններ 1.1.2 և 1.1.3):
- Մինչև 2009թ. առանձնացնել բացերի վերլուծության միջոցով սահմանված ՊՏ-ները և մինչև 2010 թ. և 2012 թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքներում հիմնել ՊՏ-ներ (գործողություն 1.1.6):
- Մինչև 2006թ. գնահատել կառավարման նոր համակարգերի տարբերակները և ՊՏ-ների ինտեգրումն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և չքավորության նվազեցման ռազմավարություններում, ինչպես նաև մինչև 2008թ. իրականացնել գործնական քայլեր ինտեգրման ավելացման ուղղությամբ, որոնցից են էկոլոգիական միջանցքները, բուֆերային գոտիները և վերականգնումը (գործողություններ 1.1.4 և 1.2.1 - 1.2.5):
- Համագործակցել այլ երկրների հետ ԱՊՏ-ների ստեղծման ուղղությամբ, ներառյալ ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ՊՏ-ներ օվկիանոսներում (գործողություններ 1.3.1 - 1.3.4):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Ազգային խորհրդակցություն

Ազգային մակարդակում պետք է իրականացնել մասնակցային խորհրդակցություններ տվյալ տարածքում բնապահպանական նախաձեռնությունների պլանավորման և վերանայման համար (ներառյալ համայնքային և մասնավոր ՊՏ-ները): Պետք է համաձայնության գալ ժամկետային և չափելի նպատակների, այսինքն ՊՏ-ների չափի և կենսաբազմազանության բաղադրիչների, ինչպես նաև հաջողության ցուցանիշների վերաբերյալ:

Էկոլոգիական բացերի վերլուծություն

Իրականացնել էկոլոգիական բացերի վերլուծություն՝ որոշելու համար պահպանության կարիքները և հնարավոր նոր ՊՏ-ներն՝ իրենց աջակցող շրջանակով (էկոլոգիական միջանցքներ, բուֆերային գոտիներ և այլն): Ընդհանուր նպատակները համաձայնեցնելուց հետո (օրինակ, բոլոր վտանգված տեսակների պահպանության միջոցների առաջնահերթությունների սահմանում, բոլոր կարևոր պահպանվող ապրելավայրերի տիպերի մասնաբաժինները) առաջարկվում է իրականացնել բացերի վերլուծություն որպես միջոց՝ ուղղված էկոլոգիական տեսանկյունից ՊՏ-ների կոնկրետ կարիքների հայտնաբերմանը և լավագույն նոր տարածքների սահմանմանը: Բացերի վերլուծության գոյություն ունեցող բոլոր պարզ և բարդ մեթոդները հիմնված են եռափուլ գործընթացի վրա. 1) կենսաբազմազանության հիմնական

տարածքների որոշում և քարտեզագրում, 2) գոյություն ունեցող ՊՏ-ների քարտեզագրում, և 3) երկու տեղեկատվական փաթեթների համեմատության արդյունքում բացերի հայտնաբերում (տե՛ս սխեմա 2): Բացերի վերլուծությունը կարող է օգտագործվել ՊՏ-ների համակարգի ընդարձակմանն ուղղված ծրագրերի մշակման համար: Բացերի վերլուծությունը պետք է հաշվի առնի նաև տարածաշրջանային պլանավորման արդյունքները (օրինակ, էկոտարածաշրջանային ծրագրերը) կամ կոնկրետ կենսաբանական բաղադրիչների (օրինակ, էնդեմիկ և գլոբալ առումով հազվագյուտ և վտանգված տեսակների) վերլուծությունները:

Եթե տեսակը հազվագյուտ է երկրում իր բնական տարածման սահմանի մոտ գտնվելու կամ որևէ այլ պատմական պատճառով, բայց բավական լայն տարածում ունի այլ երկրներում, ապա դրա պահպանությունն ավելի փոքր առաջնահերթություն է, քան գլոբալ առումով հազվագյուտ կամ էնդեմիկ մի այլ տեսակինը: Բացերի վերլուծությամբ կարելի է որոշել նաև **ԱՊՏ-ները** և տարածաշրջանային համագործակցության այլ ձևերը:

Սխեմա 2
Էկոլոգիական բացերի վերլուծության հիմնական քայլերը

Գոյություն ունեցող ՊՏ-ների և կարևոր կենսաբազմազանության որոշում և քարտեզագրում

↓

Բացերի հայտնաբերման համար տեղեկությունների օգտագործում

↓

Բացերի առաջնահերթության սահմանում

↓

Ռազմավարության համաձայնեցում և իրականացում

Անդրսահմանային նկատառումներ

Քանի որ աշխարհաքաղաքական տարածաշրջաններից դուրս էկոհամակարգերի բնական ցանցերը որոշվում են կենդանիների միգրացիայի ճանապարհների հիման վրա, ապա սկզբում, աշխատելով հարևան երկրների հետ, առաջին հերթին միացյալ աշխատանքային հանդիպումների միջոցով պետք է որոշվեն հնարավոր ԱՊՏ-ները և ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ծովային ՊՏ-ները:

Խորհրդակցություններ շահագրգիռ կողմերի հետ

Պետք է իրականացնել խորհրդակցություններ տեղական մակարդակում գոյություն ունեցող կամ պլանավորված ՊՏ-ների շրջակայքում բնակվող բնիկ և տեղական համայնքների հետ ու համաձայնության գալ առաջարկվող ՊՏ-ների երկուստեք ընդունելի տարբերակի վերաբերյալ: Տեղական շահագրգիռ կողմերի ներգրավումը պետք է հարմարեցվի կոնկրետ պայմաններին, բայց ընդհանուր

առմամբ դա վերաբերվում է բնակչության աջակցության ձեռք բերմանը՝ ՊՏ-ի ստեղծման գաղափարի, դրա կառավարման և ղեկավարման առումով: Առաջին փուլում շատ կարևոր է հավաքել համապատասխան շահագրգիռ կողմերի ներկայացուցչական խումբ և համաձայնության հասնել պահպանության նախնական նպատակների վերաբերյալ: Որոշ երկրներ համարձակորեն սահմանել են ՊՏ-ների շատ մեծ նպատակներ՝ ցուցադրելով իրենց լուրջ վերաբերմունքը կենսաբանական հարստության նկատմամբ: Օրինակ, 2003թ-ին Մադագասկարը պարտավորվել է երեք անգամ ավելացնել ՊՏ-ների ընդգրկման գոտին: Այնուամենայնիվ, տարածքի մակարդակում այդ պարտավորությունների իրականացման մանրամասները պետք է մշակվեն նաև շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների միջոցով:

Կառավարման մոդելների վերանայում

Վերանայել կառավարման տարբեր մոդելները և կառավարման նպատակները՝ հաշվի առնելով տարբեր երկրների, ինչպես նաև տվյալ երկրի փորձը (տե՛ս Գործիքներ բաժինը): Թեև մեծ թվով ՊՏ-ներ կմնան որպես պետական կառավարվող տարածքներ, սակայն կարելի է դիտարկել նաև կառավարման այլ մոդելներ, ներառյալ մասնավոր ՊՏ-ները, համայքնի կողմից պահպանվող տարածքները և այլ համատեղ կառավարման ձևերը: Դիտարկվող կառավարման նպատակները տարբեր են՝ խիստ պահպանությունից մինչև պաշարների մեծ ծավալով, բայց կայուն օգտագործում, որը կարող է ներառել ավանդական կառավարման ձևերը: Կառավարման և ղեկավարման առավել արդյունավետ համակարգերի ընտրությունը կարող է ենթադրել համաձայնեցման կայացում կենսաբազմազանության կարիքների և մարդկանց կենսամիջոցների ապահովման միջև: Թեև խիստ պահպանությունը կարող է լինել լավագույնը կենսաբազմազանության համար, սակայն բնապահպանության և օգտագործողների (հատկապես տեղական համայնքների) կարիքների միջև հավասարակշռության հաստատումը հաճախ հանգեցնում է այլ մոդելների ստեղծմանը: Ոչ այնքան խիստ պահպանվող, բայց արդյունավետ կառավարվող տարածքներն ավելի արդյունավետ են պահպանվում, քան տեսականորեն խիստ պահպանվողները, որոնցում սակայն տեղի են ունենում լայնածավալ ապօրինի օգտագործումներ: Տարբեր մոտեցումների վերաբերյալ փորձն ավելանում է և արդեն կան մի շարք օրինակներ, ուղեցույցեր և մոդելներ (տե՛ս Գործիքներ բաժինը):

Էկոհամակարգային մոտեցում

Էկոհամակարգային մոտեցման միջոցով ՊՏ-ների ինտեգրումը լայնածավալ բնապահպանական մոտեցումներում ավելի երկարաժամկետ, բայց կարևոր փուլ է արդյունավետ ՊՏ-ների համակարգի ստեղծման գործընթացում: Այն կարող է ենթադրել անհրաժեշտ մեխանիզմների մշակում, որոնք ուղղված են ՊՏ-ներն ավելի մեծ լանդշաֆտներում ինտեգրելու բարելավմանը, օրինակ, լայնածավալ ծրագրերի համար պահանջելով տարածաշրջանային պլանավորման գործընթացների և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընթացակարգերի իրականացում:

VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ	
ՄԱԴԱԳԱՍԿԱՐ	Ազգային մակարդակում ՊՏ-ների բացերի լիարժեք վերլուծության օրինակները դեռ քիչ են, բայց դրանց թիվը գնալով աճում է: Որոշ օրինակներ բերվում են ԿԲԿ-ի Քարտուղարության կողմից պատրաստված բացերի վերլուծության ուղեցույցում, *Աշխատանքների ծրագրի* տեխնիկական ուղեցույցերի շարքում: Օրինակ, Մադագասկարը ձեռնարկել է ծրագիր հինգ տարվա ընթացքում ՊՏ-ների տարածքն եռապատկելու ուղղությամբ:
ՆՊԱՏԱԿ	2003թ-ին Դուրբանում կայացած Համաշխարհային պարկերի կոնգրեսում նախագահ Մարկ Ռավալոմանանան հայտարարեց. *«...մենք վճռական ենք հետագա հինգ տարիների ընթացքում 1.7 մլն հա կազմող ՊՏ-ներն ընդլայնել մինչև 6 մլն հա՝ համապատասխանելով ԲՊՄՄ-ի ՊՏ-ների կատեգորիաներին ...ներկա ազգային ցանցի հզորացման և նոր ՊՏ-ների ստեղծման համար նոր մեխանիզմների կիրառման միջոցով»:*

ԲԱՑԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	Ստեղծվեց «Դուրբանի տեսլական» խումբը՝ կազմված կառավարությունից, ՈԿԿ և դոնոր ներկայացուցիչներից: Իրականացվեց բացերի վերլուծություն հնարավոր նոր ՊՏ-ները որոշելու համար:
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ	ԲՊՄՄ առաքելությունը խորհուրդներ տվեց կառավարման նոր մոդելների և տարբեր նպատակների վերաբերյալ:
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Մասնակցային մոտեցմամբ տեղական համայնքների հետ իրականացվում են խորհրդակցություններ՝ նոր ՊՏ-ների տեղի և կառավարման մոտեցումների վերաբերյալ համատեղ համաձայնության գալու նպատակով:

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԲԱՑԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցելով մի շարք գործընկերների հետ՝ **ԿԲԿ**-ի Քարտուղարությունը մշակել է ՊՏ-ների համակարգերում էկոլոգիական բացերի ազգային գնահատումների տեխնիկական ուղեցույց: Այս փաստաթուղթը կարելի է ձեռք բերել Քարտուղարության ինտերնետային կայքում՝ **http://www.biodiv.org**:

Մի շարք կազմակերպություններ մշակել են գլոբալ կենսաբազմազանության պահպանության համար տարածքների որոշման մեթոդներ, ներառյալ Անհետացման կանխման ալյանսի (Alliance for Zero Extinction) անհետացման բարձր ռիսկի տակ գտնվող տարածքները (**http://www.zero extinction.org/**), էնդեմիկ թռչունների տարածքները (**http://www.birdlife.net/action /science/endemic_bird_areas/**), սահմանային անտառները (**http://www.globalforestwatch.org/english/index.htm**), կարևոր թռչնաբանական տարածքները (**http://www.birdlife.net /action/science/sites/**), Եվրոպայում կարևոր բուսաբանական տարածքները (**http:// www.plantlife.org.uk/downloads/ipa/Identifying_IPAs_in_Europe_Site_Selection_Manual.pdf**), կենսաբազմազանության կարևոր տարածքները, որ միավորում է մի քանի համակարգեր (**http://portals. conservation.org/downloads/storedfile/Document/ 0x30e5b57e63ac3243 b13d74733f377762.pdf**), միջազգային կարևորության խոնավ տարածքները (**http://ramsar.org/sitelist.pdf**):

Թեև տարբեր գլոբալ բնապահպանական առաջնահերթությունների սահմանման համակարգերը բավական ընդհանուր են ազգային բացերի վերլուծության համար, սակայն դրանք կարող են ապահովել անհրաժեշտ համատեքստ, օրինակ, կենսաբազմազանության թեժ կետերը (**http://www.biodiversity hotspots.org/xp/Hotspots**), բույսերի բազմազանության կենտրոնները (**http://www.nmnh.si.edu/botany/projects/cpd/**), գլոբալ 200 էկոտարածաշրջանները (**http://www.panda.org/resources/programmes/global200/pages/list.htm**), ՊՏ-ների բացերի գլոբալ վերլուծությունը (**http://portals.conservation.org/downloads/storedfile/Document/0x7f0a45b122b828489b23bb76013344c6.pdf**) և հարուստ կենսաբազմազանություն ունեցող վայրի բնության տարածքները (**http://www.conservation.org/xp/CIWEB /regions/priorityareas/wilderness/**):

ԲՊՄՄ-ը մշակել է ծովային ՊՏ-ների և դրանց տեղի ընտրության մանրամասն ուղեցույց (**http://www.iucn. org/themes/wcpa/pubs/pdfs/mpa_guidelines.pdf**):

ԲՊՄՄ-ն մշակել է նաև ՊՏ-ների պլանավորման ազգային համակարգի վերաբերյալ լավագույն պրակտի-կայի ուղեցույցեր (**http://www.iucn.org/themes/ wcpa/pubs/pdfs/ Nat_Sys_Planning.pdf**):

Նոր Հարավային Ուելսի ազգային պարկերը (New South Wales National Parks) և **CSIRO**-ն մշակել են ինը փուլանոց տեղեկատվական *համակարգային բնապահպանական պլանավորման* մեթոդ, որն արդեն

օգտագործվել է Ավստրալիայում, Հարավային Աֆրիկայում և Չինաստանում արգելոցների պլանավորման համար (**http://www.nature.com/cgi-taf/DynaPage.taf?file=/nature/journal/v405/n6783/full/405243a0_fs.html):**

ԲՊԿ-ը մշակել է մանրամասն համակարգ էկոտարածաշրջանում բնապահպանության նպատակների և տարածքների ընտրության և համաձայնեցման համար: Այն կոչվում է *Ստեղծել հույսի աշխարհագրություն*, որը առկա է անգլերեն, իսպաներեն և պորտուգալերեն լեզուներով (**http://conserveonline.org/2000/11/b/GOH2-v1.pdf)**:

Վայրի բնության պահպանության ընկերությունը (The Wildlife Conservation Society) մշակել է *լանդշաֆտային տեսակների* ռազմավարություն պահպանության առումով կարևոր տարածքները որոշելու համար՝ օգտագործելով այնպիսի տեսակներ, որոնք ունեն էկոլոգիապես բազմազան և մեծ տարածքների կարիք, ինչպես նաև կարևոր ազդեցություն բնական էկոհամակարգերի կառուցվածքի և ֆունկցիաների վրա **(http://wcslivinglandscapes.com/media/file/Sanderson_et_al_20021.pdf):**

ԲՀՀ Կանադան մշակել է կոնկրետ տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության վիճակի գնահատման մեթոդ, որը բացահայտում է ՊՏ-ներում տեսակների կամ էկոհամակարգերի ներկայացվածության բացերը:

ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

ԲՊՄՄ-ն մշակել է *Անդրսահմանային պահպանվող տարածքների* զարգացման և կառավարման ուղեցույց (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/ Transboundary_guide.pdf)**:

Եվրապարկ ֆեդերացիան (Europarc Federation) մշակել է հիմնականում Եվրոպային վերաբերվող նմանատիպ մի ուղեցույց՝ *Եվրոպական պահպանվող տարածքների միջև անդրսահմանային համագործակցության հիմնական ստանդարտներ* (ինտերնետում չկա):

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ

ԲՊՄՄ-ի Շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական քաղաքականության հանձնաժողովը և Շրջակա միջավայրի և զարգացման միջազգային ինստիտուտը *Քաղաքականության հարցեր* ձեռնարկում (N 10, 12 և 13) հավաքագրել են ՊՏ-ների և այլ բնական պաշարների կառավարման տարբեր մոդելների օրինակներ (**http://www.iucn.org/themes/ceesp/Publications/Publications.htm**):

Համատեղ և համայնքի կողմից կառավարվող ՊՏ-ների օրինակները և դրանից քաղած դասերն ամփոփվում են *Բնիկ ու տեղական համայնքները և պահպանվող տարածքները. դեպի հավասարություն և լավ պահպանություն* ձեռնարկում (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/guidelines.htm**):

Կառավարման գնահատում. պահպանող տարածքներում մասնակցային գործընթացների կազմակերպման ձեռնարկում նկարագրվում է ՊՏ-ների գնահատման և կառավարման բարելավման մանրամասն գործընթաց(**http://www.iucn.org/themes/ ceesp/Wkg_grp/CMWG/EVALUATING%20GOVERNANCE%20HANDBOOK.doc**):

Տե՛ս նաև 6-րդ գլխում Գործիքներ բաժինը:

ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ԿԲԿ-ն մշակել է էկոհամակարգային մոտեցման սկզբունքներ, որոնք ներկայացնում են լայնածավալ պահպանության համար անհրաժեշտ շրջանակը (**http://www.biodiv.org/programmes/crosscutting/ecosystem/default.asp**):

ԲՊՄՄ-ի էկոհամակարգերի կառավարման հանձնաժողովը զբաղվում է էկոհամակարգային մոտեցման իրականացմամբ (**http://www.iucn.org/themes/cem/ea/index.htm**):

Քոնսերվեյշն Ինտերնեյշնլը (Conservation International) մշակել է *Պահպանվող միջանցքների պլանավորման և իրականացման ուղեցույց, ինչպես նաև Կայուն լանդշաֆտների ստեղծման* ուղեցույց (**http://portals. conservation.org/downloads/storedfile/ Document /0xc4a7d211 dcceca40972 c8470ed 319705.pdf**):

Կանադայի պարկեր կազմակերպությունը (Parks Canada) մշակել է համակարգերի պլանավորման մեթոդներ (**http://www.pc.gc.ca/docs/v-g/nation/pdf/SysPlan_e.pdf**):

Ռամսարի կոնվենցիան մշակել է ուղեցույց գետերի ավազանների կառավարման մեջ խոնավ տարածքների պահպանությունը և լայն օգտագործումն ինտեգրելու վերաբերյալ (**http://www.ramsar.org/ key_ guide_basin_e.htm**):

ԲՀՀ-ն և **ԲՊՄՄ** -ը մշակել են լանդշաֆտային մոտեցում *Անտառների պահպանության, կառավարման և վերականգնման ինտեգրումը լանդշաֆտների մակարդակում* աշխատությունը (**http://www.panda.org/ downloads/forests /wwfpmrlandscapeapproach.pdf**):

ԳԼՈՒԽ 4

ԹԵՄԱ 2. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

I. ՀԱԿԻՐԵ ԱԿՆԱՐԿ

Բազմաթիվ ՊՏ-ներ գոյություն ունեն միայն անունով, իսկ շատերում առկա են պլանավորման և կառավարման հետ կապված խնդիրներ: Աշխատանքների ծրագրի նպատակն է փոխել այս իրավիճակը՝ նպաստելով պլանավորման ու կառավարման նկատմամբ համակարգված մոտեցմանը, որն ենթադրում է յուրաքանչյուր տարածքում պահպանության նպատակների և վտանգների սահմանում, ընդգրկուն կառավարման պլանների (ԿՊ) և վտանգների նվազեցման ռազմավարությունների մշակում, ինչպես նաև չափելի նպատակների համակարգված մոնիտորինգի իրականացում բնապահպանական գործողությունների արդյունավետության գնահատման և անհրաժեշտության դեպքում հարմարեցման համար:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 1.4	Զգալի բարելավել տարածքների վրա հիմնված ՊՏ-ների պլանավորումը և կառավարումը
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2012 թ. բոլոր ՊՏ-ներում առկա է արդյունավետ կառավարում՝ օգտագործելով մասնակցային և գիտականորեն հիմնավորված տարածքային պլանավորման գործընթացները, որոնք ընդգրկում են կենսաբազմազանության հստակ խնդիրներ, նպատակներ, կառավարման ռազմավարություններ և մոնիտորինգի ծրագրեր՝ հաշվի առնելով գոյություն ունեցող մեթոդները և երկարաժամկետ կառավարման պլանը, շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՊՏ-ների համակարգերի համեմատությամբ առանձին ՊՏ-ների պլանավորումը և կառավարումն ավելի կոնկրետ և մանրամասն գործընթաց է: ՊՏ-ների համակարգերի պլաններում որոշվում են տվյալ երկրում կամ տարածաշրջանում առավել բարձր պահպանության արժեք ունեցող տարածքները: Այդ ցուցակից ընտրվում են ՊՏ-ները և սահմանվում կամ հստակեցվում է դրանց իրավաբանական կարգավիճակը, որից հետո առանձին ՊՏ-ների համար անհրաժեշտ է մշակել ԿՊ-ներ: Շահագրգիռ կողմերի մասնակցության խրախուսումը (տե՛ս գլուխ 6) կարևոր է, քանի որ ՊՏ-ների կառավրումը կարող է զգալի ազդեցություն ունենալ պաշարների հասանելիության և տեղական բնակչության համար կենսամիջոցների ապահովման վրա: Համայնքի կողմից պահպանվող տարածքները և համատեղ կառավարումը կառավարման պլանավորման գործընթացում պահանջում է շահագրգիռ կողմերի ավելի ակտիվ մասնակցություն: Պետք է ապահովել նաև, որ պլանավորումը և կառավարումն արդյունավետ արձագանքեն սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի փոփոխություններին: ՊՏ-ներին սպառնացող բազում վտանգներից (տե՛ս գլուխ 5) պետք է հատուկ առանձնացնել կլիմայի փոփոխությունը՝ կենսաբազմազանության պահպանության վրա հնարավոր շատ խորը ազդեցության պատճառով: Այսպիսով, *Աշխատանքների ծրագիրը* շեշտում է ՊՏ-ների պլանավորման և կառավարման ընթացքում կլիմայի փոփոխության հետ կապված հնարավոր ազդեցությունները՝ հաշվի առնելու անհրաժեշտությունը:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել **առավել մասնակցային գործընթաց՝** ներառելով բնիկներին և տեղական համայնքներին և համապատասխան շահագրգիռ կողմերին պլանավորման գործընթացում, ինչպես նաև ընդգրկել ՊՏ-ների հնարավորությունների հայտնաբերումը կայուն զարգացման համար ներդրում կատարելու առումով (գործողություններ 1.4.1 և 1.4.3):
- Սահմանել **կենսաբազմազանության պահպանության** չափելի **նպատակներ** առանձին ՊՏ-ների համար (օրինակ, կոնկրետ տարածքներ, կարևոր էկոհամակարգեր և բնական ապրելավայրերի տիպեր) (գործողություն 1.4.2):
- Վերլուծել **վտանգները** և դրանց արձագանքելու միջոցները (գործողություն 1.4.3):
- Մինչև 2010թ. մշակել կամ թարմացնել ՊՏ-ների **կառավարման պլանները** (գործողություն 1.4.4):
- Պլաններում և կառավարման մեջ ընդգրկել **կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցառումներ** (գործողություն 1.4.5):
- **Իրականացնել** պլանները (գործողություն 1.4.6):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Կենսաբազմազանության պահպանության նպատակներ

Աշխատանքների ծրագիրը **կենսաբազմազանության պահպանության նպատակների** սահմանումը համարում է կարևոր քայլ դեպի արդյունավետ կառավարում՝ տարածքների արժեքների պահպանության նպատակով: Պահպանության նպատակների սահմանման և համաձայնեցման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել տարածքային աշխատանքնային հանդիպում(ներ) ՊՏ-ների անձնակազմի, ղեկավարների, տեղական շահագրգիռ կողմերի և գիտնականների մասնակցությամբ: Սովորաբար 5-10 նպատակները բավարար են տարածքի հիմնական արժեքները ներկայացնելու համար: Նույն նպատակների օգտագործումը պլանավորման և մոնիտորինգի համար հեշտացնում է կառավարման հաջողություններին և անհաջողություններին հետևելու գործընթացը և հարմարեցված կառավարման սկզբունքով համապատասխան գործողությունների իրականացումը: Պահպանության նպատակները կարող են հիմնվել ԿԲԿ-ի Հավելված 1-ում ներկայացվող կենսաբազմազանության հայտնաբերման և մոնիտորինգի չափանիշների վրա (**http://www.biodiv.org/convention/articles.asp?lg=0&a=cbd-a1**): Դրանք պետք է հաշվի առնեն նաև ԿԿ-ի կողմից VII/30 որոշմամբ ընդունված նպատակների շրջանակը, որը ներառում է առաջընթացին առնչվող համաձայնեցված նպատակները և ցուցանիշները՝ ԿԲԿ-ի 2010թ. կենսաբազմազանության նպատակին հասնելու առումով համապատասխանության ապահովման համար:

Վտանգներ

Այդ նույն տարածքային աշխատանքային հանդիպումները կարող են բացահայտել ընտրված պահպանության նպատակների իրականացմանը սպառնացող վտանգները և մշակել վտանգների նվազեցման ռազմավարություններ, որոնք կարձագանքեն ուղղակի վտանգներին (օրինակ, բնական ապրելավայրերի կորուստ) և դրանց հիմքում ընկած պատճառներին (օրինակ, ապօրինի անտառահատումներ):

Կառավարման պլանների ամփոփում և վերանայում

Պետք է իրականացնել ՊՏ-ների ԿՊ-ների ազգային ամփոփում դրանց ներկա վիճակը գնահատելու համար, ներառյալ, մասնավորապես, ԿՊ-ներ չունեցող կամ հին ԿՊ-ներ ունեցող ՊՏ-ները: Ամփոփման հիման

վրա պետք է մշակել, վերանայել կամ թարմացնել ԿՊ-ները՝ ներգրավելով շահագրգիռ կողմերին և արձագանքելով կլիմայի փոփոխությանը:

Վերը նշված գործողություններից և վտանգների վերլուծությունից (տե՛ս գլուխ 5) ստացված տեղեկություններն ընդգրկող **կառավարման պլանն** ապահովում է երկարաժամկետ գործողություններ, որոնք ուղեցույց են հանդիսանում և հսկում են տարածքի օգտագործումը, անհրաժեշտ կառույցների ստեղծումը, հետազոտության գերակա ուղղությունները և միջամտություններն՝ ի պատասխան ՊՏ-ի վտանգներին և պահպանության նպատակներին: Առավել արդյունավետ լինելու համար ԿՊ-ները պետք է ընդգրկվեն ավելի լայն ռազմավարական պլաններում, որոնք ինտեգրում են պահպանության կարիքներն այլ ավելի լայն քաղաքականություններում: ԿՊ-ը այն հիմնական մեխամիզմն է, որի միջոցով տարածքային պլանավորման արդյունքների հիման վրա իրականացվում են կոնկրետ գործողություններ սովորաբար տարեկան աշխատանքային պլանների և բյուջեների համաձայն, որոնց միջոցով կարելի է գնահատել առաջընթացը: ԿՊ-ները պետք է լինեն բավական ճկուն փոփոխվող պայմաններին հարմարեցվելու համար, սակայն միևնույն ժամանակ պետք է ապահովեն բավարար իրավական և կառավարման երաշխիքներ՝ երկարաժամկետ ներդրումների, անձնակազմի և կառավարմանն առնչվող որոշումների համար: Լավագույն ԿՊ-ները պետք է լինեն հնարավորինս պարզ և հասկանալի՝ ծախսերի նվազեցման և լայն շրջանակների համար ԿՊ-ները հասկանալի դարձնելու նպատակով: Հատկապես կարևոր է, որ ՊՏ-ի անձնակազմն ընդունի այդ պլանը որպես իր սեփականը, որն ապահովվում է տարածքային պլանավորման և պլանի մշակման գործընթացում անձնակազմի ակտիվ ներգրավման միջոցով: Կարևոր է նաև շահագրգիռ կողմերի լայն մասնակցությունը, հատկապես, եթե ՊՏ-ն ազդեցություն ունի նրանց կենսամիջոցների վրա: Էկոհամակարգային մոտեցման համաձայն ԿՊ-ները պետք է ինտեգրվեն ավելի լայն լանդշաֆտային պլանավորման գործընթացներում:

ԿՊ-ում կարևոր են **կառավարման նպատակները**: Յուրաքանչյուր ՊՏ-ի համար անհրաժեշտ է սահմանել մանրամասն և չափելի կառավարման նպատակներ: Որոշ նպատակներ կարող են կապված լինել ավելի վաղ փուլերում սահմանված կենսաբազմազանության պահպանության նպատակների հետ: Օրինակ, կառավարման նպատակ կարող է հանդիսանալ որևէ կոնկրետ տեսակի պահպանությունը, որոնցից է, օրինակ, Եվրոպայի Natura 2000 ծրագրի և Եվրոպայի Թռչունների Դիրեկտիվի հետ կապված տեսակների և բնական ապրելավայրերի բարենպաստ բնապահպանական կարգավիճակի հայեցակարգը: 1994թ-ին ԲՊՄՄ-ն սահմանել է ՊՏ-ների 6 կատեգորիա ըստ դրանց երկարաժամկետ կառավարման նպատակների: ՊՏ-ի սահմանման համաձայն որոշվում է արդյոք տվյալ տարածքը կարող է որակավորվել որպես ՊՏ, թե ոչ: Այնուհետև ՊՏ-ի դասակարգման համար օգտագործվում են կատեգորիաները: ԲՊՄՄ կատեգորիաների միջոցով կարելի է սահմանել գոյություն ունեցող ՊՏ-ները, ինչպես նաև տրամադրել տվյալներ դրանց գրանցման համար և խոհուրդներ՝ կառավարման տարբերակների վերաբերյալ: Այս համակարգը պարտադիր բնույթ չի կրում: Կատեգորիաների օգտագործման վերաբերյալ ուղեցույցը ներկայումս վերանայվում է ԲՊՄՄ-ի կողմից: Ստորև աղյուսակում ներկայացվում են ԲՊՄՄ կատեգորիաները:

ԲՊՄՄ-ի կողմից սահմանված ՊՏ-ների կատեգորիաները	
Կատեգորիա I A	Գիտության կամ վայրի բնության պահպանության նպատակով կառավարվող ՊՏ
Կատեգորիա I B	Վայրի բնության պահպանության նպատակով կառավարվող ՊՏ
Կատեգորիա II	Էկոհամակարգերի պահպանության և ռեկրեացիայի նպատակով կառավարվող ՊՏ
Կատեգորիա III	Կոնկրետ բնական հատկանիշների պահպանության նպատակով կառավարվողՊՏ
Կատեգորիա IV	Կառավարման միջամտությունների միջոցով պահպանության նպատակով կառավարվողՊՏ
Կատեգորիա V	Ցամաքային և ծովային լանդշաֆտների պահպանության կամ ռեկրեացիայի նպատակով կառավարվող ՊՏ
Կատեգորիա VI	Բնական պաշարների կայուն օգտագործման նպատակով կառավարվող ՊՏ

Հարմարեցված կառավարումը գնալով ավելի լայն ճանաչում է ձեռք բերում որպես ՊՏ-ի կառավարման կարևոր տարր: Հարմարեցված կառավարման համար ՊՏ-ի ղեկավարները պետք է իրականացնեն առաջ-ընթացի շարունակական մոնիտորինգ: Որոշ դեպքերում պետք է ձեռնարկել ակտիվ գործողություններ խախտված էկոլոգիական գործընթացների վերականգնման ուղղությամբ: Հարմարեցված կառավարումն անհրաժեշտ է անմիջական և երկարաժամկետ ճնշումներին, ինչպես նաև ՊՏ-ի օգտագործման և կառա-վարման նպատակների փոփոխություններին արձագանքելու համար: Կլիմայի փոփոխությունը ստեղծում է նոր ճնշումներ հարմարեցված կառավարման օգտագործման առումով:

VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ	
	ՊՏ-ների պլանավորման ժամանակ գնալով ավելի հաճախ են սահմանվում պահ-պանության նպատակները: Դրանցից շատերին կարելի է ծանոթանալ Conserve Online-ի կայքում (**http://sites-conserveonline.org/dcs/resources/#8**): Այստեղ ներկայացվում է Տանզանիայի Սերենգետի ազգային պարկի օրինակը:
	Սերենգետի ազգային պարկի որոշ նպատակները (ձախ սյունյակ) և ցուցա-նիշները (աջ սյունյակ)
ՄԻԳՐԱՑԻԱ	միգրացիայի չխախտված ուղիներ, կարևոր տեսակների պոպուլյացիայի չափ և այլն
ՄԱՌԱ ԳԵՏ	ջրհոսքի չափ, աղտոտվածության մակարդակ
ԱՓԱՄԵՐՁ ԱՆՏԱՌ (ներառյալ բարձրադիր անտառները)	անտառային տարածք և անտառածածկ, առանձին տեսակների պոպուլյացիաներ
ԱԿԱՑԻԱՅԻ ԱՆՏԱՌ	ծառատեսակների խտություն, բուսակերների պոպուլյացիաներ
ՍԵՎ ՌՆԳԵՂՋՅՈՒՐ (Diceros bicornis) (վերակագնման նպատակ)	պոպուլյացիա և արտադրողականություն
ՎԱՅՐԻ ԾՈՒՆ (Lycaon pictus) (վերակագնման նպատակ)	պոպուլյացիա և արտադրողականություն

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ և ՎՏԱՆԳՆԵՐ

ԲՊԿ-ը մշակել է տարածքներին վերաբերվող նպատակների, ցուցանիշների, վտանգների և դրանց նվազեցման ռազմավարությունների սահմանման ընդգրկուն մեթոդ (կոչվում է The Five-S Framework for Site Conservation), որը լայնորեն օգտագործվել է ԱՄՆ-ում, Կանադայում և մի շարք զարգացող երկրներում (**http://conserveonline.org/csd;internal&action=buildframes.action**):

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ԲՊՄՄ-ի *Պահպանվող տարածքների կառավարման պլանավորման ուղեցույցը* (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/guidelinemanagement planning.pdf**) ընդհանուր շրջանակ է, որը կարող է հարմարեցվել տարբեր համատեքստերում օգտագործվելու համար: Այն ներառում է պահանջները, 13 գործողություններից բաղկացած գործընթաց և շահագրգիռ կողմերի ներգրավման մանրամասն ուղեցույց:

Տասմանիայի պարկեր և վայրի բնության ծառայություններ (Tasmania Parks and Wildlife Service) կազմակերպության *Պահպանվող տարածքների կառավարման պլանավորման լավագույն պրակտիկա* ձեռնարկը (**http://www.deh.gov.au/parks/best-practice/reports/management-planning/pubs/protected-area-management.pdf**) ամփոփում է Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և Հյուսիսային Ամերիկայի պարկերի կառավարման գործակալությունների կառավարման պլանավորման գործընթացները և պրակտիկաները՝ առանձնացնելով կառավարման պլանավորման «լավ պրակտիկաները»:

Հնդկաստանի վայրի բնության ինստիտուտը (Wildlife Institute of India) մշակել է *Պահպանվող տարածքներում ու կառավարվող անտառներում վայրի բնության կառավարման ձեռնարկ*, որին կարելի է ծանոթանալ **http://www.wii.gov.in/** կայքում:

Eurosite-ը մշակել է մանրամասն ձեռնարկ Եվրոպայի ՊՏ-ների ԿՊ-ների մշակման համար (անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն) (**http://www.eurosite-nature.org/IMG/pdf/toolkitmp_en.pdf**):

Ռամսարի բյուրոն տրամադրում է կարևոր ջրաճահճային տարածքների կառավարման վերաբերյալ բազմաթիվ ուղեցույցեր, ներառյալ *Ձեռնարկ 8. Ջրաճահճային տարածքների կառավարում* (**http://www.ramsar. org/ lib_handbooks_e08pre.doc**):

ԲՊՄՄ-ի *Լեռնային պահպանվող տարածքների պլանավորման և կառավարման ուցեղուցը* (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/mountainPAguide-screen.pdf**) կոնկրետ չի շոշափում ԿՊ-ները, սակայն ներկայացնում է լեռնային ՊՏ-ների կառավարման պլանների մշակման համար օգտակար ուղեցույցեր:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԲՀՀ-ը մշակել է կլիմայի փոփոխությանը դիմադրելու և հարմարվելու մասին ընդգրկուն ուղեցույց խոտածածկ տարածքների, անտառների, ալպիական/լեռնային համակարգերի, ծովային և քաղցրահամ ջրերի համակարգերի վերաբերյալ (**http://worldwildlife.org/forests/pubs/buyingtime_unfe.pdf**): Այն շեշտում է երեք սկզբունքներ. ա) բավարար և համապատասխան տարածքի պահպանություն, բ) կլիմայի հետ կապ չունեցող բոլոր այլ ճնշումների նվազեցում, և գ) ակտիվ և հարմարեցված կառավարման և ռազմավարության փորձարկում:

ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄ.
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

ՊՏ-ների և դրանց համակարգերի պլանավորումը սկսելիս պլանավորողները պետք է սահմանեն և քարտեզագրեն կլիմայի փոփոխության տարբեր սցենարների պայմանում ժամանակի ընթացքում բնական ապրելավայրերի և տեսակների տարածման հնարավոր փոփոխությունները: Այնուհետև այդ սցենարները պետք է արտացոլվեն կենսաբազմազանության պահպանության նպատակների ընտրության մեջ: Օրինակ, տեսակների հետ կապված նպատակները կարող են հարմարեցվել պոպուլյացիոն և տարածման գոտու փոփոխություններին, որոնք կանխատեսվել էին կլիմայի փոփոխության արդյունքում: Ներկայացվածության և հարատևության գլխավոր սկզբունքները չեն փոխվում, այլ ձեռք են բերում ավելի մեծ կարևորություն: Եթե հաշվի առնվեն կլիմայի փոփոխության ազդեցությունները, ապա ներկայացվածության ապահովման համար կարող է պահանջվել ավելի մեծ թվաքանակ, իսկ եթե հաշվի առնվեն տարածման գոտիների ակնկալվող փոփոխությունները և միգրացիայի կարիքները, ապա հարատևման պահանջները նույնպես կփոխվեն: Կլիմայի փոփոխության նկատմամբ ճկունությունը և դրան հարմարվելու կարողությունը պետք է ընդունվեն որպես հստակ նպատակներ:

Կլիմայի փոփոխությունը ևս մեկ կարևոր գործոն է գոյություն ունեցող ՊՏ-ների վերանայման գործընթացում, քանի որ կոնկրետ տարածքում պահպանվող կենսաբազմազանության բաղա-դրիչներն ապագայում կարող են տեղափոխվել դրա սահմաններից դուրս: Այսպիսով, վեր-լուծությունը պետք է անդրադառնա ոչ միայն ՊՏ-ներում առկա կենսաբազմազանության բաղա-դրիչներին, այլև այն բաղադրիչներին, որոնք ապագայում կարող են հայտնվել դրանց սահմաններից դուրս, ինչպես նաև ապագայում ՊՏ-ներում հայտնվող նոր բաղադրիչներին:

Նույն հարցերը վերաբերվում են հնարավոր նոր տարածքների ընտրությանը, որի ժամանակ պետք է հաշվի առնել տեսակների տարածման փոփոխությունների, տեղումների և հրդեհների հաճախա-կանության և այլ փոփոխությունների հնարավորությունը:

Կլիմայի փոփոխության գործոններն ազդում են նաև իրականացվելիք գործողությունների առաջնահերթությունների սահմանման վրա: Օրինակ, բնական ապրելավայրերում տեսակների տարածման հնարավոր փոփոխությունները կարող են փոխել գերակայությունները՝ որոշելով, որ նոր ՊՏ-ների ստեղծման փոխարեն պետք է ընդարձակել գոյություն ունեցող տարածքները: Կլիմայի փոփոխությունն ապագայում կարող է խախտել գոյություն ունեցող տարածքների ամբողջա-կանությունը և նվազեցնել օգտակարությունը՝ սահմանելով նոր ՊՏ-ների ստեղծման առաջնա-հերթություն: Գրեթե բոլոր դեպքերում ՊՏ-ների միջև կապերի ստեղծման կարևորությունը հավանաբար գնալով մեծանալու է՝ տեսակների և բնական ապրելավայրերի տեղաշարժի ապահովման համար:

ԳԼՈՒԽ 5

ԹԵՄԱ 3. ԱՐԶԱԳԱՆՔՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻՆ

I. ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ

ՊՏ-ներում կենսաբազմազանության պահպանության համար ենթադրվում է, որ ՊՏ-ներն երկար ժամանակ չպետք է խախտվեն: Ցավոք, բազմաթիվ ՊՏ-ներ խոցելի են մի շարք վտանգների առումով, որոնք կարող են առաջանալ կամ ՊՏ-ներում կամ դրանց սահմաններից դուրս (օրինակ, գյուղատնտեսական թունաքիմիկատների ներհոսք կամ կլիմայի փոփոխություն): Այդ պատճառով Աշխատանքների ծրագիրն անդրադառնում է ՊՏ-ներին սպառնացող վտանգների անձագանքմանը:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԽՆԴԻՐ 1.5	Կանխարգելել և նվազեցնել ՊՏ-ների հիմնական վտանգների բացասական ազդեցությունները
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. առկա են ՊՏ-ների հիմնական վտանգների բացասական ազդեցությունների հայտնաբերման և կանխարգելման և/կամ նվազեցման արդյունավետ մեխանիզմներ

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՊՏ-ներին սպառնացող վտանգները բաժանվում են *ուղղակի վտանգների*, ուղղակի վտանգների հիմք հանդիսացող *անուղղակի վտանգների* և *վտանգի առաջացման հիմքում ընկած պատճառների*, որոնք հաճախ տարածքի հետ կապ չունեցող սոցիալ-տնտեսական հանգամանքներ են: Օրինակ, փոքրածավալ գյուղատնտեսությամբ զբաղվողների կողմից ՊՏ ներխուժումն ուղղակի վտանգ է: Սակայն այն կարող է պայմանավորվել անուղղակի վտանգով՝ ՊՏ-ի մոտակայքում հողերի արագ մասնավորեցմամբ և գյուղատնտեսական հողերի ավելացմամբ, որը բերում է հողից զուրկ մնացած բնակչության կողմից անտառների համատարած հատմանը գյուղատնտեսության համար օգտագործելու նպատակով: Իր հերթին, վտանգի առաջացման հիմքում ընկած պատճառ կարող են հանդիսանալ սուբսիդիաները կամ կառավարության քաղաքականության փոփոխությունները, որոնք ուղղված են գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ավելացմանը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով քիչ թվով մեծածավալ գյուղատնտեսություն վարողների համար և հողերը կենտրոնացնելով նրանց մոտ:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվող գործողությունները վերաբերվում են վտանգների **հայտնաբերմանը**, դրանց **արձագանքմանը** և անհրաժեշտության դեպքում **վերականգնման** գործողություններին:

ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

- **Հայտնաբերել** ՊՏ-ների **վտանգները** և մշակել ու իրականացնել այդ վտանգների կանխարգելման և/կամ նվազեցման ռազմավարություններ (գործողություն 1.5.5), ներառյալ հետևյալը.
- Իրականացնել ՊՏ-ների վրա հնարավոր ազդեցություն ունեցող պլանների կամ ծրագրերի **ՇՄԱԳ** և ՇՄԱԳ-ին առնչվող օրենսդրությունում և/կամ գործընթացներում ընդգրկել կենսաբազմազանության նկատառումները (գործողություն 1.5.1):

- **Վերլուծել վտանգները** տարածքների մակարդակում և դրանց արձագանքման ուղիները (գործողություն 1.4.3):

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ՎՏԱՆԳՆԵՐԻՆ

- Մշակել քաղաքականություններ, բարելավել կառավարումը և ապահովել հրատապ միջոցառումներ, որոնք կարող են կանգնեցնել ՊՏ-ներում **պաշարների ապօրինի օգտագործումը**, ինչպես նաև ուժեղացնել միջազգային համագործակցությունն այդ պաշարների ապօրինի վաճառքը վերացնելու համար (գործողություն 1.5.6):

- Հսկել **ինվազիվ օտար տեսակների** հետ կապված ռիսկը (գործողություն 1.5.4):

- Մշակել ազգային մոտեցումներ **պատասխանատվության և փոխհատուցման միջոցառումների** վերաբերյալ՝ կապված ՊՏ-ներին հասցված վնասների հետ (գործողություն 1.5.2):

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

- Մշակել մոտեցումներ ՊՏ-ների **վերականգման** վերաբերյալ (գործողություն 1.5.3):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Վտանգների գնահատում, կանխարգելում և մեղմացում

Պետք է իրականացնել համակարգի մակարդակում վտանգների գնահատում և սահմանել դրանց կանխարգելման և մեղմացման գործողությունների առաջնահերթություններ: Սա կարևոր միջոցառում է պլանավորման վաղ փուլում, որպեսզի մշակվեն մոնիտորինգի ծրագրեր՝ կառավարման միջոցով վտանգներին համապատասխանաբար արձագանքելու համար: Գոյություն ունեն առանձին ՊՏ-ների և ՊՏ-ների ցանցերի վտանգների վերլուծության մի շարք մեթոդներ (տե՛ս Գործիքներ բաժինը): Կարևոր է տարբերել վտանգները, որոնք կարող են նվազեցվել հենց կառավարողների կողմից և այն վտանգները, որոնց անհրաժեշտ է արձագանքել տարածաշրջանային, ազգային կամ միջազգային մակարդակներում: Ամենաարդյունավետ գնահատումները սահմանում են առաջնահերթություններն ըստ վտանգների կարևորության և հրատապության: Շատ վտանգներից կարելի է խուսափել, եթե ՊՏ-ի մերձակայքում իրականացվելիք զարգացման ծրագրերի համար իրականացվի **ՇՄԱԳ**: *Աշխատանքների ծրագիրը* շեշտում է նաև ՇՄԱԳ-ին առնչվող օրենսդրությունում կենսաբազմազանության նկատառումների ընդգրկման անհրաժեշտությունը, որն ամրագրված է նաև Կոնվենցիայի 14-րդ հոդվածում (**http://www.biodiv.org/convention/articles.asp?lg=0&a=cbd-14**): Վտանգների գնահատումից հետո անհրաժեշտ է իրականացնել վտանգների կանխարգելման և նվազեցման մեխանիզմների ստեղծման համակարգված գործընթաց, որը կարող է ներառել նոր օրենքներ, տնտեսական խթաններ, օրենքի կիրարկման ընթացակարգեր, այլընտրանքային կենսամիջոցների ապահովման ծրագրեր և այլն:

Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

Պետք է ապահովել, որպեսզի ՊՏ-ների վրա հնարավոր ազդեցություն ունեցող զարգացման մեծ ծրագրերի համար իրականացվի ՇՄԱԳ: Սովորաբար, ծրագիր առաջարկողը պետք է պատասխանատվություն կրի ՇՄԱԳ-ի իրականացման համար: Անհրաժեշտության դեպքում գնահատումը պետք է առաջարկի այլընտրանքային տարբերակներ՝ ՊՏ-ների վրա հնարավոր ազդեցությունը նվազեցնելու համար:

Արձագանքներ ու փոխհատուցում

Պետք է մշակել ՊՏ-ների վրա բացասական ազդեցության և դրա փոխհատուցման միջոցառումների համար պատասխանատվության ազգային մոտեցումներ: Քաղաքականությունները սովորաբար պետք է հարմարեցվեն կոնկրետ իրավիճակներին և պետք է սկսվեն հզորությունների գնահատումից: Հատուկ

նշվում են երկու լուրջ վտանգներ: **Պաշարների ապօրինի օգտագործման** դեպքում (օրինակ, որսագողություն և ապօրինի անտառահատում) հաճախ անհրաժեշտ են գործողություններ ՊՏ-ներում և դրանցից դուրս, օրինակ, ՊՏ-ներում ուժեղացնել օրենքի կիրարկումը՝ միևնույն ժամանակ բարելավելով կառավարումը, մշակելով համապատասխան ազգային քաղաքականությունները, իրականացնելով հանրային կրթություն և համագործակցություն տարածաշրջանային ու գլոբալ մակարդակներում: **Ինվազիվ օտար տեսակները** նույնպես մեծ վտանգ են ներկայացնում, քանի որ որոշ ներմուծված տեսակներ բնական գիշատիչների կամ հիվանդությունների բացակայության պարագայում լավ բազմանում են և դուրս են մղում տեղական տեսակներին, որոնք պաշտպանված չեն օտար տեսակներից: Այս վտանգին է վերաբերվում նաև Կոնվենցիայի 8 (h) հոդվածը (**http://www.biodiv.org/convention/articles. asp?lg=0&a=cbd-08**), որը կոչ է անում Կողմերին կանխարգելել, հսկել և վերացնել օտար տեսակները, որոնք վտանգում են էկոհամակարգերը, բնական ապրելավայրերը կամ տեսակները: Խրախուսվում է, որպեսզի Կողմերը մշակեն մոտեցումներ ՊՏ-ների կրած վնասների համար **պատասխանատվության և փոխհատուցման միջոցառումների** վերաբերյալ, ներառյալ տարբեր մեխանիզմներ, օրինակ, «վճար միջավայրի աղտոտման դիմաց», որպեսզի վնաս հասցնողը վճարի վնասի դիմաց: Այս համատեքստում սույն սկզբունքը վերաբերվում է շրջակա միջավայրի վիճակի վատթարացում առաջացնող ցանկացած գործունեությանը և չի սահմանափակվում միայն միջավայրի աղտոտմամբ:

Վերականգնում

Անհրաժեշտության դեպքում պետք է մշակել ՊՏ-ների **վերականգնման** քաղաքականություններ և ռազմավարություններ: ՊՏ-ների դեգրադացիայի դեպքում անհրաժեշտ են ՊՏ-ների վերականգնման միջոցառումներ: Վերականգնումն իմաստ ունի այն դեպքում, երբ վնասի պատճառներն արդեն վերացվել կամ վերահսկվում են, այլապես այն ապարդյուն կլինի:

VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ	
ԼՈՒՍԱԿԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ	Լուսակայի պայմանագրով ստեղծվել է Աֆրիկյան տարածաշրջանային համագործակցություն, որն ուղղված է երկրների միջև վայրի բնության ապօրինի վաճառքի դեմ պայքարին և դրա վերացմանը **(http://www.lusaka agreement.org):**
ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳԼՈԲԱԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	Ջրային ռեուրսների գլոբալ միջազգային գնահատումն իրականացնում է բնապահպանական խնդիրների, ինչպես նաև բնության և մարդու վրա դրանց հնարավոր ազդեցության ռազմավարական գնահատում ռազմավարական և գլոբալ մակարդակներում **(http://www.giwa.net/publications/articles/aslo/aslo_bulletin.pdf)**:
ԲՀՀ	ԲՀՀ-ն գնահատում է Պակիստանում մանգրովային էկոհամակարգերի վիճակը, ներառյալ դրա դեգրադացիայի սոցիալ-տնտեսական պատճառները և հաշվի առնելով ազգային ու միջազգային գործոնները **(http://wwfpak.org/forest_lossinmangrove.php):**

VI. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Կենսաբազմազանության աջակցության ծրագիրն առաջարկում է վտանգների վերլուծության և նվազեցման մեթոդ. *Արդյո՞ք մեր ծրագիրը լավ է իրականացվում. բնապահպանության համար վտանգների նվազեցման գնահատման ուղեցույց* (**www.fosonline.org/images/Documents/tra.pdf**):

ԲՀՀ-ի *Պահպանվող տարածքների կառավարման արագ գնահատման և առաջնայնությունների սահմանման* (RAPPAM) մեթոդով կարելի է հայտնաբերել ՊՏ-ների ցանցին սպառնացող վտանգները և սահմանել առաջնահերթություններ (**http://www.panda.org/downloads/forests/rappam.pdf**): Դրանով կարելի է գնահատել նաև առանձին ՊՏ-ների վտանգները:

Ռամսարի բյուրոյի *Ջրաճահճային տարածքների ռիսկերի գնահատման շրջանակ* ձեռնարկը (**http://www.ramsar.org/key _guide_risk_e.htm**) օգնում է կանխատեսել և գնահատել ջրաճահճային տարածքների էկոլոգիկան բնութագրերի փոփոխությունները (անգլերեն, իսպաներեն և ֆրանսերեն լեզուներով):

Երջակա միջավայրի և զարգացման միջազգային ինստիտուտը հավաքել է ՇՄԱԳ-ի ուղեցույցեր, որոնք կարելի է պատվիրել ինտերնետային կայքից **http://www.iied.org**:

ՄԱԵՄԾ-ի *ՇՄԱԳ-ի Ուսուցողական ձեռնարկ. խնդիրներ, միտումներ և պրակտիկա* (**http://www.cenn.org/Books/bisset/**) նյութի նպատակն է ավելացնել երկրների հզորությունները երկրին հարմարեցված ՇՄԱԳ-ի ուղեցույցեր մշակելու համար:

ԿԲԿ-ն կարևորել է ժամանակին ՇՄԱԳ-ի իրականացումը ՊՏ-ների վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող պլանների կամ ծրագրերի համար: ԿԲԿ VI/7 որոշման (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=COP-06&id=7181&lg=0**) կենսաբազմազանության նկատառումների ներգրավման մասին ուղեցույցերն անդրադառնում են ՇՄԱԳ-ի իրականացման անհրաժեշտությանը և շրջանակին, ազդեցության վերլուծությանը և գնահատմանը, մեղմացման միջոցառումներին, ՇՄԱԳ-ի հաշվետվություններին և դրանց վերանայմանը, որոշումների կայացմանը, ինչպես նաև հետագա մոնիտորինգին և բնապահպանական աուդիտին:

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ՎՏԱՆԳՆԵՐԻՆ

Բուշմիթի ճգնաժամային իրավիճակների հանձնախումբը (The Bushmeat Crisis Task Force) (**http://www.bushmeat.org/index.htm**) հավաքել է մեծ թվով նյութեր, որոնք հասանելի են ինտերնետում:

Գլոբալ ինվազիվ տեսակների ծրագրի (Global Inasive Species Programme) (**http://www.gisp.org/downloadpubs/globalstrategy.pdf**) գլոբալ ռազմավարությունը վերաբերվում է ինվազիվ տեսակներին, **ԲՊՄՄ**-ի ուղեցույցը վերաբերվում է իրավական և ինստիտուցիոնալ շրջանակներին (կարելի է պատվիրել **http://www.iucn.org/bookstore/** կայքից), առկա է մանրամասն փաթեթ մարդու ազդեցության կանխարգելման և կառավարման վերաբերյալ (**http://www.gisp.org/downloadpubs/Toolkiteng.pdf**) և վերլուծության վերաբերյալ (ամփոփագիրը տե՛ս **http://www.iucn.org/biodiversityday/reshuffling.htm** կայքում, կարելի է պատվիրել **http://www.iucn.org/ bookstore/** կայքում):

ԲՊՄՄ-ի Տեսակների գոյատևման հանձնաժողովի (Species Survival commission) կայքի **Ինվազիվ տեսակների մասնագիտական խմբի** (Invasive Species Specialist Group) բաժնում կան շատ նյութեր, որ նվիրված են կենսաբազմազանության կորստի կանխարգելմանը՝ կառավարություններին աջակցելու և ԿԲԿ-ի 8 (h) հոդվածի իրականացման համար (**http://www.issg.org/index.html#ISSG**):

Ինվազիվ տեսակների գլոբալ տվյալների բազան (The Global Invasive Species Database) (http://www.issg.org/database/welcome/) վերաբերվում է կենսաբազմազանությունը վտանգող ինվազիվ տեսակներին, ներառում է բոլոր տաքսոնոմիական խմբերը և ներկայացնում է ՊՏ-ներում ինվազիայի և դրա վերահսկման օրինակներ:

Համաշխարհային բնապահպանական օրենսդրության ալյանսի (Environmental Law Alliance Worldwide) ինտերնետային կայքում հավաքված են իրավական և գիտական նյութեր շրջակա միջավայրի աղտոտման դիմաց վճարման սկզբունքի մասին (**http://www.elaw.org/resources/topical.asp?topic=Polluter%20Pays%20Principle**):

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Էկոլոգիական վերականգնման միջազգային ընկերությունը (The Society for Ecological Restoration International) հրատարակել է էկոլոգիական վերականգնման ձեռնարկ և էկոլոգիական վերականգնման ծրագրերի մշակման և կառավարման ուղեցույցեր (**http://www.ser.org/content/guidelines_ecological_restoration.asp**), որոնք տրամադրում են օգտակար տեղեկություններ վերականգնման ծրագրերի մասին: Համագործակցելով էկոհամակարգերի կառավարման հանձնաժողովի հետ՝ մշակվել են վերականգնման սկզբունքներ (**http://www.ser.org/content/Globalrationale.asp**):

Ռամսարի կոնվենցիան մշակել է *Ջրաճահճային տարածքների վերականգնման սկզբունքներ և ուղեցույցեր* անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով (**http://www.ramsar.org/key_guide_restoration_e.htm**), ինչպես նաև ունի *ջրաճահճային* տարածքների վերականգնման վերաբերյալ ինտերնետային կայք (**http://ramsar.org/strp_rest _index.htm**):

ԲՊՄՄ-ի Տեսակների գոյատևման հանձնաժողովի *Ռեինտրոդուկցիաների ուղեցույցը* (**http://www.iucn.org/themes/ssc/pubs/policy/reinte.htm**) տրամադրում է քաղաքականության ուղեցույցեր՝ տեսակների ռեինտրոդուկցիայի նախատեսված բնապահպանական նպատակների իրականացումն ապահովելու համար:

ԳԼՈՒԽ 6

ԹԵՄԱ 4. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

I. ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ

Տեղական բնակչության և ՊՏ-ների միջև փոխհարաբերությունը բնապահպանության մարտահրավերներից է, որը կապված է ընդհանուր օգտագործման ապրանքների և անհատի իրավունքների ու կարիքների միջև փոխզիջման ապահովման խնդրի հետ: Շատ հաճախ վեճերը ծագում են ՊՏ-ի պլանավորման սկզբնական փուլում բնակչության կարիքներն անտեսելու արդյունքում: *Աշխատանքների ծրագրի* ծրագրային էլեմենտ 2-ը սահմանում է որոշ ստանդարտներ ապագայում նման վեճերից խուսափելու համար, ինչպես նաև շեշտում է հասարակության (հատկապես բնիկ և տեղական համայնքների) կարևոր դրական դերը բնապահպանության գործում:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 2.1	Նպաստել հավասարությանը և օգուտների բաշխմանը
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. մշակել ՊՏ-ների ստեղծման և կառավարման հետ կապված ծախսերի և օգուտների հավասար բաշխման մեխանիզմներ
ԽՆԴԻՐ 2.2	Նպաստել և ապահովել բնիկների և տեղական համայնքների ու առնչվող շահագրգիռ կողմերի ներգրավումը
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. բնիկների և տեղական համայնքների լիարժեք և արդյունավետ մասնակցություն՝ հարգելով նրանց իրավունքները և ընդունելով նրանց պատասխանատվությունները, ազգային օրենքների և առնչվող միջազգային պարտավորությունների համաձայն, և համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցություն գոյություն ունեցող ՊՏ-ների կառավարման և նորերի ստեղծման ու կառավարման հարցում

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

Աշխատանքների ծրագրի գործողություններն ուղղված են երեք մարտահրավերների արձագանքմանը, որոնք գնալով ճանաչվում են առանցքային ՊՏ-ների արդյունավետ ցանցի զարգացման համար: Առաջինը ՊՏ-ների կառավարման մոդելների և մեխանիզմների ընդլայնումն է, քանի որ ներկայումս գերակշռում են կենտրոնացված, պետության կողմից կառավարվող ՊՏ-ները (շատ դեպքերում սա կընդգրկի ներկա վիճակի գնահատում): Երկրորդը ՊՏ-ների ավելի արդյունավետ և տարբեր ձևերի կառավարման անհրաժեշտությունն է՝ որոշումների կայացման և կառավարման մասնակցային գործընթացների միջոցով, որոնք արձագանքում են ՊՏ-ներում կամ դրանց մերձակայքում ապրող շահագրգիռ կողմերի լայն շրջանակի, հատկապես բնիկ և տեղական համայնքների շահերին: Սա ենթադրում է երկրի քաղաքականության, մոդելների և պրակտիկայի բաց և կառուցողական վերանայում: Երրորդը ՊՏ-ների ծախսերի և օգուտների հավասար բաշխման ապահովումն է:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվող գործողությունները բաժանվում են երեք խմբի. 1) ՊՏ-ների քաղաքականությունում շահագրգիռ կողմերի ներգրավման տարբերակների *ամփոփում* (մինչև սահմանված վերջնաժամկետը), 2) բնիկների և տեղական համայնքների վրա ՊՏ-ների պլանավորման կամ կառավարման ազդեցության դեպքում կիրառվող ընդհանուր *սկզբունքներ,* և 3) բնիկների և ՊՏ-ների միջև կապերի խրախուսմանն ուղղված ավելի ընդարձակ *ծրագրեր*:

ԱՄՓՈՓՈՒՄ

- Իրականացնել մասնակցային ազգային ընդհանուր ամփոփումներ **ՊՏ-ների քաղաքականությունում** շահագրգիռ կողմերի ներգրավման վիճակի, կարիքների և մեխանիզմների վերաբերյալ (գործողություն 2.2.1):

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

- Գնահատել ՊՏ-ների ստեղծման և պահպանման հետ կապված **տնտեսական և սոցիալ-տնտեսական ազդեցությունները**; հարմարեցնել քաղաքականությունները բացասական ազդեցություններից խուսափելու և դրանք նվազեցնելու համար, և անհրաժեշտության դեպքում փոխհատուցել ծախսերը և հավասար բաշխել օգուտները (գործողություն 2.1.1):
- Ընդունել և նպաստել ՊՏ-ների **կառավարման տարբեր ձևերին** (գործողություն 2.1.2):
- Ապահովել համապատասխան **մասնակցություն** ՊՏ-ների պլանավորմանը, ստեղծմանը, կառավարմանը և ղեկավարմանը (գործողություններ 2.2.1, 2.1.5 և 2.2.2):
- Աջակցել շահագիգիռ կողմերին հայտնաբերելու և իրականացնելու **բնապահպանության ոլորտում** իրենց հնարավոր **ներդրումները** (գործողություն 2.2.3):
- Օգտագործել ՊՏ-ներից ստացվող սոցիալական և տնտեսական օգուտները **չքավորության նվազեցման** համար (գործողություն 2.1.4):
- Ապահովել, որպեսզի ՊՏ-ների ստեղծման կամ կառավարման հետևանքով բնիկ համայնքների ցանկացած **վերաբնակեցում** տեղի ունենա միայն նրանց նախնական հիմնավորված համաձայնության հիման վրա (գործողություն 2.2.5):

ԾՐԱԳՐԵՐ

- Խրախուսել ՊՏ-ների ստեղծումը, որոնք օգուտ են տալիս **բնիկներին և տեղական համայնքներին**, ներառյալ նրանց ավանդական գիտելիքների ճանաչման, պահպանության և կիրառման միջոցով՝ հոդված 8(j) և առնչվող դրույթների համաձայն (գործողություն 1.1.7):
- Նպաստել բնիկ և տեղական համայնքների կողմից **ՊՏ-ների ստեղծմանը և կառավարմանը**, այսինքն համայնքի կողմից պահպանվող և մասնավոր ՊՏ-ներին (գործողություններ 2.1.3 և 2.2.4):
- Մշակել կամ ուժեղացնել ՊՏ-ների **գենետիկական պաշարների հասանելիության և օգուտների բաշխման** ազգային քաղաքականությունները (գործողություն 2.1.6):

Ընդհանրացնելով՝ առաջարկվում է, որպեսզի երկրներն իրականացնեն կառավարման տարբերակների մանրամասն ամփոփում, մշակեն առաջարկություններ *Աշխատանքների ծրագրի* սկզբունքների համաձայն և իրականացնեն այդ առաջարկությունները ՊՏ-ներին առնչվող ծրագրերում: Այնուհետև պետք է աշխատել բնիկ և տեղական համայքների հետ նրանց կարիքների համաձայն ՊՏ-ների ստեղծման ուղղությամբ, ներառյալ համայնքների կողմից կառավարվող տարածքները, գոյություն ունեցող այդպիսի տարածքների ճանաչումը և աջակցությունն օգուտների բաշխման ապահովմանը:

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Շահագրգիռ կողմերի ներգրավման տարբերակների ամփոփում

Պետք է ձեռնարկել մասնակցությանը, կառավարմանը, հավասարությանն ու օգուտների բաշխմանը վերաբերվող ՊՏ-ների քաղաքականության և օրենսդրության մասնակցային ամփոփում: Այդ տեղեկություններն օգտագործվում են օրենսդրության վերանայմանն առնչվող ռազմավարությունների մշակման համար՝ հաշվի առնելով կառավարման տարբեր մոտեցումները, փոխհատուցումը, օգուտների բաշխումը, գենետիկական պաշարների հասանելիությունը, ինչպես նաև այն փաստը, որ ՊՏ-ների ստեղծման հետ կապված ցանկացած վերաբնակեցում պետք է տեղի ունենա միայն ընդգրկված համայնքների նախնական հիմնավորված համաձայնության հիման վրա: ԲՊՄՄ-ն ընդունում է ՊՏ-ներում կառավարման տարբեր մոտեցումների անհրաժեշտությունը և դասակարգում է դրանք վեց կատեգորիաների: Բնական պաշարների օգտագործման չափը և բնակեցվածությունը տատանվում է կատեգորիա I-ից (խիստ պահպանվող արգելոցներ, որտեղ մարդու ներկայությունը խիստ վերահսկվում է) մինչև կատեգորիա V (պահպանվող լանդշաֆտներ և ծովային տարածքներ, որտեղ մարդիկ շարունակում են ապրել և օգտագործել բնական պաշարները բնապահպանության հետ համատեղելի կառավարման համակարգերի միջոցով): ՊՏ-ների համակարգում կառավարման մոտեցումների հարմար զուգակցումը պլանավորման գործընթացի շատ կարևոր մասն է: ԲՊՄՄ-ը նաև շեշտում է, որ ՊՏ-ների համակարգում կարող են լինել սեփականության և կառավարման մի շարք տարբերակներ, թեև ՊՏ-ների ազգային օրենսդրությունն երբեմն չի թույլատրում մասնավոր կամ համայնքային սեփականության առկայությունը ՊՏ-ների սահմաններում: Այսօր շատ երկրներում տեղական համայնքներն արդարացիորեն պահանջում են ճանաչել իրենց դերը կառավարման քաղաքականությունների սահմանման գործընթացում: Որպես առաջին քայլ առաջարկվում է իրականացնել **ՊՏ-ների քաղաքականությունում շահագրգիռ կողմերի ներգրավման** վիճակի, կարիքների և մեխանիզմների ազգային ամփոփում: Դրա ընդգրկման չափը կախված կլինի գոյություն ունեցող կառավարման մոտեցումներից: Մասնավորապես, ամփոփումը կարող է հաշվի առնել ՊՏ-ի կառավարման մի շարք նորարարական մոտեցումներ, ներառյալ.

Կառավարության կողմից կառավարվող ՊՏ-ներ. պետական կառավարում ազգային կամ տեղական մակարդակներում, երբեմն կառավարումը պատվիրակվում է ՈԿԿ-ին:

Համատեղ կամ համագործակցային կառավարում. տեղական համայնքները կառավարման գործընթացում ներգրավելու մի շարք տարբերակներ, ներառյալ ակտիվ խորհրդակցությունը, համաձայնության ձեռք բերումը, բանակցությունը և պատասխանատվությունների բաշխումը, ինչպես նաև որոշ դեպքերում կառավարման պատասխանատվության փոխանցումը համայնքներին:

Համայնքի կողմից պահպանվող տարածքներ. բնական կամ ձևափոխված էկոհամակարգեր, որոնց բնորոշ է մեծ կենսաբազմազանություն, էկոլոգիական ծառայություններ և մշակութային արժեքներ և որոնք կամավոր հիմունքներով պահպանվում են բնիկ և տեղական համայնքների կողմից՝ ավանդական օգտագործման օրենքների կամ այլ արդյունավետ միջոցների շնորհիվ: Դրանց մի մասը կարող են լինել պաշտոնական ՊՏ-ներ (ԿԲԿ-ի և ԲՊՄՄ-ի համաձայն), մյուսները կարող են համարվել համատեղելի կառավարման համակարգեր, որոնք հարմար են ՊՏ-ների շուրջ կամ լանդշաֆտի այլ հատվածներում պահպանման գոտիների և միջանցքների համար:

Մասնավոր ՊՏ-ներ. կառավարվում են մասնավոր անձանց, ընկերությունների կամ հիմնադրամների կողմից: Որոշ երկրներում այս տարածքները ճանաչվում են օրենքով և դրանց նկատմամբ կիրառվում են պետական ՊՏ-ներին վերաբերվող նույն սահմանափակումները (օրինակ, Բրազիլիա) կամ մասնավոր տարածքներում գտնվող ՊՏ-ները կառավարվում են պետական գործակալությունների կողմից (օրինակ, Ֆինլանդիայում տարածաշրջանային բնապահպանական կենտրոնները): Որոշ դեպքերում դեռ պարզ չէ ինչպես կարելի է ապահովել դրանց երկարաժամկետ անվտանգությունը կամ ընդգրկումը ՊՏ-ների համակարգում:

ԲՊՄՄ-ը ճանաչում է ՊՏ-ների ցանցում կառավարման տարբեր մոտեցումները:

Աղյուսակ 2 **ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐ**

ՊՏ-ների դասակարգում ըստ ԲՊՄՄ-ի կատեգորիաների և կառավարման ձևերի

Կառավարման ձև	Ա. Կառավարության կողմից կառավարվող ՊՏ-ներ			Բ. Համատեղ կառավարվող ՊՏ-ներ			Գ. Մասնավոր ՊՏ-ներ			Դ. Համայնքի կողմից կառավարվող ՊՏ-ներ	
ԲՊՄՄ-ի կատեգորիա (կառավարման նպատակ)	Պահպանվող տարածքներ/շրջանակներ է սահմանվում	Պահպանվող տարածքի նպատակն է տեղական բնակչությունը	Պահպանվող տարածքի կառավարման ցանցի մասնակիցներ (ԿԿՀՄ, դրամական)	Սերտորեն համագործակցում	Համագործակցություն (բանակցություններ)	Միացյալ կառավարում (խնամակալ բնակիչների կառավարում)	Սահմանվում է կանոնակարգերի և նշանակալի հարստության ցանցի կողմից	Ցանցի կողմից (ՀՄՀ) շահագրգիռ կողմերի կամավորության	Ցանցի կողմից (ներգրավում իմաստալիսկի հարաբերեր)	Ցանցի վերջին...	Ցանցի կողմից...
I. Խիստ պահպանության արգելոցային տարածք											
II. Էկոհամակարգի պահպանություն											
III. Բնության հուշարձան											
IV. Պահպանություն ակտիվ կառավարման միջոցով											
V. Լանդշաֆտի/ ծովային տարածքի պահպանություն և ռեկրեացիա											
VI. Բնական պաշարների կայուն օգտագործում											

Հղում. *Borrini-Feyerabend, G, A Kothari and G Oviedo, Indigenous and Local Communities and Protected Areas: towards Equity and Enhanced Conservation, IUCN, WCPA and CEESP, 2004*

Կառավարման ձևերի ամփոփումը կարող է հիմնվել գոյություն ունեցող տվյալների և մոտեցումների վրա, որոնք պետք է կիրառվեն տվյալ երկրում կոնկրետ իրավիճակում, ինչպես նաև արտացոլեն *Աշխատանքների ծրագրի* տարբեր սկզբունքները (տե՛ս նաև գլուխ 3, Գործիքներ բաժինը): Քանի որ ՊՏ-ների ստեղծումն ազդում է շատ մարդկանց, խմբերի և ինստիտուտների միջոցների և շահերի վրա, ապա կառավարման ցանկացած մոդելի դեպքում կարևոր են **շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցության** մեխանիզմները: Մասնակցային մոտեցումներն օգնում են նվազեցնել տեղական համայնքների ծախսերը: Գնալով ավելանում են այն ՊՏ-ները, որտեղ պահպանությունը համատեղվում է համայնքային օգտագործման հետ, թեև դա ոչ միշտ է իրագործելի: Օրինակ, խոշոր գիշատիչների պահպանությունը որոշ դեպքերում պահանջում է մեծ տարածքներ առանց մարդու ներկայության: Միամիտ կլիներ ենթադրել, որ պահպանության և համայնքի նպատակների համար միշտ հնարավոր է գտնել «հաղթանակ - հաղթանակ» լուծում կարճ ժամկետներում: Այդ պատճառով, անհրաժեշտ է գնահատել ՊՏ-ների ստեղծման և կառավարման հետ կապված **տնտեսական և սոցիալ-տնտեսական ազդեցությունները**, հարմարեցնել քաղաքականությունները բացասական ազդեցություններից խուսափելու և դրանք նվազեցնելու համար, և անհրաժեշտության դեպքում փոխհատուցել ծախսերը: Եթե տեղական բնակչությունը հրաժարվում է ՊՏ-ում պաշարի օգտագործման իր ավանդական իրավունքներից, օրինակ, վառելափայտի հավաքից կամ արածեցումից, ապա ՊՏ-ից դուրս անտառային և արածեցման տարածքի տրամադրումը կարող է

հնարավոր փոխհատուցում հանդիսանալ միայն եթե դրանք համարժեք կամ ավելի լավ պաշարներ են: Եթե ՊՏ-ի ստեղծման կամ կառավարման արդյունքում առաջարկվում է բնիկ կամ տեղական համայնքների ***վերաբնակեցում***, ապա ինչպես նշվում է *Աշխատանքների ծրագրում* դա պետք է իրականացվի միայն **համայնքների նախնական հիմնավորված համաձայնության հիման վրա և համապատասխան փոխհատուցմամբ**:

Համայնքի ծախսերը պետք է փոխհատուցվեն, իսկ ՊՏ-ների օգուտները պետք է բաշխվեն և մասնավորապես ուղղվեն չքավորության նվազեցմանը: ՊՏ-ների օգուտների բաշխումը կարող է օգնել ծախսերի փոխհատուցմանը: Սակայն փոխհատուցման և օգուտների բաշխման մեխանիզմների ստեղծումը հեշտ գործ չէ, իսկ ծախսեր կրող և օգուտներ ստացող համայքների և անհատների որոշումը կարող է դժվար լինել: Բացի այդ, ծախսերի և օգուտների որոշումը միշտ չէ, որ պարզ է, իսկ փոխհատուցման տրամադրման «լավագույն» մեթոդ չկա: Ի վերջո, ՊՏ-ների կողմից տեղական համայնքներին բաժին ընկնող ծախսերից և օգուտներից ոչ բոլորն են տնտեսական: Դժվար է, եթե ոչ անհնար, օրինակ, բնիկների սրբավայրերի շուկայական արժեքի որոշումը, որը որոշ դեպքերում կարող է նույնիսկ անհարիր համարվել:

Զարգացնել ՊՏ-ներ տեղական համայնքների հետ միասին

Թեև բնիկ և տեղական բնակչությունը հաճախ դիտվում են որպես ՊՏ-ների հակառակորդներ, սակայն գնալով ավելի մեծ թվով բնիկ ու տեղական համայնքներ սկսում են դիտել ՊՏ-ները որպես իրենց ավանդական հողերի վերահսկման իրատեսական միջոց և դրանք բնական վիճակին մոտ պահելու լավ հնարավորություն:

Այդ պատճառով *Աշխատանքների ծրագիրը* որպես հիմնական գործողություն առաջարկում է, անհրաժեշտության և ցանկության դեպքում, աշխատել **բնիկ և տեղական համայնքների հետ ՊՏ-ների պլանավորման, ստեղծման և կառավարման** ուղղությամբ (այսինքն համայնքի կողմից կառավարվող և մասնավոր ՊՏ-ներ), որոնք օգուտ են տալիս բնիկ համայնքներին և կենսաբազմազանությանը:

Անհրաժեշտության դեպքում առաջարկվում է, որպեսզի կառավարությունները քննարկեն ՊՏ-ների **հասանելիությանը և օգուտների բաշխմանն** առնչվող օրենսդրության և քաղաքականության հզորացումը: Սա ներառում է աշխատանք համայնքների հետ, որը կարող է.

1) հայտնաբերել գոյություն ունեցող համայնքի կողմից կառավարվող ՊՏ-ները և իրականացնել դրանց պահպանական, տնտեսական և սոցիալ-մշակութային արժեքների և կարիքների գույքագրում;

2) անհրաժեշտության դեպքում ստեղծել համայնքի կողմից կառավարվող նոր կամ համատեղ կառավարվող ՊՏ-ներ, որոնք կկառավարվեն սահմանված կարիքների համաձայն:

Բնիկների և տեղական համայնքների, հավասարության և պահպանվող տարածքների թեմա (ԲՏՀՀՊՏԹ)	ԲՊՄՄ-ի ԲՏՍՔՀ/ՊՏՀՀ **Բնիկների և տեղական համայնքների, հավասարության և պահպանվող տարածքների թեմա** (ԲՏՀՀՊՏԹ/ TILCEPA) նախաձեռնությունը ստեղծվել է 2000թ-ին: ԲՏՀՀՊՏԹ-ի ինտերնետային կայքերը (**http://www.iucn.org /themes/ceesp/Wkg_grp/TILCEPA/TILCEPA.htm** և **http://www.tilcepa.org/**) տրամադրում են օգտակար հղումներ ու օրինակներ:
Բնապահպանական, տնտեսական և սոցիալական քաղաքականության հանձնաժողով (ԲՏՍՔՀ)	**ԲՏՍՔՀ կայքը (http://www.iucn.org/themes/ceesp/)** պարունակում է համատեղ կառավարմանը նվիրված բաժին **(http://www.iucn.org/themes/ceesp /Wkg_grp/CMWG/ CMWG.htm)**, ինչպես նաև ձեռնարկների, հոդվածների, ժողովածուների, օրինակների և գործիքների հարուստ ընտրանի (**http://www.iucn.org/themes/ceesp/Wkg _grp/TILCEPA/community.htm**, **http://www.iucn.org/themes/ ceesp/Publications/ Publications.htm**):

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Բնիկներն, ավանդական ժողովուրդները և պահպանվող տարածքները. սկզբունքներ, ուղեցույցեր և օրինակներ ձեռնարկը մշակվել է **ԲՀՀ**-ի հետ համատեղ, ներկայացնում է սկզբունքներ և բազմաթիվ օրինակներ (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/Indig_people.pdf**):

Իշխանության բաշխում - բնական պաշարների համատեղ կառավարման վերաբերյալ ձեռնարկը (**http://www.iucn.org/themes/ceesp/Publications/sharingpower. htm#download**) մանրամասն նկարագրում է բանակցային գործընթացները, համատեղ կառավարման պայմանագրերի բաղադրիչները և համատեղ կառավարման կառույցների տեսակները:

Բնիկները, տեղական համայնքները և պահպանվող տարածքները. դեպի հավասարություն և արդյունավետ պահպանություն ձեռնարկը մշակվել է 2004թ-ին և ամփոփում է Դուրբանի և ԿԲԿ-ի 7-րդ ԿԿ-ի արձանագրված առաջընթացը, գնահատում է նոր հայեցակարգերը և մոտեցումները, ուսումնասիրում է համատեղ կառավարվող և համայնքի կողմից կառավարվող ՊՏ-ների գործողությունների տարբերակները, ինչպես նաև ներկայացնում է այդ մոտեցումներին և տարբերակներին աջակցող քաղաքականության տարբերակները (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/ guidelines indigenouspeople.pdf**):

Կենսաբազմազանության աջակցության ծրագրի *Լավ կառավարում, բնիկներ և կենսաբազմազանության պահպանություն* ուղեցույցը վերաբերվում է բնիկների տարածքներում իրականացվող կենսաբազմազանության ծրագրերին (**http://www.worldwildlife.org bsp/publications/asia/120/Good_Governance_1.pdf**):

Ռամսարի բյուրոյի, **ԲՊՄՄ**-ի և **Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության Մասնակցային կավառարման միջնորդության մեխանիզմը** (The Participatory Management Clearinghouse) (**http://www.iucn.org/themes/pmns/indexflash.htm**) տրամադրում է տեղեկություններ և փորձ պաշարների մասնակցային կառավարման վերաբերյալ: Այն բաժանված է էկոհամակարգերի, տարածաշրջանների և թեմաների, և վերաբերվում է կենսաբազմազանությանը, ավանդական գիտելիքներին, գենդերային հարցերին, ջրերին, հավասար բաշխմանը, ՊՏ-ներին և բնիկներին:

Կանադայի պարկեր կազմակերպությունը (Canada Parks), **ԲՏՍՔՀ**-ն և **Ռամսարի** բյուրոն մշակել են պահպանվող ջրաճահճային տարածքների մասին ձեռնարկի նախագիծ *Կառավարման գնահատում. պահպանվող տարածքի մասնակցային գործընթացի* ձեռնարկ (**http://www.ramsar.org/outreach_methodologies_evaluating-governance-handbook.doc**), որը վերաբերվում է մասնակցային կառավարման գնահատման պլանավորմանը, անցկացմանը և հետագա քայլերին:

Կառավարման ինստիտուտը (The Institute on Governance), **Կանադայի պարկեր կազմակերպությունը և Կանադայի միջազգային զարգացման գործակալությունը** մշակել են *Լավ կառավարման հինգ սկզբունքները 21-րդ դարում* (**http://www.iog.ca/publications/policy brief15.pdf**) ձեռնարկը, որը կապված է ՄԱԶԾ-ի սկզբունքների հետ:

ԿԲԿ-ն մշակել է *Գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործման արդյունքում ստացված օգուտների արդարացի և հավասար բաշխման Բոննի ուղեցույցերը* (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=cop-06&d=24**), որոնց նպատակն է օժանդակել հասանելիության և օգուտների բաշխման ռազմավարության մշակմանը օրենսդրական, վարչական կամ քաղաքականության միջոցների ստեղծման և/կամ պայմանագրային դրույթների բանակցության ժամանակ:

Ֆինլանդիայի բնության ժառանգության ծառայությունը մշակել է ՊՏ-ների սկզբունքներ, ներառյալ բնիկների և տեղական համայնքների հետ աշխատանքի սկզբունքները (**http://194.89.0.87/julkaisut/pdf/luo/ b54.pdf**):

ԲՊՄՄ-ի **Բնապահպանական օրենսդրության կենտրոնը** մշակել է *Կենսաբազմազանության հասանելիություն և օգուտների բաշխում. Կենսաբանական բազմազանության կոնվենցիայի իրականացման դասերը* ձեռնարկը (**http://www.iucn.org/themes/law/pdfdocuments/EPLP54EN.pdf**), որն ամփոփում է քաղաքականություններ և շատ երկրների օրինակներ:

Գոյություն ունեն մասնակցային գնահատման վերաբերյալ բազմաթիվ գործիքներ, օրինակ, Մարդկանց բարեկեցության հիմնական գնահատման ուղեցույց (**http:// www.cifor.cgiar.org/scripts/newscripts/publications/detail.asp?pid=765**) և Միջազգային անտառային հետազոտությունների կենտրոնի լանդշաֆտների բազմակողմանի գնահատումը (**http://www.cifor.cgiar. org/publications/pdf_files/Books/exploring_bio.pdf**), ՊԳԿ-ի գնահատման և մոնիտորինգի մասնակցային մեթոդները (**http://www.fao.org/forestry/foris/webview/forestry2/index.jsp?siteId=4321& sitetreeId=14110&langId=1&geoId=0**), Կանադայում մասնակցային ուսումնասիրության մեթոդները (**http://www.idrc.ca/**), Շրջակա միջավայրի և զարգացման միջազգային ինստիտուտի կողմից իրականացրած շահագրգիռ կողմերի հզորությունների վերլուծությունը (**http://www.iied.org/forestry/tools/ stakeholder.html**):

ԳԼՈՒԽ 7

ԹԵՄԱ 5. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՋԱՆԱԿ

I. ՀԱԿԻՐԵ ԱԿՆԱՐԿ

Սովորաբար ՊՏ-ների հզոր և արդյունավետ համակարգին նպաստում են համապատասխան քաղաքականությունը, իրավական գործիքները և հաստատությունները: ՊՏ-ների ցանցերի արագ զարգացման դեպքում օրենքները և քաղաքականությունը միշտ չէ, որ համապատասխանում են փոփոխություններին: *Աշխատանքների ծրագիրը* խրախուսում է, որ երկրները հասկանան ՊՏ-ների իրական արժեքը և ապահովեն ավելի նպաստավոր քաղաքականության շրջանակ:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 3.1	ՊՏ-ների համար ապահովել հնարավորություններ ստեղծող քաղաքականության, ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական պայմաններ
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. ամփոփել և վերանայել քաղաքականությունները, ինչքան նպատակահարմար է, ներառյալ սոցիալական և տնտեսական գնահատման և խթանների օգտագործումը՝ ապահովելով նպաստավոր հնարավորություններ ստեղծող պայմաններ ՊՏ-ների և ՊՏ-ների համակարգերի ավելի արդյունավետ ստեղծման և կառավարման համար

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

Շատ երկրներում օրենսդրությունը նպաստավոր է ՊՏ-ների համար: Սակայն ՊՏ-ների ցանցերի ընդլայնման և դրանց վրա ճնշումների աճի պարագայում գոյություն ունեցող քաղաքականությունները կարող են չբավարարել: *Աշխատանքների ծրագիրն* առաջարկում է Կողմերին իրականացնել կարճ ուսումնասիրություն ՊՏ-ների արդյունավետ կառավարմանը խանգարող օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերի և խոչընդոտների հայտնաբերման վերաբերյալ, իսկ այնուհետև վերացնել դրանք համապատասխան կառավարական գործընթացների միջոցով: Բացի այդ, շատ երկրներ չեն հաշվարկել ՊՏ-ների համակարգերի ընդհանուր արժեքները, որոնցից են էկոհամակարգային ծառայությունները, նշանակությունը զբոսաշրջության համար և այլն: Լավ կառավարվող ՊՏ-ների համակարգը կարող է դրական ներդրում ունենալ ազգային տնտեսության համար: ՊՏ-ների ապրանքների և ծառայությունների արժեքավորումը մեծացնում է քաղաքական աջակցությունը դրանց ճանաչման և կառավարման գործում, ինչպես նաև թույլ է տալիս ավելի արդյունավետ ինտեգրել դրանք ավելի լայն տնտեսական պլանավորման մեջ:

Բացի այդ, կառավարության կողմից այլ սեկտորներին (գյուղատնտեսություն, անտառային ոլորտ կամ ենթակառուցվածքի զարգացում) տրամադրվող տնտեսական խթանները խախտում են ՊՏ-ներն անհամատեղելի գործողություններին նպաստելու հետևանքով: Այլ սեկտորների տնտեսական գործունեության միջոցով ՊՏ-ների աջակցությանը (այլ ոչ թե վտանգելուն) ուղղված խթանների ստեղծումը դժվար, բայց անհրաժեշտ փոփոխություն է կենսաբազմազանության պահպանության օրենսդրական դաշտում:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողմերին առաջարկվում է գնահատել ներկա վիճակը և արձագանքել համապատասխան քաղաքականության, օրենսդրական և տնտեսական մեխանիզմների միջոցով:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Իրականացնել ՊՏ-ների **տնտեսական և մշակութային արժեքների** ազգային գնահատումներ և ինտեգրել տնտեսական գնահատումը և բնական պաշարների հաշվառումը պլանավորման գործընթացում (գործողություն 3.1.2):
- Հայտնաբերել **օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը և խոչընդոտները**, որոնք խանգարում են ՊՏ- ների արդյունավետ ստեղծմանը և կառավարմանը (գործողություն 3.1.1):

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- **Արձագանքել քաղաքականության և օրենսդրության բացերին և խոչընդոտներին** (գործողություն 3.1.1), մասնավորապես.
- Ներդաշնակ դարձնել **սեկտորային քաղաքականությունները և օրենսդրությունը**, որպեսզի դրանք նպաստեն ՊՏ-ներին (գործողություններ 3.1.3, 3.2.4):
- Հաշվի առնել **կառավարման սկզբունքները** (օրինակ, օրենքի գերակայություն, ապակենտրոնացում, մասնակցային որոշումների կայացում և վեճերի արդարացի լուծում) (գործողություն 3.1.4):
- Զարգացնել **ինստիտուցիոնալ հզորություններ** կենսաբազմազանության պահպանության համար (գործողություն 3.1.10):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ

- Մշակել **ազգային խթանման մեխանիզմներ**, ներառյալ համապատասխան հաստատությունները և **օրենսդրական շրջանակը**, որոնք աջակցում են ՊՏ-ների ընդգրկուն ցանցի և, որտեղ նպատակահարմար է, մասնավոր ՊՏ-ների ստեղծմանը (գործողություններ 3.1.7 և 3.1.8):
- Հայտնաբերել և վերացնել կամ մեղմացնել **բացասական խթանները:** Հնարավորության դեպքում **փոխարինել դրանք պահպանության առումով դրական խթաններով** (գործողություն 3.1.5):
- Ստեղծել ՊՏ-ներին աջակցող **դրական խթաններ** (գործողություն 3.1.6):
- Հայտնաբերել և խթանել ՊՏ-ների կողմից տրամադրվող ապրանքների և ծառայությունների (ներառյալ էկոհամակարգային ծառայությունները) **տնտեսական հնարավորությունները և շուկաները** (գործողություն 3.1.9):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Քաղաքականության շրջանակի գնահատում

Պետք է իրականացնել ՊՏ-ներին առնչվող ազգային օրենսդրական և քաղաքական շրջանակների գնահատումներ: Լավագույն տարբերակում ԿԲԿ-ի Կողմերը պետք է ունենան համապատասխան ինստիտուցիոնալ և օրենսդրական շրջանակներ, որոնք նպաստում են ընդգրկուն ազգային, տարածաշրջանային և ենթաազգային ՊՏ-ների ցանցերի ստեղծմանը ներառյալ կառավարման տարբեր ձևերը: Խնդիր 3.1-ի պահանջով Կողմերը մինչև 2006թ. պետք է հայտնաբերեն **օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը և խոչընդոտները**, որոնք խանգարում են ՊՏ-ների արդյունավետ ստեղծմանը և կառավարմանը, իսկ մինչև 2009թ.՝ իրականացնեն այդ բացերին և խոչընդոտներին արդյունավետ արձագանքող ռազմավարություններ:

ՊՏ-ների ծախսերի և օգուտների գնահատում

Պետք է իրականացնել ՊՏ-ների «թաքնված և չթաքնված տնտեսական օգուտների» գնահատումներ ազգային մակարդակում: Թեև ՊՏ-ների **տնտեսական և մշակութային արժեքները** շատ են, սակայն դրանք հաճախ լավ չեն հասկացվում և թերագնահատվում են շուկաների, քաղաքական գործիչների և հանրության կողմից: Կենսաբազմազանության թերագնահատումը կարող է հանգեցնել այն մտքին, որ ՊՏ-ների ստեղծումը կապված է մեծ ծախսերի հետ, հատկապես զարգացող երկրների համար: Այդ պատճառով, *Աշխատանքների ծրագիրն* առաջարկում է Կողմերին իրականացնել ՊՏ-ների «թաքնված և չթաքնված տնտեսական օգուտների» գնահատումներ ազգային մակարդակում, որպեսզի դրանք ավելի լավ հասկացվեն և հաշվի առնվեն պլանավորմանը և պաշարների օգտագործմանն առնչվող որոշումներ կայացնելիս՝ միևնույն ժամանակ ընդունելով, որ որոշ արժեքներ դժվար է գնահատել (օրինակ, հոգևոր արժեքները): Բայց նույնիսկ ՊՏ-ների շուկայական տնտեսական արժեքների հավաստի գնահատման դեպքում կարևոր է հարմարեցնել այդ շուկայական արժեքները կոնկրետ տեղական համատեքստին: Ավելին, հավաքական տնտեսական արժեքները կարող են թաքցնել ՊՏ-ների օգուտների և ծախսերի առկա կամ առաջարկվող բաշխման լուրջ անհավասարությունները: Այդ պատճառով կարևոր է գնահատել «այդ օգուտների ստացողներին» (ինչպես շեշտում է 3.1.2 գործողությունը): Օրինակ, եթե ՊՏ-ները տրամադրում են ջրհավաք ավազանների հետ կապված կարևոր ծառայություններ գետի ստորին ջրհոսքի օգտագործողներին, ապա քիչ հավանական է, որ դա նշանակություն կունենա գետի վերին ջրհոսքի օգտագործողների համար, բացի այն դեպքից, երբ ստեղծված է մեխանիզմ, որով միջոցները ստորին ջրհոսքի օգտագործողներից փոխանցվում են վերին ջրհոսքի օգտագործողներին, իսկ վերջիններս դրա դիմաց հրաժարվում են պահպանվող ջրհավաք ավազանի օգտագործման փոփոխության հնարավորություններից:

ՊՏ-ների արժեքի հաշվարկը ինքնաբերաբար չի հանգեցնում շոշափելի տնտեսական օգուտների ստեղծմանը: Դրա համար պետք է հայտնաբերել, զարգացնել և նպաստել ՊՏ-ների ապրանքների և ծառայությունների հետ կապված **տնտեսական հնարավորություններին և շուկաներին**: ՊՏ-ների գործարար ծրագրերի մշակումը գոյություն ունեցող տարբեր շուկայական հնարավորությունների հայտնաբերման լավ միջոց է: Շուկայական հնարավորությունները ներառում են էկոտուրիզմ, վերականգնվող պաշարների կայուն օգտագործում, չվերականգնվող պաշարների արդյունահանում, ՊՏ-ներում կրթական և հետազոտական գործունեությունից եկամուտի ստեղծման հնարավորությունների զարգացում և էկոհամակարգային ծառայությունների համար շուկաների զարգացում: Գործարար ծրագրի հիման վրա կարող են իրականացվել ֆինանսական ռազմավարություններ, որոնք օգտագործում են կենսաբազմազանության հետ կապված ապրանքները և ծառայությունները, ինչպես նաև հայտնաբերում են ՊՏ-ների կողմից առաջարկվող ֆինանսական աղբյուրները և հնարավորությունները, որոնց համար հաճախորդները պատրաստ են վճարել:

Բացասական խթաններ

Պետք է հայտնաբերել և արձագանքել քաղաքականության բացասական խթաններին, որոնք վնասում

են ՊՏ-ներին և, անհրաժեշտության դեպքում, փոխարինել դրանք դրական խթաններով: ԿԲԿ-ն ընդունել է «կենսաբանական բազմազանության դեգրադացիա և կորուստ առաջացնող **բացասական խթաններ** ստեղծող քաղաքականությունների կամ պրակտիկաների վերացման կամ նման բացասական խթանների նվազեցման անհրաժեշտությունը՝ որպես կենսաբազմազանության դեգրադացիայի և կորուստի կանխմանն ուղղված ազգային և գլոբալ ռազմավարությունների կարևոր մաս» (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=COP-07&id=7755&lg=0**): Այս թեման իր շարունակությունն է գտել *Աշխատանքների ծրագրում*: Կառավարական մակարդակում բացասական խթաններին արձագանքելու համար պետք է գործ ունենալ այլ նախարարությունների հետ (օրինակ, գյուղատնտեսության, ֆինանսների և այլ նախարարություններ), որոնց համար այդ խթանները կարող են համարվել դրական: Այդ պատճառով, սկզբում անհրաժեշտ է կենտրոնանալ արդեն վերանայվող քաղաքականությունների վրա, որոնցում հնարավոր է արագ փոփոխություններ կատարել:

Այս խնդիրների վերացման գործընթացը կազմված է երեք փուլերից. 1) բացասական խթանների հայտնաբերում, 2) համապատասխան բարեփոխումների պլանավորում և իրականացում (ներառյալ որոշ բացասական խթանների փոխարինումը ՊՏ-ների ֆինանսավորմանն ուղղված դրականներով), և 3) բարեփոխումների մոնիտորինգ, ավելացում և գնահատում: Որպես մեկնարկ ֆինանսների նախարարութ-յունը կարող է ստեղծել հանձնաժողով, որը կփաստագրի բոլոր հնարավոր բացասական սուբսիդիաները, կընտրի բարեփոխումների առումով ամենախոստումնալիցները և կմշակի նախնական գործողության ծրագրեր:

ԿԲԿ-ի VI/15 որոշումը (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=COP-06&id=7189&lg=0**) շեշտում է «Կոնվենցիայի նպատակների իրականացման համար խթանող միջոցների ստեղծման և իրականացման հատուկ կարևորությունը, հատկապես կապված կենսաբանական բազմազանության կայուն օգտագործման հետ»: Սա նույնպես արտացոլված է *Աշխատանքների ծրագրում*: ՊՏ-ների վտանգների (տե՛ս գլուխ 5) և բացասական խթաններ ստեղծող քաղաքականությունների և պրակտիկաների հայտնաբերումից հետո կարելի է ընտրել **դրական խթաններ** ստեղծող միջոցառումները, որոնք կփոխեն բնակչության կողմից իրականացվող տնտեսական գործունեության ձևերը՝ օգուտ բերելով ՊՏ-ներին: Դրական խթանները կարող են ներառել *ուղղակի մեխանիզմներ*, որոնք հատուցում են գործունեության ձևի փոփոխության համար, *անուղղակի մեխանիզմներ*, որոնք խրախուսում են պահպանությունը և կայուն օգտագործումը՝ ստեղծելով ավելի ընդհանուր հնարավորություններ ստեղծող պայմաններ կամ *արգելակման մեխանիզմներ*, որոնք սահմանում են տուգանքներ ՊՏ-ների դեգրադացիա առաջացնող գործողությունների համար:

ՊՏ-ներին նպաստող օրենսդրական շրջանակի հզորացում

ՊՏ-ների կառավարման արդյունավետության գնահատման բազմաթիվ համակարգերը (տե՛ս գլուխ 10) ընդգրկում են համապատասխան ազգային օրենսդրական և քաղաքականության շրջանակների գնահատումներ՝ բացերի և խոչընդոտների հայտնաբերման համար: *Աշխատանքների ծրագրում* շեշտվում են հետևյալ հնարավոր բացերը.

Օրենսդրական հիմքերի ստեղծում. ազգային մակարդակում ՊՏ-ները կանոնակարգող **օրենսդրական շրջանակները** կարող են տարբեր լինել, սակայն միշտ պետք է կայուն հիմք ապահովեն ՊՏ-ների համակարգի համար:

Քաղաքականության ինտեգրում. թեև շատ երկրներ հզորացրել են իրենց ՊՏ-ների օրենսդրական շրջանակները, բայց դեռ հաճախ տարբեր ոլորտների (օրինակ, անտառային, ձկնաբուծական, հանքարդյունաբերական և այլն) **սեկտորային քաղաքականությունները և օրենքները** հակասում կամ խանգարում են ՊՏ-ների նպատակներին:

Կառավարման տարբեր ձևեր. եթե օրենսդրությունը հիմնվում է այն ենթադրության վրա, որ ՊՏ-ները կենտրոնական կառավարական կառույցների կողմից ղեկավարվող և կառավարվող հանրա-

յին տարածքներ են, ապա այն չի արտացոլում իրականությունը և չի ստեղծում նպաստավոր պայմաններ ՊՏ-ների համար: Օրենսդրական և քաղաքականության շրջանակները պետք է հաշվի առնեն ավելի լայն մասնակցությունը և ՊՏ-ների **կառավարման** տարբեր ձևերը (տե՛ս գլուխ 6):

Ինստիտուցիոնալ հզորություններ. ՊՏ-ների կանոնակարգերի և քաղաքականության օգտակարությունը կախված է բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներից, ինչպես նաև օրենքի կիրարկման հնարավորությունից: Թեև գերադասելի է նվազեցնել կիրարկման անհրաժեշտությունը կրթության, իրազեկության և համագործակցության միջոցով, սակայն սովորաբար պահանջվում են արդյունավետ կիրարկման որոշակի քաղաքականություններ: ՊՏ-ների ինստիտուցիոնալ հզորացումն արդյունավետ ՊՏ-ների համակարգերի զարգացման կարևոր տարրերից է:

VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ	*Պահպանվող տարածքների տնտեսական արժեքներ. Պահպանվող տարածքների ղեկավարների համար պահպանվող տարածքների համաշխարհային հանձնաժողովի ուղեցույցը* (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/Economic_Values.pdf**) ներառում է ՊՏ-ների օրինակներ, որտեղ բնապահպանությունը զգալի ներդրում է ունեցել տնտեսության մեջ՝ ավելացնելով ազգային հարստությունը, ազգային եկամուտները և տնտեսական օգուտները:
ԲՊՄՄ-ի ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ	**http://www.iucn.org/themes/economics/** ինտերնետային կայքը և գրադարանը (**http://www.biodiversity economics.org/**) ներկայացնում են օրինակներ, հրատարակություններ և հղումներ, որոնք վերաբերվում են շրջակա միջավայրի օգուտների և ծախսերի գնահատմանը, բնապահպանության և կենսաբազմազանության առումով բարենպաստ բիզնեսում ներդրումներ կատարելու համար դրական տնտեսական խթանների ստեղծմանը և կենսաբազմազանության կորստին հանգեցնող բացասական խթանների վերացմանը կամ բարեփոխմանը:
ԿԲԿ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ	Բացասական խթանների հայտնաբերմանը և դրանց մեղմացմանն ուղղված գործողությունների օրինակներ ներկայացվում են ԿԲԿ Քարտուղարության ինտերնետային կայքում (**http://www.biodiv.org/programmes/socio-eco/incentives/perverse.asp**):

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ մեթոդներ են կիրառվել ՊՏ-ների օգուտները հաշվարկելու համար: Սովորաբար, ամենահեշտ կիրառվող մեթոդներն ուղղված են շուկայական օգուտների հաշվարկմանը և պահանջում են քիչ տվյալների հավաք: Սակայն դրանք հաճախ թերագնահատում են օգուտները: Ոչ շուկայական արժեքների գնահատում ընդգրկող ավելի բարդ մեթոդներն ավելի շատ ներդրում են պահանջում տվյալների հավաքագրման համար, սովորաբար հիմնվում են մի շարք ենթադրությունների վրա, որոնք կարող են լինել քիչ թե շատ հավաստի և կարող են ենթարկվել առարկությունների ոչ նյութական օգուտների տնտեսական գնահատման առումով: ԿԲԿ-ի *Պահպանվող տարածքների և ցանցերի պլանավորման, ստեղծման և կառավարման ընթացքում կենսաբազմազանության հարցերի դիտարկում* (**http://www.biodiv.org/doc/publications/cbd-ts-15.pdf**) նյութը տարբեր մեթոդների ուղեցույց է:

ԲՊՄՄ-ի ՊՏՀՀ-ը հրատարակել է *Պահպանվող տարածքների տնտեսական արժեքները. ուղեցույց պահպանվող տարածքների կառավարողների համար*, որը բացատրում է ՊՏ-ների տնտեսական արժեքների գնահատումը (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/ pdfs/Economic_Values.pdf**): Համաշխարհային բանկը (ՀԲ), ԲՊՄՄ-ը և ԲՊԿ-ը մշակել են *Ի՞նչ արժե էկոհամակարգը. պահպանության տնտեսական արժեքի գնահատում* փաստաթուղթը (**http://wwwwds.worldbank.org/servlet/WDS_IBank_Servlet?pcont=details&eid=000012009_20041207120119**): ՀԲ-ի *Էկոհամակարգերի պահպանության տնտեսական արժեքի գնահատում ձեռնարկը* (**http://www. biodiversityeconomics.org/pdf/topics-628-00.pdf**) քննարկում է գնահատման իրականացումը և դրա օգտագործումը քաղաքականության հարցերում:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Երկրներում քաղաքականության և օրենսդրական համակարգերի բազմազանությունը վտանգավոր է դարձնում ՊՏ-ների օրենսդրության համար կոնկրետ սխեմայի առաջարկումը: «Բնապահպանական օրենսդրության ոլորտում հզորությունների ստեղծումը» ԲՊՄՄ-ի Շրջակա միջավայրի օրենսդրական ծրագրի (Environmental Law Programme) հիմնական նպատակն է (**http://www.iucn.org/themes/law/elp06.html**):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐ

ՈԿԿ-ներից, բազմա- և երկկողմանի կազմակերպություններից կազմված **Բնապահպանության ֆինանսական ալյանսը** (Conservation Finance Alliance) նպաստել է ինտերնետային աղբյուրի ստեղծմանը (**http://guide.conservationfinance.org/**), որը ներկայացնում է բնապահպանության ֆինանսավորման հնարավորությունները՝ հատուկ ուշադրության արժանացնելով ՊՏ-ների կառավարումը: **http://guide.conservationfinance.org /chapter/index.cfm?IndexID=29** ինտերնետային կայքը ներկայացնում է գործարար ծրագրեր մշակելու ուղեցույց, ինչպես նաև պահպանության ֆինանսավորման մեխանիզմների վերաբերյալ մանրամասն բաժիններ (տե՛ս նաև գլուխ 9):

VII/18 որոշումը (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=COP-07&id=7755&lg=0**) ընդգրկում է «բացասական խթանների մեղմացման կամ վերացման ուղիների և միջոցների կիրառման վերաբերյալ առաջարկություններ» (մշակվել է ԿԲԿ-ի փորձագետների կողմից, 2003թ.) և խրախուսում է Կողմերին և կառավարություններին օգտագործել այդ առաջարկությունները որպես «կամավոր միջանկյալ ուղեցույց» ԳՏՏԽՕՄ 10-րդ հերթական հանդիպման ընթացքում (**http://www.biodiv.org/doc/meetings /sbstta/sbstta-10/official/sbstta-10-12-en.pdf**):

ԲՊՄՄ-ի *Կենսաբազմազանության պահպանության համար տնտեսական խթանների օգտագործում* (**http://www.biodiversityeconomics.org/pdf/topics-321-00.pdf**) փաստաթուղթը ներկայացնում է կենսաբազմազանության պահպանության համար օգտագործվող հնարավոր տնտեսական խթանները:

ԳԼՈՒԽ 8

ԹԵՄԱ 6. ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

I. ՀԱԿԻՐԵ ԱԿՆԱՐԿ

ՊՏ-ները պետք է կառավարել: Դրա համար անհրաժեշտ է պատրաստված, նվիրված և պատշաճ վարձատրվող անձնակազմ, համապատասխան սարքավորումներ և ենթակառուցվածք, ինչպես նաև տեղական համայնքների աջակցություն: Բազմաթիվ ՊՏ-ներ դեռ չունեն արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Այդ պատճառով հզորությունների ստեղծումը կարևոր տեղ է զբաղեցնում *Աշխատանքների ծրագրում*: Հզորությունների ստեղծումը ընդգրկում է ֆորմալ ուսուցում, ոչ ֆորմալ փոխանակման ծրագրեր և համագործակցություն, ինչպես նաև ավելի ընդհանուր կրթական նախաձեռնություններ:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 3.2	Ստեղծել հզորություններ ՊՏ-ների պլանավորման, ստեղծման և կառավարման համար
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2010թ. իրականացնել հզորությունների ստեղծման ընդգրկուն ծրագրեր և նախաձեռնություններ անհատական, համայնքային և ինստիտուցիոնալ մակարդակներում գիտելիքների և հմտությունների զարգացման և մասնագիտական ստանդարտների բարձրացման նպատակով
ԽՆԴԻՐ 3.3	Մշակել, կիրառել և փոխանցել ՊՏ-ներին վերաբերվող համապատասխան տեխնոլոգիաներ
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2010թ. զգալի բարելավել ՊՏ-ների արդյունավետ կառավարման համապատասխան տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների զարգացումը, հաստատումը և փոխանցումը՝ հաշվի առնելով ԿԿ-ի որոշումները տեխնոլոգիաների փոխանցման և համագործակցության մասին
ԽՆԴԻՐ 3.5	Հզորացնել հաղորդակցությունը, կրթությունը և հանրային իրազեկությունը
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. զգալի բարձրացնել ՊՏ-ների կարևորության և օգուտների վերաբերյալ հանրային իրազեկությունը, ըմբռնումը և գնահատումը

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

Շատ ՊՏ-ներ չունեն մարդկային, տեխնիկական կամ վարչական հզորություններ կառավարման հիմնական գործողությունները պատշաճ կերպով կազմակերպելու համար: Շատ դեպքերում ՊՏ-ների ղեկավարները և անձնակազմը պետք է ձեռք բերեն նաև մի շարք նոր հմտություններ: Դրանք տարբեր են, սակայն հաճախ վերաբերում են մարդկանց (ներառյալ բնիկների և տեղական համայնքների, ինչպես նաև գնալով ավելացող զբոսաշրջիկների) հետ շփվելու հմտությանը: Այս նպատակով Կողմերը կարող են սկսել **գնահատել** հզորությունների ստեղծման կարիքները, որից հետո **մշակել** հզորությունների ստեղծման ծրագրեր, որոնք ըստ *Աշխատանքների ծրագրի* պետք է **իրականացվեն** մինչև 2010թ.՝ արդյունքում փաստագրելով գիտելիքները, փորձը և քաղաքական դասերը՝ ՊՏ-ների կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման, ինչպես նաև ՊՏ-ների կավառարման վերաբերյալ «համապատասխան տեխնոլոգիաների» լայն տարածումը խրախուսելու համար: Կարևորվում է նաև հասարակության լայն շրջանակներում ՊՏ-ների մասին **իրազեկման, կրթության և հաղորդակցության** հզորացման անհրաժեշտությունը:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

- Մինչև 2006թ. իրականացնել ՊՏ-ների կառավարման համար **հզորությունների կարիքների ազգային գնահատումներ** (գործողություն 3.2.1) ներառյալ.
- Փաստագրել ՊՏ-ների կառավարման վերաբերյալ գոյություն ունեցող **գիտելիքները և փորձը** և օգտագործել այդ փաստաթղթերը գիտելիքների և հմտությունների բացերի հայտնաբերման համար (գործողություն 3.2.2):
- Գնահատել **ՊՏ-ների կառավարման մեջ ընդգրկված շահագրգիռ կողմերի** տեխնոլոգիաներին առնչվող կարիքները ներառյալ բնիկների համայնքները, ՈԿԿ-ները, հետազոտական հաստատությունները և մասնավոր սեկտորը (գործողություն 3.3.2):

ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

- **Մշակել հզորությունների ստեղծման ծրագրեր** ՊՏ-ների համար (գործողություն 3.2.1) ներառյալ.
- Լրացնել **հզորություններին** առնչվող կարևոր բացերը **կառավարման հիմնական գործողությունների իրականացման համար,** ներառյալ ՊՏ-ների կառավարման անձնակազմի համապատասխան վարձատրությունը:
- Փոխանակել **քաղած դասերը, տեղեկությունները և հզորությունների ստեղծման փորձը** երկրների, համապատասխան կազմակերպությունների, համայնքների և ՊՏ կառավարողների միջև (գործողություններ 3.2.3 և 3.5.4):
- Փաստագրել ՊՏ-ների կառավարման **համապատասխան տեխնոլոգիաները** և խրախուսել դրանց տարածումը (գործողություններ 3.3.1, 3.3.4 և 3.3.5):

ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

- Մշակել **հաղորդակցության, կրթության և հանրային իրազեկության** համապատասխան ծրագրեր, որոնք վերաբերվում են ՊՏ-ների կարևոր դերին կենսաբազմազանության պահպանության և կայուն սոցիալ-տնտեսական զարգացման համար (գործողություններ 3.5.1, 3.5.2, 3.5.3 և 3.5.5):
- Մշակել ՊՏ-ների կառավարողների և բնիկների, տեղական համայնքների և բնապահպանական ոլորտում կրթություն կազմակերպողների միջև **արդյունավետ հաղորդակցության** մեխանիզմներ (գործողություն 3.5.4):
- Շարունակաբար **գնահատել** այդ ծրագրերը դրանց արդյունավետության բարձրացման նպատակով (գործողություն 3.5.6):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Ազգային հզորությունների կարիքների գնահատում

Մինչև 2006թ. պետք է գնահատել ազգային հզորությունների կարիքները ՊՏ-ների կառավարմանը վերաբերվող ուսուցման նպատակով և գնահատման արդյունքների հիման վրա մշակել հզորությունների ստեղծման ծրագրեր: *Աշխատանքների ծրագիրն* առաջարկում է Կողմերին մինչև 2006թ. իրականացնել **ազգային հզորությունների կարիքների գնահատում**: Սա լայնածավալ գործողություն է, քանի որ հզորություններն ընդգրկում են տարբեր ասպեկտներ, ներառյալ արդյունավետ և համապատասխան

քաղաքականության և օրենսդրական շրջանակները, կառավարման կազմակերպությունները, անհատների հմտությունները և բնիկների ու տեղական համայնքների հմտությունների զարգացումը: Ավելին, հզորության կարիքները տարբերվում են կապված երկրի զարգացման աստիճանի և ՊՏ-ների համակարգի հետ: Ազգային գնահատումն առնվազն պետք է վերաբերվի քաղաքականության և օրենսդրական շրջանակներին, ՊՏ-ների կառավարական հաստատություններին և դրանց համակարգմանն այլ սեկտորների հետ, ՊՏ-ների պլանավորմանը և կառավարմանը, հանրային մասնակցությանը և գործընկերություններին, հանրային իրազեկությանը և աջակցությանը, ինչպես նաև տարբեր շահագրգիռ խմբերի կարիքներին: Դրանց մեծ մասը կարելի է գնահատել ՊՏ-ների կառավարման արդյունավետության համակարգային գնահատման միջոցով (տե՛ս գլուխ 10), որի հիման վրա կարելի է սահմանել հզորությունների ստեղծման ծրագրերի գերակայությունները:

Պետք է **փաստագրել ՊՏ-ների կառավարման վերաբերյալ գոյություն ունեցող պրակտիկան, գիտելիքները և փորձը**, ինչպես նաև հայտնաբերել գիտելիքների և հմտությունների պակասը: Արդյունավետ լինելու համար հզորությունների ստեղծումը պետք է նաև հաշվի առնի այն մեխանիզմը, որով փաստագրվում են ՊՏ-ների կառավարման վերաբերյալ **գիտելիքները և պրակտիկան** և հայտնաբերվում են բացերը: *Աշխատանքների ծրագիրը* հատուկ նշում է, որ ավանդական գիտելիքների փաստագրումը պետք է կատարվի ԿԲԿ-ի հոդված 8(j)-ի համաձայն (**http://www.biodiv.org/convention/articles.asp?lg=0&a=cbd-08**), որը ներառում է բնիկների և տեղական համայնքների «ավանդական գիտելիքներ, նորարարություններ և պրակտիկաներ, որոնք արտահայտում են ավանդական ապրելակերպը և առնչվում են կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման հետ»:

Հզորություններ ստեղծող ամենահաջող գործողություններից կարող են լինել ոչ ֆորմալ շփումները, համագործակցությունը և փոխանակման ծրագրերը ՊՏ-ների աշխատակիցների միջև, ներառյալ տարբեր երկրների ՊՏ-ները:

ՊՏ-ների կառավարման մեջ ներգրավված շահագրգիռ կողմերի պահանջների գնահատում

Շահագրգիռ կողմերից են բնիկները, տեղական համայնքները, ՈԿԿ-ները, գիտահետազոտական հաստատությունները և մասնավոր սեկտորը:

Հաղորդակցության կրթության և հանրային իրազեկության (ՀԿՀԻ) ծրագրերի ու ռազմավարությունների մշակում

Նախկինում ակնկալվում էր, որ ՊՏ-ների ղեկավարները, լինելով բնագիտության ոլորտի մասնագետներ, պետք է կիրառեն իրենց գիտելիքները բնապահպանության գործում: Սակայն վերջին երկու տասնամյակների ընթացքում ՊՏ-ի ղեկավարին անհրաժեշտ հմտությունների և կարողությունների շրջանակը կտրուկ փոխվել է: Ներկայումս նրանք ոչ միայն պետք է հասկանան կենսաբանական համակարգերի վրա ազդող ճնշումներն, այլև հասկանան և գործ ունենան մի շարք լրացուցիչ հարցերի հետ, որոնցից են ֆինանսական պլանավորումը և կառավարումը, մշակութային հարցերը, հաղորդակցման ունակությունները, մասնակցային կառավարման հայեցակարգային և գործնական իմացությունը և այլն:

Կառավարողների կամ ՊՏ-ների կառավարման մեջ ընդգրկված անձանց շրջանում հզորությունների ստեղծման ապահովման միջոցներից է **քաղաց դասերի, տեղեկությունների և հզորությունների ստեղծմանն առնչվող փորձի փոխանակումը** համապատասխան երկրների և կազմակերպությունների միջև: Այդ միջոցներից են ԿԲԿ-ի միջնորդության մեխանիզմը (**http://www.biodiv.org/chm/default.aspx**) և Պահպանվող տարածքների ուսուցողական ցանցը (PALNet) (**http://palnet.whirli-gig.com/new/**) կամ սույն ուղեցույցում նշվող ցանցերը, օրինակ, Գլոբալ ինվազիվ տեսակների ծրագիրը (Global Invasive Species Programme) (**http://www.gisp.org/**), Բնապահպանական ֆինանսական ալյանսը (Conservation Finance Alliance) (**http://conservationfinance.org/**) և Երկրի բնապապանական ռեսուրսների հավաքածուն (Earth Conservation Toolbox) (**http://www.earthtoolbox.net/**): ՊՏ-ների միջև փորձի և հմտությունների փոխանակման հնարավորությունները նույնքան կարևոր են: Երբեմն մասնավոր սեկտորը նույնպես կարող է մասնակցել ՊՏ-ների ոլորտում նոր հմտությունների ստեղծման գործում:

ԿԲԿ-ն ընդունում է, որ տեխնոլոգիաների զարգացումը և փոխանցումը կարևոր է կայուն զարգացման համար (**http://www.biodiv.org/programmes/cross-cutting/technology/**): ԿԲԿ-ի իրականացման համար **անհրաժեշտ տեխնոլոգիաները** կարելի է բաժանել երկու խմբի.

ա) «տեխնիկական», օրինակ, մեխանիկական և էլեկտրոնային համակարգեր, ինչպիսիք են դիստանցիոն զոնդավորումը, մոնիտորինգային սարքավորումները, պահպանման և արխիվացման համակարգերը և գենետիկական վերլուծության սարքավորումները:
բ) «ծրագրային», օրինակ, հմտություններ, գործընթացներ, ստանդարտներ և մեթոդներ:

Տեխնոլոգիաների փոխանցմանը վերաբերվող ԿԲԿ-ի 16-րդ հոդվածը (**http://www.biodiv.org/convention/articles.asp?a=cbd-16**) հիմնականում կենտրոնանում է «տեխնիկական» միջոցների վրա: Մինչդեռ ՊՏ-ների կառավարման հրատապ կարիքները կապված են «ծրագրային» տեխնոլոգիաների հետ, որոնք հիմնականում հասանելի են հանրության համար (ինտերնետում): Հատկապես զարգացող երկրներում պակասում են այդ տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, դրանց օգտագործման տեխնիկական հմտությունները, ինչպես նաև տեխնիկական ռեսուրսների և հմտությունների զարգացման համար ֆինանսական միջոցները: Այդ պատճառով «տեխնոլոգիաների փոխանցումը» վերաբերվում է ոչ թե որևէ տեխնոլոգիայի օգտագործման իրավունքների և հմտությունների փոխանցման մասին համաձայնության ձեռք բերմանը, այլ հզորությունների ստեղծման կոնկրետ գործողություններին:

Թեև **ՀԿՀԻ** ծրագրերի անհրաժեշտությունն ընդունվում է ՊՏ-ների կողմից, սակայն այս հարցերը հաճախ առաջնահերթություն չեն ստանում ինստիտուցիոնալ պլանավորման, կառավարման ռազմավարությունների կամ ֆինանսավորման ժամանակ: Հաշվի առնելով բազմաթիվ դժվարությունները և շահագրգիռ կողմերի ու գործընկերների հետ ավելի սերտորեն աշխատելու անհրաժեշտությունը՝ ՊՏ-ների ղեկավարները պետք է ապահովեն միջոցներ ՀԿՀԻ ծրագրերի արդյունավետ իրականացման համար: ՀԿՀԻ ծրագրերը կարող են նպաստել բնապահպանության վերաբերյալ հանրային իրազեկությանը և քաղաքական աջակցությանը: Ճիշտ օգտագործելու պարագայում դրանք բարելավում են պլանավորումը և համայնքային ներգրավումը: Դրանք հատկապես կարևոր են այն երկրներում, որտեղ կենսաբազմազանության պահպանության անհրաժեշտության մասին իրազեկությունը ցածր է: Քաղաքաբնակներին ուղղված ՊՏ-ների մասին տեղեկատվական քարոզարշավները կարող են զգալի ավելացնել քաղաքական և ֆինանսական աջակցությունը: ԶԼՄ-ների միջոցով ՊՏ-ների ղեկավարները կարող են կենսաբազմազանության խնդիրներն արժանացնել համապատասխան որոշում կայացողների ուշադրությանը: Բացի այդ, էկոլոգիական և բնապահպանական հայեցակարգերն ուսումնական ծրագրերում ներառելու միջոցով երկարաժամկետ կրթության ապահովումը կարող է ավելացնել ընդհանուր բնապահպանական հայեցակարգերի իմացությունը (գործողություն 3.5.5):

Կրթական ծրագրերը կարող են ավելացնել տեղական շահագրգիռ կողմերի հզորությունները՝ նպաստելով ՊՏ-ի կառավարման հարցում իրենց դերի ընկալմանը և բանակցմանը, կամ բնական պաշարների կառավարման նոր պրակտիկաների իրականացման համար գիտական հետազոտությունների կիրառմանը (գործողություն 3.5.3): Բացի այդ, բնապահպանական գիտելիքների և արժեքների վերաբերյալ երկկողմանի երկխոսության միջոցով բնիկների և տեղացիների գիտելիքները կարելի է օգտագործել կառավարման պլանավորման մեջ: Վաղ փուլերում ՀԿՀԻ ռազմավարությունների և համայնքային մասնակցության գործընթացների կիրառումը կարող է օգնել վեճերից խուսափելու հարցում: ՊՏ-ների աշխատակիցները պետք է կարողանան շփվել շահագրգիռ կողմերի հետ և լուծել հնարավոր վեճերը: ՀԿՀԻ արդյունավետ ռազմավարությունները կապված են թիրախ խմբերի գիտելիքների, մոտեցումների և արժեքների, կիրառվող պրակտիկաների, փոփոխության խթանների և խոչընդոտների մանրամասն գնահատման հետ: Ծրագրերը պետք է հիմնվեն ոչ թե ենթադրությունների, այլ հիմնարար հետազոտությունների վրա: Հետևաբար, ՀԿՀԻ ծրագրերի **գնահատումը** պետք է ինտեգրվի ՊՏ-ների մոնիտորինգի և գնահատման ծրագրերում, ներառյալ տարածքի բնապահպանական նպատակների հետ կապված չափելի ցուցանիշները:

	VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ
ՀԿՀԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ	Կենսաբազմազանությանն առնչվող ՀԿՀԻ օրինակներ ներկայացվում են ԿԲԿ-ի ՀԿՀԻ Օրինակների և լավագույն պրակտիկայի տվյալների բազայում (**http://www.biodiv.org/ programmes/outreach/cepa/projects/home .shtml**):

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ԲՊՄՄ-ի **Կրթության և հաղորդակցության հանձնաժողովը** հրատարակել է հզորությունների ստեղծման վերաբերյալ նյութեր (**http://www.iucn.org/themes/cec/ cec/home_page.htm**), ներառյալ *Պահպանվող տարածքների մասին հաղորդակցությունը* (**http://www.iucn.org/webfiles/doc/CEC/Public/Electronic/CEC/Books/Communicating_PA.pdf**), *Բնակչության ներգրավումը կայուն գործընթացներում* (**http://www.iucn.org/webfiles/doc/CEC/Public/Electronic/CEC/Books/EngagingPeopleInSustainability_smV5.pdf**) և *Բնապահպանական կրթության գնահատումը* (**http://www.iucn.org/webfiles/doc/CEC/Public/Electronic/CEC/Books/Evaluating_Environmental_Ed.pdf**):

ԿԲԿ-ի ՀԿՀԻ գլոբալ նախաձեռնության իրականացմանն աջակցելու համար (որոշում VI/19, **http://www.biodiv.org/decisions /default.asp?dec=VI/19)** ՀԿՀԻ ինտերնետային բաժնում ներկայացվում են այդ որոշմանն առնչվող հաշվետվություններ և օգտակար նյութեր (**http://www.biodiv.org/ programmes/outreach/cepa/home.shtml)**:

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հարավ-արևելյան Ասիայի ազգերի ասոցիացիայի (ASEAN) **Կենսաբազմազանության պահպանության տարածաշրջանային կենտրոնը** (ARCBC) առաջարկում է Կենսաբազմազանության ծրագրային փաթեթներ, ներառյալ *Բնապահպանության տարբերակներ և որոշումների վերլուծություն. բնապահպանության պլանավորման ծրագրային փաթեթ և տեսակների վրա հիմնված կենսաբանական տվյալների և հավաքածուների կառավարման ծրագրային փաթեթ* (**http://www.arcbc.org.ph/download.htm**):

ԿԲԿ-ի ԳՏՏԽՕՄ-ը մշակել է *Կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման տեխնոլոգիաների նախնական ցուցակ* (**http://www.biodiv.org/doc/meetings/sbstta/sbstta-09/information /sbstta-09-inf-13-en.pdf**) ԿԲԿ-ի 9-րդ հանդիպման համար:

ՄԱԵՄԾ-ի **Համաշխարհային բնապահպանության մոնիտորինգի կենտրոնը** մշակել է պատկերներից, ձայնից և տեքստից կազմված անիմացիոն պրեզենտացիա կենսաբազմազանության կարևորության մասին, որը շեշտում է մարդկանց մեծ պատասխանատվությունն ապագա սերունդներին կենսաբազմազանության օգուտներից օգտվելու հնարավորություն ապահովելու առումով (**http://www.unep-wcmc.org/biodiversity/presentation/4422/**): **http://www.iucn.org/themes/ceesp/Publications /CMWG/SP-Chapter5.pdf** ինտերնետային կայքը ներկայացնում է գործնական միջոցներ սոցիալական հաղորդակցության և համատեղ կառավարման մասնակցային հետազոտության մասին:

Greencom-ը տրամադրում է վարվելակերպի փոփոխությանն ուղղված կրթության և հաղորդակցության վերաբերյալ ռեսուրսներ, ներառյալ *Բնապահպանական կրթություն և հաղորդակցություն հանուն կայունության. ձեռնարկ միջազգային մասնագետների համար* (ներկայացնում է մարդու վարվելակերպի և պրակտիկաների նշանակությունը կայունության համար), *Հասարակության նախապատրաստումը բնապահպանական գործողությունների իրականացման համար. արդյունավետ բնապահպանական կրթության և հանրային իրազեկության ուղեցույց* (ամփոփում է Greencom-ի փորձը 30 երկրներում) և *Կենսամիջոցների համար նախատեսված համակարգային համագործակցային գործողությունները և շրջակա միջավայրը* (SCALE) (**http://www.aed.org/Projects/greencom.cfm**), որը վերաբերվում է սոցիալական փոփոխության մեթոդների օգտագործմանը:

ԳԼՈՒԽ 9

ԹԵՄԱ 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

I. ՀԱԿԻՐԵ ԱԿՆԱՐԿ

ՊՏ-ների կառավարումը ծախսատար է: Ֆինանսավորման ավանդական (օրինակ, ազգային բյուջեի հատկացումներ, արտասահմանյան զարգացման գործակալությունների աջակցություն) և նորարարական (օրինակ, վճարումներ էկոհամակարգային ծառայությունների դիմաց, հոգաբարձական հիմնադրամներ և «կանաչ» հարկեր) բազմազան աղբյուրների զուգակցությամբ երկրները կարող են ապահովել կայուն և բավարար չափով երկարաժամկետ ֆինանսավորում ՊՏ-ների համակարգերի համար: Սակայն, ֆինանսական կայունությունը վերաբերվում է ոչ միայն գումարի չափին, այլև գումարի օգտագործման արդյունավետությանը, տեղական շահագրգիռ կողմերին տրամադրված օգուտներին և այլ գործոններին:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 3.4	Ապահովել ՊՏ-ների և ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի ֆինանսական կայունությունը
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. ապահովել ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի արդյունավետ վարման և կառավարման ծախսերը ծածկելու համար բավարար ֆինանսական, տեխնիկական և այլ միջոցներ, ներառյալ ազգային և միջազգային աղբյուրները, մասնավորապես զարգացող երկրների և անցումային տնտեսությամբ երկրների և զարգացող փոքր կղզի պետությունների կարիքներին աջակցելու նպատակով

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

ՊՏ-ների ֆինանսական կայունությունը կարելի է սահմանել որպես *«կայուն և բավարար չափով երկարաժամկետ ֆինանսական միջոցների ապահովման և ժամանակին ու ճիշտ ձևով դրանց բաշխման հնարավորություն՝ ՊՏ-ների լրիվ ծախսերը (ուղղակի և անուղղակի) հոգալու և ՊՏ-ների նպատակահարմար և արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով»*: Պարզ է, որ ֆինանսական կայունությունը պահանջում է մեծ փոփոխություններ ֆինանսավորման պլանավորման, միջոցների ստացման և օգտագործման ոլորտներում:

Աշխատանքների ծրագրում շեշտվել է ֆինանսավորման *ազգային* և *միջազգային* աղբյուրների անհրաժեշտությունը: *Աշխատանքների ծրագրի* լիարժեք իրականացումն ակնհայտորեն կպահանջի արտաքին ֆինանսավորման ավելացում (օրինակ, ԳԷՀ, արտասահմանյան զարգացման գործակալություններ) զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին աջակցելու համար: Գնալով ավելանում է նաև մի շարք նորարարական ազգային աղբյուրների դերը, օրինակ, զբոսաշրջիկության և այլ ռեսուրսների օգտագործման վճարները, նոր շուկաներից ֆինանսական միջոցների ստացումը (ածխածնի արտանետման փոխհատուցում կամ այլ վճարումներ էկոհամակարգային ծառայությունների դիմաց), նոր դոնորների ներգրավումը (մեծ կորպորացիաները, մասնավոր բարերարները, այլ կառավարական գործակալությունները կամ վարկերից ստացված գումարների բաշխումը), տեղական շահագրգիռ կողմերի միջև ծախսերի և օգուտների բաշխումը (մասնավոր հողատերեր և տեղական համայնքներ), նոր ֆինանսական գործիքների կիրառումը (գործարար ծրագրեր), ընդհանուր քաղաքականության և շուկայի պայմանների բարելավումը (շրջակա միջավայրին վնաս հասցնող սուբսիդիաների բարեփոխում և դրական խթանների ստեղծում) և ֆինանսավորման ու կառավարման պատասխանատվությունների փոխանցումը (ՈԿԿ-ներին, տեղական համայնքներին, անհատներին կամ գործարար կազմակերպություններին):

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Մինչև 2005թ. իրականացնել **ֆինանսական վերլուծություններ ազգային մակարդակում** և մինչև 2008թ. մշակել և սկսել իրականացնել **«կայուն ֆինանսավորման պլաններ»** (գործողություններ 3.4.1 և 3.4.2):

ՔԱՅԼԵՐ ԴԵՊԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

- Ուժեղացնել **դոնորային աջակցության ծրագրերը**, ներառյալ ԳԷՀ-ը, երկկողմանի և բազմակողմանի աջակցությունը՝ զարգացող երկրներում և անցումային տնտեսությամբ երկրներում ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերին աջակցելու համար (գործողություն 3.4.3):

- **Տարածաշրջանային համագործակցություն** ՊՏ-ների ֆինանսավորման համար (գործողություն 3.4.4):

- Ինտեգրել ՊՏ-ների կարիքներն ազգային և տարածաշրջանային **զարգացման ռազմավարություններում և համագործակցության ծրագրերում** (գործողություն 3.4.6):

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՍՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՕՊՏԻՄԻԶԱՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՈՎ

- Բարելավել ՊՏ-ների ֆինանսավորման մասին **տեղեկությունների և զեկույցների** որակը և հասանելիությունը (գործողություն 3.4.5):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Մինչև 2005թ. ՊՏ-ների ազգային մակարդակի ֆինանսական վերլուծություն և պլանավորում

Մինչև այժմ ֆինանսական վերլուծությունների և պլանների մեծամասնությունն իրականացվել են առանձին ՊՏ-ների համար և **ազգային մակարդակում ֆինանսական վերլուծության** և պլանավորման համար լայն ճանաչում ունեցող մեթոդը բացակայում է: Այնուամենայնիվ, Կողմերն ընդհանուր առմամբ պետք է պատասխանեն երեք հարցերի.

- Ի՞նչ չափով են ներկայումս ֆինանսավորվում ՊՏ-ները, որո՞նք են դրա աղբյուրները, ի՞նչ նպատակով և ինչքանո՞վ արդյունավետ են օգտագործվում ֆինանսական միջոցները (տե՛ս գլուխ 10 ՊՏ-ների արդյունավետության մասին):
- Հաշվի առնելով գոյություն ունեցող և պլանավորված ՊՏ-ները ինչքա՞ն են կազմում չապահովված ֆինանսական կարիքները մոտակա տաս տարիների ընթացքում:
- Որո՞նք են ֆինանսավորման կարիքների ապահովման հնարավորությունները և յուրաքանչյուր տարբերակի հնարավորությունը՝ ՊՏ-ների համակարգի համար եկամուտ ստեղծելու առումով:

Մինչև 2008թ. մշակել ֆինանսավորման պլաններ երկրի մակարդակով

Բոլոր պատասխանները միասին հիմք կհանդիսանան երկրի մակարդակով «կայուն ֆինանսավորման պլանների» համար, որոնք կընդգրկեն անհրաժեշտ կանոնակարգման, օրենսդրական, քաղաքականության, ինստիտուցիոնալ և այլ միջոցառումներ: Այդ ֆինանսական պլանները կհանդիսանան ՊՏ-ների համար մշակված գործարար ծրագրերի մաս: Գործողությունները պետք է կենտրոնանան եկամուտ-

ների և ծախսերի վրա և կարող են հաշվի առնել նորարարարական ֆինանսավորման մեխանիզմները, ներառյալ էկոլոգիական ծառայությունների դիմաց վճարումները:

Կոնկրետ քայլերից են.

ա) Ներկա շահույթի և ծախսերի, ընդհանուր ֆինանսական կարիքների, բացերի և հնարավորությունների արժեքների վերլուծություն,

բ) ՊՏ-ներից ստացվող ապրանքների և ծառայությունների, դրանց պահանջարկի հնարավոր աղբյուրների և չքավորության նվազեցման ու ՀՁՆ-ին հասնելու համար դրանց ներդրման որոշում և քանակական գնահատում,

գ) Հնարավոր ֆինանսական մեխանիզմների ընտրություն և դրանց իրականացման հնարավորության վերլուծություն,

դ) ՊՏ-ների համակարգի երկարաժամկետ ֆինանսական աջակցության ապահովման համար ամբողջական պլանի մշակում:

Իրականացնել կայուն ֆինանսական պլաններ երկրի մակարդակում

Ֆինանսական պլանների իրականացումը կպահանջի գործողություններ տարածքներում, ինչպես նաև ազգային և երբեմն ազգայինից բարձր մակարդակներում: ՊՏ-ների համակարգի գործարար ծրագրերը պետք է հաշվի առնեն ավելի լայն հնարավորություններ ստեղծող պայմանները, պլանավորման գործողությունները և ֆինանսական մեխանիզմների իրականացումը (տե՛ս սխեմա 3 ստորև): Կոնկրետ գործողությունների օրինակներից են.

- Բնապահպանական հիմնադրամների (որոնցից են ՊՏ-ների ազգային հոգաբարձական հիմնադրամները) ստեղծում, դրանց միջոցների ավելացում և գոյություն ունեցող հիմնադրամների ուժեղացում,
- Նոր օրենքների/քաղաքականության ընդունում, որոնք թույլ կտան ստեղծել հաջող փորձարկում անցած տեղական ֆինանսական մեխանիզմներ (օրինակ, զբոսաշրջիկությունից ստացվող վճարներ) և օգտագործել տեղում ստացված եկամուտը տեղական ՊՏ-ների կարիքների ֆինանսավորման համար,
- Օրենքներ, քաղաքականություններ և այլ միջոցներ, որոնք ստեղծում են նորարարական ֆինանսական մեխանիզմներ, որոնցից են պաշարների օգտագործման վճարները, ջրի օգտագործման վճարները և այլն,
- Բացասական սուբսիդիաների հայտնաբերում (մասնավորապես ՊՏ-ների հետ ավելի ուղղակի կապ ունեցող սեկտորներում) և նման սուբսիդիաների փոփոխություն՝ ուղղելով դրանք ՊՏ-ների ֆինանսավորմանը, և
- Արտաքին ֆինանսավորման ծրագրերի մշակում, ներառյալ կարճաժամկետ և կայուն ֆինանսական բաղադրիչները:

Դոնոր կառավարությունները կարող են օգնել *Աշխատանքների ծրագրի* իրականացմանը՝ ավելացնելով իրենց աջակցությունը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների ՊՏ-ներին (երկկողմանի և բազմակողմանի ծրագրերի միջոցով, ներառյալ ԳԷՀ): Կողմերը կարող են ստանալ **տարածաշրջանային համագործակցային ֆինանսավորում**, մասնավորապես անդրսահմանային և ծովային ՊՏ-ների դեպքում, ինչպես նաև փոքր երկրները, որոնցից են զարգացող փոքր կղզի պետությունները, և տարածաշրջանային կազմակերպություններ ունեցող երկրները:

ՊՏ-ների ինտեգրումը **զարգացման համագործակցության ծրագրերում** կարևոր է դրանց երկարաժամկետ կայունության համար: Այդ ծրագրերում զարգացման նպատակները պետք է համապատասխանեցվեն ՊՏ-ների նպատակների հետ, մասնավորապես այն դեպքերում, երբ դրանք այնքան էլ համատեղելի չեն, ինչպես հաճախ պատահում է ենթակառուցվածքների զարգացման (օրինակ, ճանապարհներ և ջրային ամբարտակներ) կամ բնական պաշարների շահագործման (հանքարդյունաբերություն, վառելիք և

գազ, բնափայտ) դեպքում: ՊՏ-ների կարիքների հստակ ինտեգրումը զարգացման համագործակցության ծրագրերում նույնպես կարևոր է, հատկապես քանի որ կենսաբազմազանությանը տրամադրվող արտաքին աջակցության մեծ մասը գալիս է զարգացման գործակալությունների միջոցով (օրինակ, ՀԲ, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալություն (USAID), Շվեդիայի միջազգային զարգացման գործակալություն (Sida) և այլն): Սա համապատասխանում է բազմաթիվ դոնոր գործակալությունների կողմից իրենց զարգացման աջակցության շրջանակներում բնապահպանական նկատառումների ընդգրկման ուղղությամբ իրականացվող ջանքերին:

Մշակել ռազմավարություններ ՊՏ-ների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների կառավարման և զեկուցման համար

ՊՏ-ների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների և զեկուցման որակական և քանակական բարելավումը կբերի մի շարք օգուտների: Կողմերի համար օգտակար կլինի ՊՏ-ների բյուջեի մասին հիմնական տեղեկությունների տրամադրումը, քանի որ կառավարական գործակալությունները, դոնորները և հասարակությունն ավելի լավ կհասկանան ՊՏ-ների ֆինանսական կարիքները: Դոնորների համար դա օգտակար կլինի ՊՏ-ների համար ռազմավարական ներդրումներ կատարելու և ֆինանսավորումը համակարգելու համար: Կողմերը պետք է գնահատեն ՊՏ-ների ֆինանսավորմանը հետևելու և դրա մասին զեկուցելու իրենց հնարավորությունները, ինչպես նաև նկատի ունենան այդ տեղեկությունների տրամադրումը զեկույցների ձևով ԿԲԿ-ին, ՊՏՀՏԲ-ին և այլ տեղեկատվական համակարգերին:

Սխեմա 3	Գործարար ծրագիր ՊՏ-ների համակարգի մակարդակում. բարելավում համապատասխան կառուցվածքի միջոցով

Հնարավորությունների ստեղծում

Պլանավորում

Տարբեր ֆինանսական մեխանիզմների կիրառում համակարգի մակարդակով ֆինանսական պլանների միջոցով

Առկա ինստիտուցիոնալ և քաղաքականության շրջանակ

Միջազգային համաձայնագրեր

ՊՏ-ների համակարգի լիազոր մարմին

ֆինանսական կառավարման համակարգ

Առկա ֆինանսական մեխանիզմներ և գումարների հայթհայթման պլաններ

Համակարգի մակարդակում ֆինանսական բացերի գնահատում

Ֆինանսական գործիքների ընտրություն և դրանց կիրառման հնարավորության վերլուծություն

ՊՏ-ների և դրանց համակարգի երկարաժամկետ ֆինանսական պլաններ

Ինստիտուցիոնալ և քաղաքականության բարեփոխումների պլան

Տարածքներում իրականացվող մեխանիզմներ

Ազգային մեխանիզմներ

Տարածաշրջանային մեխանիզմներ

Միջազգային մեխանիզմներ

VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ

Բազմաթիվ նյութեր և օրինակներ կարելի է գտնել **Բնապահպանության ֆինանսական ալյանսի** (Conservation Finance Alliance) ինտերնետային կայքում (**http://www.conservationfinance.org/index.htm**), դրա *Բնապահպանության ֆինանսական ուղեցույցում* (**http://guide.conservationfinance.org/**) և *Կենսաբազմազանության ֆինանսական ժողովածուի* մեջ (**http://www.biodiversityeconomics.org/finance/index.html**):

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Բնապահպանության ֆինանսական ալյանսը (**http://www.conservationfinance.org/index.htm**) ստեղծվել է 2002թ-ին գլոբալ բնապահպանական պարտավորությունների իրականացման համար՝ կենսաբազմազանության պահպանության կայուն ֆինանսավորման ոլորտում ընդգրկված հաստատությունների և կազմակերպությունների միջև համագործակցության խրախուսման և բարելավման նպատակով: Դրա *Բնապահպանության ֆինանսական ուղեցույցը* (**http://guide.conservationfinance.org/**) լավ տեխնիկական ձեռնարկ է բնապահպանության ֆինանսավորման բոլոր ասպեկտների վերաբերյալ:

ԲՊՄՄ-ի Կենսաբազմազանության տնտեսական գրադարանում կան ուղեցույցեր և օրինակներ (**http://www.biodiversityeconomics.org/finance/index.html**).

ԲՊՄՄ-ն մշակել է նաև *Պահպանվող տարածքների ֆինանսավորում. ուղեցույց պահպանվող տարածքների կառավարողների համար* (**http://iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/Financing_PAs.pdf**), որը ներառում է ուղեցույց ՊՏ-ների գործարար և ֆինանսական պլանների մշակման համար, քննարկում է հանրային և մասնավոր աղբյուրներից եկամուտի ստացման մեխանիզմները, ներառյալ ֆինանսավորման հնարավոր դրամաշնորհային աղբյուրները և օրինակները: *Աշխատանքների ծրագրի* համար ԲՊՄՄ-ն մշակել է նաև *Պահպանվող տարածքների կայուն ֆինանսավորում. մարտահրավերների և հնարավորությունների ընդհանուր ամփոփում* ձեռնարկը (ապրիլ 2005թ.), որին կարելի է ծանոթանալ ԲՊՄՄ ինտերնետային կայքում:

Եկամուտի ստացման տարբերակներն ամփոփվում են *Պահպանվող տարածքների համար եկամուտի ստացում. տարբերակներ* աշխատությունում (**http://biodiversityeconomics.org/pdf/topics-226-00.pdf**):

ԲՀՀ Մակրոտնտեսության գրասենյակը նույնպես մշակել է նյութ էկոլոգիական ծառայությունների դիմաց վճարումների օգտագործման մասին՝ *Բարի կամքից դեպի վճարումներ էկոլոգիական ծառայությունների դիմաց. զարգացող երկրներում բնական պաշարների կայուն կառավարման ֆինանսավորման այլընտրանքների ուսումնասիրություն* (**http://www.panda.org/downloads/policy/financingalts.pdf**):

ԳԷՀ-ի հատուկ դերը և ազգային ՊՏ-ների միջազգային ֆինանսավորումն ամփոփվում են *Պահպանվող տարածքների ազգային ցանցերի միջազգային ֆինանսավորում. Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը որպես միջոցների փոխանցման բազմակողմանի մեխանիզմ* աշխատանքում (**http://www.unikiel.de/ifw/pub/kap/2004/kap1227.pdf**):

ԿԲԿ-ի **տեղեկությունների միջնորդության մեխանիզմի** (**www.biodiv.org**) հատուկ բաժինն անդրադառնում է ԿԲԿ-ի իրականացման ֆինանսական աղբյուրներին:

ԳԼՈՒԽ 10

ԹԵՄԱ 8. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ի. ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ

ՊՏ-ները կարող են բնապահպանության միջոց հանդիսանալ միայն արդյունավետ կառավարման դեպքում: Կառավարման արդյունավետության առումով երեք կարևոր առաջնային քայլերն են. 1)ՊՏ-ների կամ ՊՏ-ների ազգային համակարգերի համար համաձայնեցված ստանդարտների սահմանումը, 2)կառավարման արդյունավետության գնահատման համակարգերի մշակումը և կիրառումը, որը կօգնի անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը (հարմարեցված կառավարում, և 3)ՊՏ-ների և դրանց կենսաբազմազանության վիճակի և միտումների մոնիտորինգի համակարգերի ստեղծումը:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 4.1	Մշակել և ընդունել ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի համար նվազագույն ստանդարտներ և լավագույն պրակտիկաներ
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2008թ. մշակել և ընդունել ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային համակարգերի պլանավորման, ընտրության, ստեղծման, կառավարման և ղեկավարման ստանդարտներ, չափանիշներ և լավագույն պրակտիկաներ
ԽՆԴԻՐ 4.2	Գնահատել և բարելավել ՊՏ-ների կառավարման արդյունավետությունը
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2010թ. Կողմերն ընդունել և իրականացնում են տարածքների, ազգային և տարածաշրջանային համակարգերի, և ԱՊՏ-ների մակարդակներում պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության մոնիտորինգի, գնահատման և զեկուցման շրջանակներ
ԽՆԴԻՐ 4.3	Գնահատել և մոնիտորինգի ենթարկել ՊՏ-ների վիճակը և միտումները
ՆՊԱՏԱԿ	Մինչև 2010թ. ստեղծել ազգային և տարածաշրջանային համակարգեր, որոնք հնարավորություն են ստեղծում արդյունավետ մոնիտորինգի ենթարկել ՊՏ-ների ընդգրկման գոտին, կարգավիճակը և միտումներն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, և աջակցել կենսաբազմազանության գլոբալ նպատակներին հասնելու գործում առաջընթացի գնահատմանը

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

Թեև շատ վայրերում նոր ՊՏ-ների ստեղծումը հրատապ անհրաժեշտություն է (տե՛ս գլուխ 3), սակայն գնալով ավելի մեծ շեշտ է դրվում ՊՏ-ների գոյություն ունեցող համակարգերի արդյունավետ պահպանությունը և կառավարումը ապահովելու վրա: Այս հարցին է անդրադառնում ծրագրային էլեմենտ 4-ը: Այն պահանջում է ՊՏ-ների կառավարման համար նվազագույն ստանդարտների և լավագույն պրակտիկայի սահմանում (խնդիր 4.1), կառավարման արդյունավետության գնահատման համակարգերի կիրառում (խնդիր 4.2), ինչպես նաև ՊՏ-ների և դրանց կենսաբազմազանութան վիճակի և միտումների ընթացիկ մոնիտորինգ (խնդիր 4.3): 4-րդ ծրագրային էլեմենտի խնդիրների իրականացման միջոցով կարող են գնահատվել 1-3 ծրագրային էլեմենտների շրջանակում իրականացրած գործողությունների արդյունքները, ինչպես նաև տրամադրվել կառավարման հարմարեցման համար անհրաժեշտ տեղեկություններ:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Համագործակցել գործընկերների հետ ՊՏ-ների պլանավորման և կառավարման, ղեկավարման և մասնակցության վերաբերյալ կամավոր **ստանդարտների և լավագույն պրակտիկաների** մշակման, փորձարկման, վերանայման և խթանման նպատակով (գործողություն 4.1.1):

- Մշակել և ընդունել երկարաժամկետ **մոնիտորինգի և գնահատման** համապատասխան **համակարգեր** ՊՏ-ների կառավարման և ղեկավարման արդյունավետության, ներառյալ ՊՏ-ների համակարգերում և տարածքներում կենսաբազմազանության վիճակի և միտումների գնահատման համար, ինչպես նաև **իրականացնել** կառավարման արդյունավետության գնահատումներ (գործողություններ 4.1.2, 4.2.1, 4.2.2 և 4.3.1):

- Իրականացնել տարածքի և համակարգի մակարդակում կառավարման արդյունավետության գնահատումներից ստացված հիմնական առաջարկությունները, որպես **հարմարեցված կառավարման մոտեցման** բաղկացուցիչ մաս (գործողություններ 4.1.3 և 4.2.3):

- Բարելավել և թարմացնել ՊՏ-ների ազգային և տարածաշրջանային տվյալների բազաները: Տրամադրել տեղեկություններ **Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազային** և մասնակցել Միացյալ ազգերի Պահպանվող տարածքների ցուցակին և երկրի պահպանվող տարածքների վիճակի գնահատման գործընթացին (գործողություններ 4.3.3 և 4.3.4):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Մշակել երկրում ՊՏ-ների ստանդարտներ

Լավ կառավարման վերաբերյալ ամենաանհրաժեշտ **ստանդարների և լավագույն պրակտիկայի** ընդունումը կաջակցի արդյունավետ պահպանությանը: Սկզբում պետք է սահմանվեն կառավարման յուրաքանչյուր կարևոր ասպեկտի ցանկալի ստանդարտները, այսինքն ինչպես կիրականացվեր կառավարումն եթե չլինեին խոչընդոտներ, որոնք կապված են ֆինանսավորման, անձնակազմի թվի և հմտությունների կամ կառավարման այլ ասպետկների անբավարարության հետ: Լավագույն պրակտիկայի վերաբերյալ տեղեկությունները (առկայության դեպքում) մասնագիտական փորձառության և տեղական պայմանների իմացության հետ միասին կարող են օգտագործվել կառավարման ցանկալի ստանդարտների սահմանման համար: ԲՊՄՄ-ն մշակել է ՊՏ-ների կառավարման վերաբերյալ «լավագույն պրակտիկայի» բազմաթիվ ուղեցույցեր (տե՛ս նաև գլուխ 4) և առաջարկել է մի շարք նվազագույն ստանդարտներ. գոյություն ունեն ազգային և տարածաշրջանային ստանդարների սահմանման գործընթացների լավ փաստագրված գործընթացներ (տե՛ս ստորև): Նվազագույն ստանդարտների մշակումը և լավագույն պրակտիկայի սահմանումը կարող են օգնել կառավարման արդյունավետության գնահատման ժամանակ:

Մշակել և ընդունել կառավարման արդյունավետության գնահատման համակարգեր և իրականացնել ՊՏ-ների երկարաժամկետ մոնիտորինգի համակարգեր

ՊՏ-ների կառավարման արդյունավետության **մոնիտորինգի և գնահատման համակարգերի** մշակման և իրականացման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական բաղադրիչներ. 1) պլանավորման հարցերը, 2) մոնիտորինգի համակարգերի երկարաժամկետ կենսունակությունը, 3) կառավարման միջոցների, համակարգերի և գործընթացների համապատասխանությունը, և 4) ՊՏ-ների նպատակների իրականացումը:

ԲՊՄՄ-ի ՊՏՀՀ-ն մշակել է կառավարման արդյունավետության գնահատման շրջանակ, որը լավ հիմք է հանդիսանում ՊՏ-ների և դրանց համակարգերի գնահատման մեթոդների մշակման համար, որը հաշվի է առնում նշված բաղադրիչները: Այդ շրջանակի հիմքում ընկած է վեց փուլերից կազմված ՊՏ-ների կառա-

վարման ցիկլը, որն ընդգրկում է.

- գոյություն ունեցող արժեքների և վտանգների համատեքստի սահմանում,
- պլանավորում,
- միջոցների տրամադրում (ներդրումներ),
- կառավարման գործողություններ (գործընթաց),
- ստացված ապրանքներ և ծառայություններ (արտադրանքներ), և
- ազդեցություններ կամ արդյունքներ:

Այս գործընթացի հիմքում ընկած է գնահատման, արձագանքման և գիտելիքների ձեռք բերման ցիկլը: Յուրաքանչյուր փուլի գնահատումը և փուլերի միջև կապերը կարող են բավական լիարժեք ցույց տալ կառավարման արդյունավետությունը: Այս համակարգը կարող է հարմարեցվել կոնկրետ համատեքստին, բնական ապրելավայրին և այլ տեղական տարբեր պայմաններին:

ՊՏ-ների կենսաբազմազանության վիճակի և միտումների վերաբերյալ տեղեկությունների ստացումը կառավարման արդյունավետության գնահատման գործընթացում «արդյունքի» մոնիտորինգի նպատակն է (խնդիր 4.2): Կենսաբազմազանության պահպանության նպատակների սահմանումը (տե՞ս գլուխ 4) պետք է ուղեցույց հանդիսանա այդ «արդյունքների» մոնիտորինգի համար (ՊՏ-ների և դրանց համակարգերի էկոլոգիական ամբողջականությունը կամ կենսաբազմազանության վիճակը): VII/30 որոշմամբ ընդունված գլոբալ մակարդակի ցուցանիշների վերաբերյալ ԿԲԿ շրջանակը (**http://www.biodiv.org/decisions/default.aspx?m=COP07&id=7767&lg=0**) կաջակցի տարածաշրջանների և ՊՏ-ների միջև համապատասխանության ավելացմանը՝ թույլ տալով կենտրոնացնել և համեմատել (տարբեր մակարդակներում և ժամանակների միջև) ՊՏ-ների մոնիտորինգի ծրագրերի միջոցով հավաքած տեղեկությունները: Կառավարման և արդյունքների միջև պատճառա-հետևանքային կապերի իմացությունը կարևոր է կառավարման բարելավման համար՝ հարմարեցված կառավարման ռազմավարությունների միջոցով: Գնահատումն իմաստ ունի իրականացնել միայն եթե այն կապված է գնահատման արդյունքում հայտնաբերված խնդիրների կամ կառավարման պակասների արձագանքման գործնական պլանների հետ:

Մինչև 2010թ. մշակել մեթոդ և ՊՏ-ների առնվազն 30%-ում իրականացնել կառավարման արդյունավետության գնահատումներ

Արդեն մշակվել են գնահատման այլընտրանքային բազմաթիվ մեթոդներ՝ արագ ինքնագնահատման հարցաշարերից մինչև երկարաժամկետ ու մանրամասն մոնիտորինգի և գնահատման համակարգերը: Կողմերը կարող են օգտագործել գոյություն ունեցող մեթոդները կամ դրանց հիման վրա մշակել հարմարեցված մեթոդներ կառավարման արդյունավետության գնահատման համար:

Թարմացնել Պահպանվող տարածքների համաշխատրհային տվյալների բազայի (ՊՏՀՏԲ) տեղեկությունները

Ազգային մակարդակում ՊՏ-ների վերաբերյալ տվյալներն անհրաժեշտ են համակարգի պլանավորման (խնդիր 1.1) և տարածքի պլանավորման (խնդիր 1.4) միջոցով սահմանված ՊՏ-ների համակարգի նպատակների ուղղությամբ առաջընթացի մոնիտորինգի, ինչպես նաև կառավարման ռազմավարությունների և միջամտությունների (խնդիր 4.2) արդյունավետության գնահատման համար: Տվյալներն ընդհանուր առմամբ վերաբերվում են տարածքների չափին, տեղադրությանը և սահմաններին, կենսաբազմազանության նպատակներին, ցուցանիշներին և կենսաբազմազանության ցուցանիշներին առնչվող միտումներին, կառավարմանը (ստանդարտներ, գնահատման արդյունքներ և այլն) և վտանգների բնույթին, չափին ու միտումներին:

Գլոբալ և ազգային մակարդակներում անհրաժեշտ են ավելի լավ տեղեկություններ ՊՏ-ների վերաբերյալ: **ՊՏՀՏԲ**-ն գլոբալ մակարդակում ՊՏ-ների վերաբերյալ տվյալների այն աղբյուրն է, որը հիմք է հանդիսանում գլոբալ մակարդակում *Աշխատանքների ծրագրի* իրականացման գնահատման բոլոր ջանքերի համար: Հետևաբար, խնդիր 4.3-ը հատուկ կոչ է անում, որպեսզի Կողմերը զեկուցեն ՊՏ-ների մասին ԿԲԿ-ին և ՊՏՀՏԲ-ին ներկայացվող ազգային և թեմատիկ զեկույցներում:

Տարբեր երկրների տվյալների համեմատության համար անհրաժեշտ է ազգային տվյալների զեկուցման ներդաշնակ եղանակ: Սակայն, երկրներում առկա են ՊՏ-ների դասակարգման և զեկուցման տարբեր համակարգեր: Այդ պատճառով վերը նշված որոշումը «ընդունում է ՊՏ-ների միջազգային դասակարգման ընդհանուր համակարգի կարևորությունը, և երկրների ու տարածաշրջանների միջև համեմատելի տեղեկությունների տրամադրման օգտակարությունը...» (պարբերություն 31) և խրախուսում է, որպեսզի Կողմերն առանձնացնեն ՊՏ-ներն ըստ ԲՊՄՄ կատեգորիաների: Սա նշանակում է, որ Կողմերը միջազգային զեկույցներում պետք է ներկայացնեն իրենց ՊՏ-ները համապատասխան ԲՊՄՄ կատեգորիաներով (ոչ թե վերանայեն իրենց դասակարգման համակարգերը):

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊՐԱԿՏԻԿԱ	ՊՏ-ների անձնակազմին վերաբերվող ստանդարտների ամփոփում կատարվել է Կենսաբազմազանության պահպանության ASEAN տարածաշրջանային կենտրոնի (ARCBC) կողմից, որում ներկայացվում են ուսուցման կարիքների վերլուծության մեթոդը և կենսաբազմազանության պահպանության համար օգտագործվող աշխատանքային ստանդարտների օրինակները (**http://www.arcbc.org/arcbcweb/pdf/vol1no4/sp_occupational.pdf**): *Հարավարևելյան Ասիայում պահպանվող տարածքներում աշխատելու հմտությունների ստանդարտները* ավելի լայնածավալ աշխատանքում (**http://www.arcbc.org/arcbcweb/pdf/competence_standards.pdf**) ներկայացվում են խորհուրդներ ՊՏ-ների հետ կապված 24 ամենակարևոր պաշտոնների համար պահանջվող հմտությունների և գիտելիքների վերաբերյալ: Խորհուրդները բաժանվում են 17 տեխնիկական կատեգորիաների և 5 մակարդակների: Գրքում մանրամասն նկարագրվում են բոլոր ստանդարտները և դրանց օգտագործման ուղեցույցերը: Ավստրալիայի Շրջակա միջավայրի և ժառանգության կառավարական վարչության (DEH) Ազգային պարկերի և պահպանվող տարածքների կառավարման հանձնաժողովն իրականացնում է ՊՏ-ների կառավարման լավագույն պրակտիկայի մոդելների մշակման հատուկ ծրագիր: Ներկայումս իրենց ինտերնետային կայքում կարելի է գտնել լավագույն պրակտիկայի 13 ուղեցույց (**http://www.deh.gov.au/parks/best-practice/reports/index.html**), ներառյալ ուղեցույցեր անձնակազմի ուսուցման, կրթության և պահպանվող տարածքների կառավարման ոլորտում հանրային մասնակցության վերաբերյալ:
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	Մշակվել են մոնիտորինգի և գնահատման մի շարք համակարգեր, որոնցից շատերը հիմնվում են ԲՊՄՄ-ՊՏՀՀ գնահատման շրջանակի վրա (տե՛ս բաժին VII): Սրանցից են ՊՏ-ների համակարգի մակարդակում իրականացվող գնահատումները, օրինակ, ԲՀՀ Պահպանվող տարածքների կառավարման արագ գնահատման և առաջնայնությունների սահմանման (RAPPAM) մեթոդը (**http://www.panda.org/about_wwf/what_we_do/forests/our_solutions/protection/tools/rappam/index.cfm**), Ֆինլանդիայի պարկերի վերաբերյալ ամփոփումը (**http://www.metsa.fi/mee/index.htm**) և Պարկերի վիճակի գնահատումը ու զեկույցը Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսում (**http://www.nationalparks.nsw.gov.au/**) և Կանադայում (**http://www.pc.gc.ca/docs/pn-np/ie-ei/prior/mesures-actions/mesures-actions6c_E.asp**): Տարածքի մակարդակում գնահատումները տարբեր են և ներառում են պարզ գնահատման թերթիկների օգտագործումը, օրինակ, ՀԲ/ԲՀՀ-ի գնահատման մեթոդը (**http://www.panda.org/downloads/forests/areprotectedareasworking.pdf**), որը օգտագործվել է 200 ՊՏ-ներում առաջընթացի գնահատման համար և ԲՊԿ-ի *Պարկերը վտանգի տակ* գնահատման թերթիկը (**http://www.parksinperil.org/wherewework/**), ինչպես նաև տարածքի ավելի մանրամասն մոնիտորինգի և գնահատման ծրագրեր (**http://www.enhancingheritage.net**):

ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ	Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազա (**http://sea.unep-wcmc.org/wdbpa/**): *Խոսենք ընդհանուր լեզվով* զեկույցը քննարկում է տվյալների բազայի զարգացումը (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/speakingacommonlanguage.pdf**):

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ

ԲՊՄՄ լավագույն պրակտիկայի շարքը (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/guidelines.htm**) տրամադրում է տեղեկություններ կառավարման տարբեր ասպեկտների համար ստանդարտների մշակման վերաբերյալ:

ԲՊՄՄ-ի էկոհամակարգ, պարկեր և մարդիկ ծրագիրն առաջարկել է ՊՏ-ների կառավարմանը վերաբերվող նվազագույն ստանդարտներ: Դրանք ամփոփվում են *Պահպանվող տարածքների ապահովում գլոբալ փոփոխության նախաշեմին. խնդիրներ և ռազմավարություններ* գրքում (կարելի է գնել, տե՛ս **http://www.iucn.org/bookstore/TOCs/Sec-PAs.htm**): Ստանդարտների ամփոփ նկարագրությանը կարելի է ծանոթանալ ինտերնետային կայքում տեղադրված ամփոփումից (**http://conserveonline.org/2004/11/a/en/IUCN_Protected_Areas_Exec_Summary_English_9_Nov.pdf**):

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՊՏՀՀ-ի *Պահպանվող տարածքների կառավարման գնահատման շրջանակին* կարելի է ծանոթանալ ինտերնետում (**http://www.iucn.org/themes/wcpa/pubs/pdfs/Evaluating_Effect.pdf**):

Պահպանվող տարածքների կառավարման արագ գնահատման և առաջնահերթությունների սահմանման (RAPPAM) մեթոդով կարելի է երկրի մակարդակում ամփոփել ՊՏ-ների կառավարման արդյունավետությունը, վտանգները, խոցելիությունը և փոփոխությունները (**http://www.panda.org/downloads/forests/rappam.pdf**):

ՀԲ/ԲՀՀ-ի *գնահատման մեթոդով* կառավարման արդյունավետության առաջընթացի գրանցման համար օգտագործվում է հարցաշար (**http://Inweb18.worldbank.org/ESSD/envext.nsf/80ByDocName/ReportingProgressInProtectedAreaManagementEffectivenessTrackingToolJuly2002/$FILE/PATrackingToolJune2003.pdf**):

Պարկերը վտանգի տակ մոտեցումը կիրառվել է Լատինական Ամերիկայում ԲՊԿ-ի կողմից և դրա վերաբերյալ մի շարք աշխատանքներ հասանելի են ինտերնետում (**http://www.parksinperil.org/resources/publications.html**):

Կանադայի պարկեր կազմակերպությունը (Parks Canada) մշակել է էկոլոգիական մոնիտորինգի մանրամասն համակարգեր (**http://www.pc.gc.ca/progs/np-pn/ecosystem/ecosystem3_e.asp**):

ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ

Այս տվյալների բազան հասանելի է ինտերնետում (**http://sea.unep-wcmc.org/wdbpa/**):

ԳԼՈՒԽ 11

ԹԵՄԱ 9. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ

I. ՀԱԿԻՐՃ ԱԿՆԱՐԿ

ՊՏ-ների լավ կառավարման համար անհրաժեշտ է լավ գիտական հիմք կենսաբազմազանության, էկոլոգիական ծառայությունների, սոցիալական հարցերի և կառավարման ռազմավարությունների վերաբերյալ: Թեև ՊՏ-ներն էկոլոգիական գիտելիքների ստեղծման ամենակարևոր աղբյուրներից են, սակայն դրանցում իրականացվող հետազոտությունների մեծ մասի արդյունքները չեն օգտագործվում ՊՏ-ների ղեկավարների կողմից: *Աշխատանքների ծրագրում* առաջարկվում են որոշ քայլեր այս ուղղությամբ:

II. ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ	
ԽՆԴԻՐ 4.4	Ապահովել, որ գիտական տվյալները նպաստեն ՊՏ-ների և ՊՏ-ների համակարգերի ստեղծմանը և արդյունավետությանը
ՆՊԱՏԱԿ	ՊՏ-ներին առնչվող գիտական տվյալները զարգանում են որպես ներդրում դրանց ստեղծման, արդյունավետության և կառավարման համար

III. ՀԱՄԱՏԵՔՍՏ

Այս նպատակի իրականացումն ուղղված է լրացնելու գիտելիքների բազմաթիվ բացերը, որոնք վերաբերվում են կենսաբազմազանությանը, մարդու գործունեության և կենսաբազմազանության միջև կապերին, ներառյալ ՊՏ-ների ստեղծումը և կառավարումը: Գիտակցելով, որ տեղեկությունները հաճախ անհասանելի են ՊՏ-ների վերաբերյալ որոշում կայացնողների, ՊՏ-ների ղեկավարների և շահագրգիռ կողմերի համար՝ պարզ է դառնում, որ հետազոտությունների մեծ մասը չեն տրամադրում ՊՏ-ների կառավարման համար անհրաժեշտ տեղեկություններ: ՊՏ-ներում տնտեսագիտական և սոցիալական ուսումնասիրությունները շատ քիչ են:

IV. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություններում Կողմերին կոչ է արվում.

- Ավելացնել հետազոտությունները մի շարք գիտական դիսցիպլինաների շրջանակում ՊՏ-ներին առնչվող **գերակա թեմաների** ուղղությամբ (գործողություններ 4.4.2 և 4.4.3):
- **Հետազոտությունների ոլորտում** ուժեղացնել **համագործակցությունը** համապատասխան հզորություններ ունեցող կենտրոնների, բնիկների և տեղական համայնքների հետ (գործողություններ 4.4.1, 4.4.2, 4.4.4 և 4.4.7):
- Բարելավել հետազոտությունների տվյալների **ստացումը և տարածումը**, մասնավորապես զարգացող երկրներում (գործողություններ 4.4.5 և 4.4.6):

V. ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՅԼԵՐ

Որոշել հետազոտությունների գերակա թեմաները

ՊՏ-ների լավ կառավարման համար անհրաժեշտ տեղեկությունները հիմնականում ստացվում են էկոլոգիական գույքագրումներից և ներկա վիճակի ընդհանուր ուսումնասիրություններից, ինչպես նաև բնական համակարգերում ընթացող գործընթացների և դրանց ինքնակարգավորման վերաբերյալ գիտելիքներից:

Այլ անհրաժեշտ տեղեկությունները վերաբերվում են կոնկրետ ՊՏ-ներին, օրինակ, վտանգված տեսակների համար պահանջվող նվազագույն տարածքը կամ ՊՏ-ների կառավարման տարբեր միջոցառումների և կառավարման մոդելների ազդեցությունները: Երկրների գերակայությունները տարբեր են. դրանք արտացոլում են երկրին բնորոշ առանձնահատկությունները, կարիքները և միջոցները:

Կենսաբազմազանության հետազոտությունների խթանման համար բավարար չէ հետազոտությունների պլանների սահմանումը: Այն պահանջում է հմտությունների և ինստիտուցիոնալ հզորությունների ավելացում և ներառում է աշխատանքներ սոցիալական, տնտեսագիտական, հումանիտար, ինչպես նաև բնական գիտությունների ոլորտներում: Եթե հետազոտությունները վերաբերվում են բնիկների և տեղական համայնքների տարածքներին կամ գիտելիքներին, ապա պետք է ապահովել նրանց իրազեկությունը ծրագրված գործողությունների վերաբերյալ, ձեռք բերել նախնական հիմնավորված պայմանավորվածություն, ինչպես նաև տեղեկացնել նրանց հետազոտությունների արդյունքների մասին: ՊՏ-ներում իրականացվող հետազոտությունները պետք է ինչքան հնարավոր է համապատասխանեն ՊՏ-ների կառավարման կարիքներին:

Բնական գիտությունների ոլորտում իրականացվող հետազոտությունների առումով 1992թ-ի *Գլոբալ կենսաբազմազանության ռազմավարությունը* տրամադրում է գերակայությունների ցուցակ, որը կազմվել է համաշխարհային մակարդակում գիտնականների և բնապահպանական ոլորտի մասնագետների հետ լայնածավալ խորհրդակցության արդյունքում (**http://biodiv.wri.org/pubs_content_text.cfm?ContentID =532**):

Հայտնաբերել գործընկեր հետազոտական կազմակերպություններ և համայնքներ

Գործընկեր հետազոտական կազմակերպությունների և համայնքների հետ անհրաժեշտության դեպքում պետք է կնքել համագործակցության պայմանագրեր, ներառյալ տեղական իրավունքների և մտավոր սեփականության իրավունքների պատշաճ ճանաչումը: Թեև ՊՏ-ների համար կարևոր է հետազոտության առումով իրենց սեփական հզորությունների ավելացումը, սակայն դրանց մեծ մասը կարողանում է իրականացնել ընդամենը շատ սահմանափակ թվով առաջնահերթ ուսումնասիրություններ: Այդ պատճառով 4.4.7 գործողությունը խրախուսում է կողմերին «զարգացնել և ամրապնդել աշխատանքային համագործակցությունը համապատասխան կազմակերպությունների և հաստատությունների հետ, որոնք իրականացնում են ՊՏ-ներում կենսաբազմազանության ըմբռնման բարելավմանն ուղղված հետազոտական ուսումնասիրություններ»: Կարևոր է նախօրոք սահմանել այդ համագործակցության նպատակները և պայմանները: ՊՏ-ները պետք է ապահովեն, որ համագործակցային հետազոտությունները համապատասխանեն կառավարման արդյունվետության բարձրացման համար անհրաժեշտ գերակայություններին, որոնք սովորաբար որոշվում են երկրի մակարդակում գերակայությունների սահմանման գործընթացում: Հետազոտության ոլորտում կարող է օգտակար լինել նաև համագործակցությունը մասնավոր սեկտորի հետ, օրինակ, վայրի գենետիկական ռեսուրսների կոմերցիոն ուսումնասիրության ժամանակ կենսաբանական պաշարների (օրինակ, անտառային կամ ծկնային պաշարներ) կայուն օգտագործումը և վերականգնումն ապահովելու համար: Մասնավոր սեկտորի հետ համագործակցությունը նաև տեխնոլոգիաների փոխանցման և հզորությունների զարգացման կարևոր միջոց է: Սակայն, ինչպես լայնորեն ընդունվում և քննարկվել է ԿԲԿ և այլ գործընթացներում, մասնավոր սեկտորի կոմերցիոն հետաքրքրությունը լրացուցիչ վտանգ և բարդություն է ստեղծում հետազոտական համագործակցության համար, հատկապես երբ այն վերաբերվում է գենետիկական պաշարների հասանելիությանը:

Մշակել նոր մեխանիզմներ ուսումնասիրության արդյունքները բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրելու համար

ՊՏ-ների և կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտություններն օգտակար կլինեն ՊՏ-ների

ղեկավարների և շահագրգիռ կողմերի համար միայն եթե դրանք ներկայացվում են կիրառական ֆորմատով և լայնորեն տարածվում են հիմնական թիրախային կողմերի շրջանակում: Հաճախ նույն տեղեկությունները տարբեր թիրախային խմբերին պետք է ներկայացվեն տարբեր ձևերով: Օրինակ, ՊՏ-ների ոլորտում աշխատող կենսաբանի և քաղաքականություն մշակողի, բնիկ համայնքի ղեկավարի կամ զբոսաշրջիկի կարիքները տեղեկությունների առումով տարբեր են: Նրանց գիտելիքները և նյութի ուսումնասիրությանը տրամադրվող ժամանակը նույնպես տարբերվում են: Որոշ դեպքերում կարևոր է թարգմանել տեղեկություններն ազգային լեզվով:

Հետազոտությունների արդյունքները համապատասխան թիրախային խմբերին տրամադրելու համար անհրաժեշտ են նաև դրանց տրամադրման տարբեր ձևեր: Թեև ինտերնետը գնալով ավելի հասանելի է դառնում, սակայն շատերի համար այն դեռ անհասանելի է, հատկապես զարգացող երկրներում: Նույնիսկ ինտերնետի հասանելիության և համապատասխան հմտությունների առկայության դեպքում նկարների և քարտեզների պատճառով ծանր էլեկտրոնային գիտական նյութերի օգտագործումը պահանջում է բարձր որակի ինտերնետային կապ: CD-ROM սկավառակների միջոցով կարելի է տարածել մեծ քանակությամբ տեղեկություններ: Այնուամենայնիվ, տպագիր նյութերը չափազանց կարևոր են զարգացող երկրներում ՊՏ-ների մասնագետների համար:

	VI. ՕՐԻՆԱԿՆԵՐ
ԱՎՍՏՐԱԼԻԱ	Ավստրալիայի կենսաբազմազանության հետազոտության գերակայությունների սահմանման գործընթացը (**http://www.deh.gov.au/biodiversity/publications/research-priorities/index.html**) մշակել է հետազոտությունների ընտրության սկզբունքներ, որոնք կարող են ուսումնասիրվել այլ երկրների կողմից և հարմարեցվել նրանց կոնկրետ կարիքներին (**http://www.deh.gov.au/biodiversity/publications/research-priorities/appendix4.html**).
PARKSWATCH	«ParksWatch»-ը նպաստում է Լատինական Ամերիկայի ՊՏ-ներում իրականացվող հետազոտություններին՝ ինտերնետային կայքում (**http://www.parkswatch.org/research_needs.htm**) տեղադրելով հետազոտության կարիքները, որպեսզի հետազոտողները մշակեն ծրագրեր ՊՏ-ներում հետազոտության բացերի լրացման ուղղությամբ:

VII. ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գործնականում հավասար համագործակցություն. մարդիկ և բույսերի պահպանություն ձեռնարկը գործնական ուղեցույց է կենսաբազմազանության հետազոտությունների իրականացման վերաբերյալ, ներառյալ հետազոտողների էթիկայի կանոնները, ինստիտուցիոնալ քաղաքականությունները և համայնքային հետազոտությունների համաձայնագրերը: Գիրքը կարելի է գնել «Earthscan Publishers»-ից (**http://shop.earthscan.co.uk/ProductDetails/mcs/productID/33/groupID/6/categoryID/8/v/22936297-253a-45da-ac53-6b39cc2bc466**).

Ավստրալիայի կառավարության Կրթության, գիտության և ուսուցման վարչությունը մշակել է *Պահպանվող և շրջակա միջավայրի առումով խոցելի տարածքներում հետազոտությունների գնահատման և իրականացման սկզբունքները* (**http://www.dest.gov.au/archive/Science/astec/ethics/part1.html**), որոնք վերաբերվում են պահպանությանը, թափանցիկությանը, կառավարության և ղեկավարության դերին, բնիկներին և այլ հարցերին:

Սարա Լեյրդի հեղինակած *Կենսաբազմազանությունը և ավանդական գիտելիքները. գործնականում հավասար համագործակցություն* աշխատանքը հրատարակվել է Earthscan-ի կողմից 2002թ-ին և ներկայացնում է տեղական համայնքների հետ աշխատելու ուղղությամբ իրականացվող քայլերը (**http://shop. earthscan.co.uk/ProductDetails/mcs/productID/33/groupID/6/categoryID/8/v/a3c401d9-9ccc-4c72-a0a0-9255b65a31dd**):

ՀԱՎԵԼՎԱԾ
ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ*

1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. In situ պահպանությունը, կենսաբանական բազմազանության կայուն օգտագործումը և գենետիկական ռեսուրսների օգտագործման հետ կապված օգուտների արդարացի ու հավասար բաշխումը կապված են բավարար թվով բնական ապրելավայրերի պատշաճ պահպանության հետ: Ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում պահպանության, կայուն օգտագործման և վերականգնման նախաձեռնությունների հետ միասին պահպանվող տարածքները կենսաբազմազանության պահպանության ազգային և գլոբալ ռազմավարությունների կարևոր բաղադրիչներից են: Դրանք ապահովում են մի շարք ապրանքներ և էկոլոգիական ծառայություններ՝ միաժամանակ պահպանելով բնական և մշակութային ժառանգությունը: Դրանք կարող են ներդրում ունենալ չքավորության նվազեցման համար՝ տրամադրելով աշխատանքային հնարավորություններ և ապրելամիջոցներ այնտեղ և դրանց շրջակայքում ապրող մարդկանց համար: Բացի այդ, դրանք ստեղծում են հնարավորություններ հետազոտությունների, ներառյալ կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև բնապահպանական կրթության, ռեկրեացիայի և զբոսաշրջիկության համար: Արդյունքում, երկրների մեծամասնությունը ստեղծել է պահպանվող տարածքների համակարգեր: Պահպանվող տարածքների ցանցը ներկայումս ընդգրկում է Երկրի ցամաքային տարածքի մոտ 11%: Ցանցում ընդգրկված է Երկրի ծովային տարածքների ավելի պակաս քան 1%: Պահպանվող տարածքների Կենտրոնական դերը Կոնվենցիայի նպատակների իրականացման հարցում բազմիցս շեշտվել է Կողմերի Կոնֆերանսի որոշումներում: Դրանք կազմում են տարբեր թեմատիկ աշխատանքների ծրագրերի կարևոր տարրը, այն է՝ ծովային և առափնյա կենսաբանական բազմազանության, ներքին ջրերի էկոհամակարգերի կենսաբանական բազմազանության, չոր և սուբհումիդ տարածքների կենսաբանական բազմազանության, անտառային կենսաբանական բազմազանության և լեռների կենսաբանական բազմազանության ծրագրերը:

2. Նկատի ունենալով դրանց բազմաթիվ օգուտները՝ պահպանվող տարածքները կարևոր գործիք են Կոնվենցիայի նպատակներին՝ մինչև 2010թ. կենսաբազմազանության կորստի չափի զգալի նվազեցմանը հասնելու համար: Սակայն, պահպանվող տարածքների վիճակի և միտումների վերաբերյալ լավագույն հասանելի տվյալների համաձայն (տե՛ս ՄԱՇՄԾ/ԿԲԿ/ԳՏՏԽՕՄ/9/5) պահպանվող տարածքների ներկայիս գլոբալ համակարգերը բավարար մեծ չեն, բավարար լավ չեն պլանավորված, ոչ էլ բավարար լավ են կառավարվում՝ կենսաբազմազանության պահպանության հարցում իրենց ներդրումը առավելագույնին հասցնելու համար: Հետևաբար, պահպանվող տարածքների չափի, ներկայացուցչականության և կառավարման բարելավմանն ուղղված գործողությունների իրականացումն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում հրատապ անհրաժեշտություն է:

3. Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիան աշխատում է բազմաթիվ գործընկերներ կազմակերպությունների, կոնվենցիաների և նախաձեռնությունների հետ պահպանվող տարածքների միջոցով պահպանությանը և կայուն օգտագործմանը աջակցելու համար: Դրանք ընդգրկում են ԲՊՄՄ Պահպանվող տարածքների համաշխարհային հանձնաժողովը (IUCN-WCPA), ՄԱՇՄԾ Համաշխարհային բնապահպանական մոնիտորինգի կենտրոնը (UNEP-WCMC), Միջազգային ծովային կազմակերպությունը (IMO), Համաշխարհային պաշարների ինստիտուտը (WRI), Բնության պահպանության կազմակերպությունը (TNC), Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF), ՄԱԿԳՄԿ-ի Մարդը և կենսոլորտը ծրագիրը (UNESCO MAB), ՄԱԿԳՄԿ-ի Համաշխարհային ժառանգության մասին կոնվենցիան, Միջազգային կարևորության ջրաճահճային տարածքների մասին, հատկապես որպես

* Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի Կոնֆերանսի 7-րդ խորհրդակցության VII/28 որոշում պահպանվող տարածքների վերաբերյալ, տե՛ս http://www.biodiv.org/decisions/default.asp/m=COP07&id=7765&lg=0

ջրլող թռչունների բնակավայր կոնվենցիան (Ռամսարի կոնվենցիան), Վայրի կենդանիների միգրացիա կատարող տեսակների պահպանության մասին կոնվենցիան և դրա հետ կապված համաձայնագրերը, Վայրի ֆլորայի և ֆաունայի վտանգված տեսակների վաճառքի մասին կոնվենցիան (CITES), Միացյալ ազգերի անտառների ֆորումը (UNFF), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (GEF), Կետերի որսի կարգավորման մասին միջազգային կոնվենցիան (ICRW), Միավորված ազգերի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO), Ծովային օրենսդրության մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (UNCLOS), տեղաբնակների կազմակերպությունները, այլ շահագրգիռ կողմերը և արդյունաբերությունը, ինչպես նաև տարբեր տարածաշրջանային համաձայնագրեր և ծրագրեր:

4. Պահպանվող տարածքների վերաբերյալ *Աշխատանքների ծրագիրը* ներկայացնում է պահպանվող տարածքներին վերաբերվող նպատակներ և գործողություններ: Անտառների, ներքին ջրերի, չոր և սուբհումիդ տարածքների, առափնյա, ծովային և լեռնային կենսաբանական բազմազանության վերաբերյալ գոյություն ունեցող աշխատանքային ծրագրերի որոշ տարրեր, ինչպես նաև Բույսերի պահպանության գլոբալ ռազմավարությունը և Գլոբալ տաքսոնոմիական նախաձեռնությունը նույնպես վերաբերվում են պահպանվող տարածքներին: Այդ գոյություն ունեցող աշխատանքային ծրագրերի նպատակները և գործողությունները նույնպես պետք է կիրառվեն և իրականացվեն, ինչքան և որտեղ նպատակահարմար է, իրենց համապատասխան պահպանվող տարածքներում: ԿԲԿ-ի խաչաձևվող հարցերի շրջանակներում մշակված այլ առնչվող ուղեցույցերը նույնպես պետք է հաշվի առնվեն *Աշխատանքների ծրագրերի* իրականացման ժամանակ:

5. Կայուն զարգացման համաշխարհային վեհաժողովը (ԿԶՀՎ) իր Իրականացման պլանում նշել է, որ 2010 թ-ի նպատակին հասնելու համար զարգացող երկրներին անհրաժեշտ են նոր և լրացուցիչ ֆինանսական և տեխնիկական միջոցներ, իսկ ընդգրկուն, արդյունավետ կառավարվող և էկոլոգիապես ներկայացուցչական պահպանվող տարածքների գլոբալ համակարգի ստեղծման և պահպանման գործում առաջընթացը շատ կարևոր է 2010 թ-ի նպատակին հասնելու համար: ԿԶՀՎ-ը նույնպես կոչ է արել տրամադրել ֆինանսական և տեխնիկական աջակցություն այս ոլորտում գործողությունների իրականացման համար՝ ընդունելով, որ այս նպատակի համար ֆինանսավորումը պետք է ընդհանուր առմամբ ներառի ազգային և միջազգային միջոցներ և ֆինանսավորման գործիքների ամբողջ ցանկը, որոնցից են հանրային ֆինանսավորումը, «բնապահպանական գործողություններ արտաքին պարտքի դիմաց» մեխանիզմը, մասնավոր ֆինանսավորումը, պահպանվող տարածքների կողմից տրամադրվող ծառայություններից ստացված վճարները, ինչպես նաև ազգային մակարդակում էկոլոգիական ծառայությունների օգտագործման համար ստացված հարկերը և վճարները:

2 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԸ

6. Պահպավող տարածքների վերաբերյալ Աշխատանքների ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել ընդգրկուն, արդյունավետ կառավարվող և էկոլոգիական առումով ներկայացուցչական պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի ստեղծմանը և պահպանմանը մինչև 2010թ. և 2012թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքների համար, որոնք միասին, մասնավորապես գլոբալ ցանցերի միջոցով նպաստում են Կոնվենցիայի երեք նպատակների և 2010 թ-ի նպատակի՝ գլոբալ, տարածաշրջանային, ազգային և ենթաազգային մակարդակներում կենսաբազմազանության կորստի ներկայիս չափի զգալի նվազեցմանը, և նպաստում են չքավորության նվազեցմանը և կայուն զարգացմանը՝ այդպիսով նպաստելով Կոնվենցիայի ռազմավարական պլանի, ԿԶՀՎ-ի Իրականացման պլանի և Հազարամյակի զարգացման նպատակներին:

7. *Աշխատանքների ծրագիրը* կազմված է չորս փոխկապակցված էլեմենտներից, որոնք իրականացման առումով լրացնում են իրար և խաչաձևվում են: Այն մշակվել է հաշվի առնելով Կենսաբանական

բազմազանության մասին կոնվենցիայի գոյություն ունեցող թեմատիկ աշխատանքային ծրագրերի և այլ ընթացիկ նախաձեռնությունների հետ ավելորդ կրկնություններից խուսափելու և տարբեր միջազգային կազմակերպություններին առնչվող ծրագրերի հետ համատեղ գործողություններին և համակարգմանը նպաստելու անհրաժեշտությունը: Խրախուսվում է, որպեսզի Կողմերը կիրառեն, որտեղ նպատակահարմար է, այդ թեմատիկ աշխատանքային ծրագրերի և խաչաձևվող հարցերի աշխատանքի նպատակները և գործողությունները:

8. Կոնվենցիայի պահպանվող տարածքների վերաբերյալ աշխատանքը հաշվի է առնում էկոհամակարգային մոտեցումը: Էկոհամակարգային մոտեցումը առաջնային շրջանակ է Կոնվենցիայի գործողությունների համար, և դրա կիրառումը կօգնի Կոնվենցիայի երեք նպատակների միջև հավասարակշռության հաստատմանը: Էկոհամակարգային մոտեցման համատեքստում դիտարկելու դեպքում բազմազան նպատակներով օգտագործվող պահպանվող տարածքները կարող են, օրինակ, օգնել պահպանության, կայուն օգտագործման և գենետիկական ռեսուրսների օգտագործման հետ կապված օգուտների արդարացի և հավասար բաշխման հետ առնչվող կոնկրետ նպատակներին հասնելու գործում: Էկոհամակարգային մոտեցումն այն շրջանակն է, որում կարելի է հասկանալ պահպանվող տարածքների կապն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտների հետ, ինչպես նաև գնահատել պահպանվող տարածքների կողմից տրամադրվող ապրանքները և ծառայությունները: Բացի այդ, էկոհամակարգային մոտեցման համատեքստում պահպանվող տարածքների համակարգերի ստեղծումը և կառավարումը պետք է դիտարկվի ոչ միայն ազգային, այլև էկոհամակարգային կամ կենսատարածաշրջանային շրջանակներում՝ եթե համապատասխան էկոհամակարգը տարածվում է ազգային սահմաններից դուրս: Սա հանդիսանում է լուրջ փաստարկ անդրսահմանային պահպանվող տարածքների և ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ծովային տարածքներում պահպանվող տարածքների ստեղծման օգտին և բարդացնում է դրանց ստեղծումը: Այս ծրագրի շրջանակներում ծովային և առափնյա պահպանվող տարածքների վերաբերյալ ցանկացած աշխատանք պետք է համահունչ լինի Ծովային և առափնյա կենսաբազմազանության վերաբերյալ VII/5 որոշման հետ:

9. *Աշխատանքների ծրագրի* նպատակն է աջակցել Կողմերին ազգային աշխատանքների ծրագրի մշակման գործում, ներառյալ նպատակները, գործողությունները, կոնկրետ գործող անձինք, ժամանակացույցերը, ներդրումները և ակնկալվող չափելի արդյունքները: Կողմերը կարող են ընտրել, հարմարեցնել և/կամ լրացնել սույն *Աշխատանքների ծրագրում* առաջարկվող գործողությունները կոնկրետ ազգային և տեղական պայմանների և իրենց զարգացման մակարդակի համաձայն: Սույն Աշխատանքների ծրագրի իրականացումը պետք է հաշվի առնի Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի էկոհամակարգային մոտեցումը: Աշխատանքների ծրագրի իրականացման հարցում խրախուսվում է, որպեսզի Կողմերը պատշաճ ուշադրություն դարձնեն տարբեր տարբերակների սոցիալական, տնտեսական և բնապահպանական ծախսերի և օգուտների վրա: Բացի այդ, խրախուսվում է, որպեսզի Կողմերը նկատի ունենան համապատասխան տեխնոլոգիաների օգտագործումը, ֆինանսական աղբյուրները և տեխնիկական համագործակցությունը, ինչպես նաև ապահովեն, համապատասխան գործողությունների միջոցով, իրենց պահպանվող տարածքներում առկա կոնկրետ մարտահրավերներին և պահանջներին արձագանքելու միջոցները:

10. *Աշխատանքների ծրագրի* իրականացումը կնպաստի Կոնվենցիայի երեք նպատակների իրականացմանը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ 1. Ուղղակի գործողություններ ուղղված պահպանվող տարածքների համակարգերի և տարածքների պլանավորմանը, ընտրությանը, ստեղծմանը, հզորացմանը և կառավարմանը

ԽՆԴԻՐ 1.1

Ստեղծել և հզորացնել գլոբալ ցանցում ինտեգրված պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգեր, որպես ներդրում գլոբալ ձևով համաձայնեցված նպատակների համար

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2010 թ. և 2012 թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքների համար ստեղծվել է ընդգրկուն, ներկայացուցչական և արդյունավետ կառավարվող պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգ, որպես ներդրում. (1) Կոնվենցիայի ռազմավարական պլանի և ԿԶՀՎ-ի նպատակին՝ մինչև 2010 թ. կենսաբազմազանության կորստի չափի զգալի նվազեցմանը հասնելու համար, (2) Հազարամյակի զարգացման նպատակների, մասնավորապես 7-րդ նպատակի՝ բնապահպանական կայունության ապահովման համար, և (3) Բույսերի պահպանության գլոբալ ռազմավարության համար:

Կողմերին առաջարկվող գործողություններ

1.1.1 Մինչև 2006թ. մշակել համապատասխան ժամկետային և չափելի ազգային և տարածաշրջանային մակարդակի պահպանվող տարածքների նպատակներ և ցուցանիշներ:

1.1.2 Որպես հրատապ գործողություն մինչև 2006թ. ձեռնարկել պահպանվող տարածքների ստեղծումը կամ ընդլայնումը ցանկացած մեծ, չխախտված կամ համեմատաբար չտարանջատված կամ չվերականգնվող բնական տարածքներում, կամ մեծ վտանգի տակ գտնվող տարածքներում, ինչպես նաև այն տարածքներում, որոնք պահպանում են ազգային գերակայությունների համատեքստում ամենավտանգված տեսակները, և նկատի ունենալով միգրացիա կատարող տեսակների պահպանության կարիքները:

1.1.3 Որպես հրատապ գործողություն մինչև 2006թ. և 2008թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքներում ձեռնարկել գոյություն ունեցող պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերում ծովային և ներքին ջրերի էկոհամակարգերի քիչ ներկայացվածությանն արձագանքելու գործողություններ՝ նկատի ունենալով ազգային իրավասության շրջանակից դուրս գտնվող ծովային էկոհամակարգերը համաձայն առնչվող միջազգային օրենսդրությանը և անդրսահմանային ներքին ջրերի էկոհամակարգերը:

1.1.4 Մինչև 2006թ. բնիկների, տեղական համայնքների և համապատասխան շահագրգիռ կողմերի լիարժեք և արդյունավետ մասնակցությամբ իրականացնել պահպանության գոյություն ունեցող և պոտենցիալ ձևերի, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանության նպատակներին հասնելու համար դրանց օգտակարության ազգային մակարդակի ընդհանուր ամփոփումներ, ներառյալ պահպանվող տարածքների կառավարման նորարարական ձևերը, որոնք պետք է ընդունվեն և աջակցվեն օրենսդրական, քաղաքականության, ֆինանսական, ինստիտուցիոնալ և համայնքային մեխանիզմների միջոցով, որոնցից են տարբեր մակարդակներում կառավարական գործակալությունների կողմից կառավարվող պահպանվող տարածքները, համակառավարվող պահպանվող տարածքները, մասնավոր պահպանվող տարածքները, բնիկների և տեղական համայնքների կողմից պահպանվող տարածքները:

1.1.5 Մինչև 2006թ. իրականացնել պահպանվող տարածքների համակարգի բացերի վերլուծություններ ազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ հիմնվելով պահպանվող տարածքների ներկայացուցչական համակարգերի պահանջների վրա, որոնք համապատասխանաբար պահպանում են ցամաքային, ծովային և ներքին ջրերի կենսաբազմազանությունը և էկոհամա-կարգերը: Պետք է մշակվեն նաև ազգային պլաններ՝ ապահովելով միջանկյալ միջոցառումներ անհրաժեշտության

դեպքում չափազանց վտանգված կամ չափազանց արժեքավոր տարածքները պահպանելու համար: Բացերի վերլուծությունները պետք է հաշվի առնեն Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Հավելված 1-ը և այլ առնչվող չափանիշները, որոնցից են կենսաբազմազանության թիրախային բաղադրիչների չվերականգնվող բնույթը, նվազագույն արդյունավետ չափի և կենսունակության պահանջները, տեսակների միգրացիայի պահանջները, ամբողջականությունը, էկոլոգիական գործընթացները և էկոհամակարգային ծառայությունները:

1.1.6 Մինչև 2009թ. առանձնացնել ազգային կամ տարածաշրջանային բացերի վերլուծության միջոցով սահմանված պահպանվող տարածքները (ներառյալ հստակ քարտեզները), և մինչև 2010թ. և 2012թ. համապատասխանաբար ցամաքային և ծովային տարածքներում հիմնել պահպանվող տարածքների ընդգրկուն և էկոլոգիապես ներկայացուցչական ազգային և տարածաշրջանային համակարգեր:

1.1.7 Խրախուսել պահպանվող տարածքների ստեղծումը, որոնք օգուտ են տալիս բնիկներին և տեղական համայնքներին, նրանց ավանդական գիտելիքների ճանաչման, պահպանության և կիրառման միջոցով՝ ներառյալ հոդված 8(j) և առնչվող դրույթների համաձայն:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

1.1.8 Հայտնաբերել պահպանվող տարածքների քանակական և որակական նպատակների և ցուցանիշների տարբերակները, որոնք պետք է օգտագործվեն գլոբալ մակարդակում և կարող են ներդրում ունենալ 2010թ. նպատակի և Հազարամյակի զարգացման նպատակների համար:

1.1.9 Դիմել առնչվող միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին առաջարկելու իրենց աջակցությունը Կողմերին ազգային մակարդակում բացերի վերլուծությունների իրականացման հարցում:

1.1.10 Հավաքել և միջնորդության մեխանիզմի և այլ համապատասխան միջոցների միջոցով տարածել համակարգի պլանավորմանն առնչվող մոտեցումները, շրջանակները և գործիքները, ինչպես նաև նպաստել և աջակցել դրանց կիրառման և տարբեր էկոլոգիական ու սոցիալական պայմաններին դրանց հարմարեցման վերաբերյալ փորձի և քաղած դասերի փոխանակմանը:

ԽՆԴԻՐ 1.2

Ինտեգրել պահպնվող տարածքներն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և սեկտորներում, որպեսզի պահպանվեն էկոլոգիական կառուցվածքը և ֆունկցիան

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2015թ. բոլոր պահպանվող տարածքները և պահպանվող տարածքների համակարգերն ինտեգրել ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում և համապատասխան սեկտորներում՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և հաշվի առնելով էկոլոգիական կապերի ապահովումը և, որտեղ նպատակահարմար է, էկոլոգիական ցանցերի հայեցակարգը:

Կողմերին առաջարկվող գործողություններ

1.2.1 Մինչև 2006թ. գնահատել ազգային և ենթաազգային փորձը և քաղած դասերը պահպանվող տարածքներն ավելի մեծ ցամաքայն և ծովային լանդշաֆտներում ու սեկտորային պլաններում և ռազմավարություններում՝ որոնցից են չքավորության նվազեցման ռազմավարությունները, ինտեգրելու վերաբերյալ:

1.2.2 Մինչև 2008թ. հայտնաբերել և իրականացնել պահպանվող տարածքներն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում ինտեգրելու բարելավմանն ուղղված գործնական քայլեր, ներառյալ քաղաքականության, օրենսդրական, պլանավորման և այլ միջոցները:

1.2.3 Ինտեգրել պահպանվող տարածքների տարածաշրջանային, ազգային և ենթաազգային համակարգերն ավելի մեծ ցամաքային և ծովային լանդշաֆտներում, մասնավորապես, ստեղծելով և պահպանելով էկոլոգիական ցանցեր, էկոլոգիական միջանցքներ և/կամ բուֆերային գոտիներ,

որտեղ նպատակահարմար է, էկոլոգիական գործընթացները պահպանելու համար և հաշվի առնելով միգրացիա կատարող տեսակների կարիքները:

1.2.4 Զարգացնել էկոլոգիական կապերի ապահովման միջոցներ, որոնցից են պահպանվող տարածքներն իրար կապող էկոլոգիական միջանցքները, որտեղ նպատակահարմար է կամ օգտակար, ինչպես սահմանված է կենսաբազմազանության պահպանության ազգային գերակայություններով:

1.2.5 Վերականգնել բնական ապրելավայրերը և դեգրադացված էկոհամակարգերը, ինչքան հնարավոր է, որպես ներդրում էկոլոգիական ցանցերի, էկոլոգիական միջանցքների և/կամ բուֆերային գոտիների ստեղծման համար:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

1.2.6 Խրախուսել տարածաշրջանային և ենթատարածաշրջանային աշխատանքային հանդիպումների կազմակերպումը՝ կենսաբազմազանությունը և պահպանվող տարածքները համապատասխան սեկտորային և տարածքային պլաններում ինտեգրելու փորձի փոխանակման համար:

1.2.7 Հավաքել և տարածել, օգտագործելով միջնորդության մեխանիզմը և այլ միջոցները, լավագույն պրակտիկայի օրինակներ և այլ հաշվետվություններ միջազգային, տարածաշրջանային, ազգային և ենթաազգային մակարդակներում պահպանվող տարածքների հետ կապված էկոհամակարգային մոտեցման կիրառման վերաբերյալ:

ԽՆԴԻՐ 1.3

Ստեղծել և հզորացնել տարածաշրջանային ցանցեր, անդրսահմանային պահպանվող տարածքներ (ԱՊՏ) և համագործակցություն ազգային սահմանների երկարությամբ հարևան պահպանվող տարածքների միջև

ՆՊԱՏԱԿ

Ստեղծել և հզորացնել, մինչև 2010/2012թթ., անդրսահմանային պահպանվող տարածքներ, ազգային սահմանների երկարությամբ հարևան պահպանվող տարածքների միջև համագործակցության այլ ձևեր և տարածաշրջանային ցանցեր կենսաբանական բազմազանության պահպանությունը և կայուն օգտագործումը բարելավելու համար՝ կիրառելով էկոհամակարգային մոտեցում և բարելավելով միջազգային համագործակցությունը:

Կողմերին առաջարկվող գործողություններ

1.3.1 Համագործակցել այլ Կողմերի և համապատասխան գործընկերների հետ պահպանվող տարածքների արդյունավետ տարածաշրջանային ցանցեր ստեղծելու համար, մասնավորապես, որպես ընդհանուր բնապահպանական գերակայություն սահմանված տարածքներում (օրինակ, սահմանային մարջանային խութերի համակարգեր, մեծ գետերի ավազաններ, լեռնային համակարգեր, մեծ մնացորդային անտառային տարածքներ և վտանգված տեսակների կարևոր բնական ապրելավայրեր) և հիմնել տարբեր երկրներ ընդգրկող համակարգման մեխանիզմներ, ինչպես նպատակահարմար է, նման ցանցերի ստեղծմանը և արդյունավետ երկարաժամկետ կառավարմանն աջակցելու համար:

1.3.2 Համագործակցել այլ Կողմերի և համապատասխան գործընկերների հետ, Միավորված ազգերի Ծովային օրենսդրության վերաբերյալ ոչ ֆորմալ խորհրդակցային գործընթացի (UNICPOLOS) միջոցով, ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող ծովային տարածքներում պահպանվող տարածքների ստեղծման և կառավարման համար՝ համաձայն միջազգային օրենսդրության, ներառյալ ՄԱԿ-ի Ծովային օրենսդրության մասին կոնվենցիան և հիմնվելով գիտական տվյալների վրա:

1.3.3 Հիմնել, որտեղ նպատակահարմար է, ԱՊՏ-ներ սահմանակից Կողմերի և երկրների հետ և ուժեղացնել գոյություն ունեցող ԱՊՏ-ների արդյունավետ համագործակցային կառավարումը:

1.3.4 Նպաստել համագործակցությանն ազգային սահմանների երկարությամբ գտնվող պահպանվող տարածքների միջև:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

1.3.5 Համագործակցել և խորհրդակցել առնչվող կազմակերպությունների և մարմինների հետ ԱՊՏ-ների և համագործակցային կառավարման մոտեցումների վերաբերյալ ուղեցույցերի մշակման համար, ինչպես նպատակահարմար է, Կողմերին տրամադրելու նպատակով:

1.3.6 Հավաքել և տարածել տեղեկություններ պահպանվող տարածքների տարածաշրջանային ցանցերի և ԱՊՏ-ների մասին, ներառյալ, ինչքան հնարավոր է, դրանց աշխարհագրական տարածումը, դրանց պատմական անցյալը, դրանց դերը և ընդգրկված կողմերը:

1.3.7 Ընդհանուր ամփոփել Միգրացիա կատարող տեսակների մասին կոնվենցիայի շրջանակներում տարածաշրջանային համագործակցության ներուժը՝ միջազգային սահմանների երկարությամբ և ազգային իրավասության սահմաններից դուրս գտնվող պահպանվող տարածքների ցանցերն իրար կապելու նպատակով՝ կարևոր տեսակների համար միգրացիայի միջանցքներ ստեղծելու միջոցով:

ԽՆԴԻՐ 1.4

Զգալի բարելավել տարածքների վրա հիմնված պահպանվող տարածքների պլանավորումը և կառավարումը

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2012 թ. բոլոր պահպանվող տարածքներում առկա է արդյունավետ կառավարում՝ օգտագործելով մասնակցային և գիտականորեն հիմնավորված տարածքային պլանավորման գործընթացները, որոնք ընդգրկում են կենսաբազմազանության հստակ խնդիրներ, նպատակներ, կառավարման ռազմավարություններ և մոնիտորինգի ծրագրեր՝ հաշվի առնելով գոյություն ունեցող մեթոդները և երկարաժամկետ կառավարման պլանը, շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ:

Կողմերին առաջարկվող գործողություններ

1.4.1 Մշակել առավել մասնակցային գործընթաց, ներառելով բնիկներին և տեղական համայնքներին և համապատասխան շահագրգիռ կողմերին, որպես տարածքի վրա հիմնված պլանավորման մի մաս, համաձայն էկոհամակարգային մոտեցման, և օգտագործել արդյունավետ պլանավորման գործընթացներ մշակելու համար անհրաժեշտ առնչվող էկոլոգիական և սոցիալ-տնտեսական տվյալները:

1.4.2 Սահմանել կենսաբազմազանության պահպանության համապատասխան չափելի նպատակներ տարածքների համար՝ հիմնվելով Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի Հավելված 1-ում սահմանված չափանիշների և այլ առնչվող չափանիշների վրա:

1.4.3 Տարածքի պլանավորման գործընթացում ընդգրկել պահպանվող տարածքների հնարավորությունների վերլուծությունը՝ տեղական և տարածաշրջանային մակարդակներում կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը նպաստելու առումով, ինչպես նաև վտանգների և դրանց արձագանքելու միջոցների վերլուծությունը:

1.4.4 Ինչպես նպատակահարմար է, բայց 2010թ-ից ոչ ուշ, մշակել կամ թարմացնել պահպանվող տարածքների կառավարման պլանները՝ հիմնվելով վերը նշված գործընթացի վրա, Կոնվենցիայի երեք նպատակներին ավելի լավ հասնելու համար:

1.4.5 Ինտեգրել կլիմայի փոփոխությանը հարմարվելու միջոցառումները պահպանվող տարածքների պլանավորման, կառավարման ռազմավարությունների և պահպանվող տարածքների համակարգերի կառուցվածքի մեջ:

1.4.6 Ապահովել պահպանվող տարածքների արդյունավետ կառավարումը կամ վերահսկումն անձնակազմի միջոցով, որը լավ ուսուցանված է և հմուտ, զինված է պատշաճ և համապատասխան սարքավորումներով և աջակցություն է ստանում պահպանվող տարածքների կառավարման և պահպանության իրենց հիմնարար դերը կատարելու համար:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

1.4.7 Հավաքել և միջնորդության մեխանիզմի միջոցով տարածել տարածքի պլանավորմանը վերաբերվող ժամանակակից համապատասխան մոտեցումները, շրջանակները և գործիքները, ու նպաստել և աջակցել տարբեր էկոլոգիական ու սոցիալական պայմաններում դրանց կիրառման և հարմարեցման վերաբերյալ փորձի և քաղած դասերի փոխանակմանը:

1.4.8 Տարածել տեղեկություններ պահպանվող տարածքների կառավարման հաջողված մոդելների մասին, որոնք աջակցում են Կոնվենցիայի երեք նպատակներին և կարող են նաև նպաստել չքավորության նվազեցմանը և կայուն զարգացման ջանքերին:

ԽՆԴԻՐ 1.5

Կանխարգելել և նվազեցնել պահպանվող տարածքների հիմնական վտանգների բացասական ազդեցությունները

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2008թ. առկա են պահպանվող տարածքների հիմնական վտանգների բացասական ազդեցությունների հայտնաբերման և կանխարգելման և/կամ նվազեցման արդյունավետ մեխանիզմներ:

Կողմերին առաջարկվող գործողություններ

1.5.1 Կիրառել, ինչպես նպատակահարմար է, պահպանվող տարածքների վրա հնարավոր ազդեցություն ունեցող պլանների կամ ծրագրերի ժամանակին իրականացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, և այդ նպատակով ապահովել ժամանակին իրականացված տեղեկատվական հոսք բոլոր առնչվող կողմերի միջև՝ հաշվի առնելով Կողմերի Կոնֆերանսի VI/7 Ա որոշումը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենսդրությունում և/կամ գործընթացներում և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումներում կենսաբազմազանությանն առնչվող հարցերի ընդգրկմանը վերաբերվող ուղեցույցերի մասին:

1.5.2 Մինչև 2010թ. մշակել ազգային մոտեցումներ պատասխանատվության և փոխհատուցման միջոցառումների վերաբերյալ, ներառյալ «աղտոտողը վճարում է» սկզբունքը կամ այլ համապատասխան մեխանիզմները՝ կապված պահպանվող տարածքներին հասցված վնասների հետ:

1.5.3 Մշակել և իրականացնել պահպանվող տարածքների ամբողջականության վերականգնման միջոցառումներ:

1.5.4 Ձեռնարկել պահպանվող տարածքներում ինվազիվ օտար տեսակների հետ կապված ռիսկի հսկողության միջոցառումներ:

1.5.5 Գնահատել պահպանվող տարածքների հիմնական վտանգները և մշակել ու իրականացնել այդ վտանգների կանխարգելման և/կամ նվազեցման ռազմավարություններ:

1.5.6 Մշակել քաղաքականություններ, բարելավել կառավարումը և ապահովել հրատապ միջոցառումների իրականացում, որոնք կարող են կանգնեցնել պահպանվող տարածքներում պաշարների ապօրինի օգտագործումը, և ուժեղացնել միջազգային և տարածաշրջանային համագործակցությունն այդ պաշարների ապօրինի վաճառքը վերացնելու համար՝ հաշվի առնելով բնիկների և տեղական համայնքների կողմից պաշարների ավանդական կայուն օգտագործումը՝ Կոնվենցիայի 10(c) հոդվածի համաձայն:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

1.5.7 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման գործընթացներում, ընթացակարգերում և կանոնակարգերում կենսաբազմազանության նկատառումների ընդգրկմանը վերաբերվող ուղեցույցերում անդրադառնալ պահպանվող տարածքներին առնչվող հարցերին:

1.5.8 Համագործակցել Ազդեցության գնահատման միջազգային ասոցիացիայի և այլ առնչվող կազմակերպությունների հետ ազդեցության գնահատման ուղեցույցերի հետագա մշակման և բարելավման համար, մասնավորապես շրջակա միջավայրի վրա գնահատման գործընթացների բոլոր փուլերը պահպանվող տարածքներում ընդգրկելու նպատակով՝ հաշվի առնելով էկոհամակարգային մոտեցումը:

1.5.9 Հավաքել և միջնորդության մեխանիզմի և այլ միջոցների միջոցով տարածել հիմնական վտանգների բացասական ազդեցությունների նվազեցմանը վերաբերվող օրինակները, լավագույն պրակտիկան և քաղած դասերը, և նպաստել փորձի փոխանակմանը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ 2. Կառավարում, մասնակցություն, հավասարություն և օգուտների բաշխում

ԽՆԴԻՐ 2.1

Նպաստել հավասարությանը և օգուտների բաշխմանը

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2008թ. մշակել պահպանվող տարածքների ստեղծման և կառավարման հետ կապված ծախսերի և օգուտների հավասար բաշխման մեխանիզմներ:

Կողմերին առաջարկվող գործողություններ

2.1.1 Գնահատել պահպանվող տարածքների ստեղծման և պահպանության հետ կապված տնտեսական և սոցիալ-տնտեսական ծախսերը, օգուտները և ազդեցությունները, մասնավորապես բնիկների և տեղական համայնքների համար, և հարմարեցնել քաղաքականությունները բացասական ազդեցություններից խուսափելու և դրանք նվազեցնելու համար, և, որտեղ տեղին է, փոխհատուցել ծախսերը և հավասար բաշխել օգուտներն ազգային օրենսդրության համաձայն:

2.1.2 Ընդունել և նպաստել պահպանվող տարածքների կառավարման տարբեր ձևերին, կապված Կոնվենցիայի համաձայն կենսաբազմազանության պահպանության նպատակներին հասնելու դրանց ներուժի հետ, որոնք կարող են ընդգրկել բնիկների և տեղական համայնքների կողմից պահպանվող տարածքներ և մասնավոր արգելոցներ: Այդ տարածքների զարգացումը պետք է իրականացվի օրենսդրական և/կամ քաղաքականության, ֆինանսական և համայնքային մեխանիզմներով:

2.1.3 Բնիկների և տեղական համայնքների լիարժեք մասնակցությամբ մշակել քաղաքականություններ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք նպաստում են բնիկների և տեղական համայնքների կողմից պահպանվող տարածքների օրինական ճանաչմանը և արդյունավետ կառավարմանը՝ ինչպես կենսաբազմազանության, այնպես էլ բնիկների ու տեղական համայնքների գիտելիքների, նորարարությունների և պրակտիկաների պահպանության նպատակներին համապատասխանելու եղանակով:

2.1.4 Օգտագործել պահպանվող տարածքների հետ կապված սոցիալական և տնտեսական օգուտները չքավորության նվազեցման համար՝ պահպանվող տարածքների կառավարման նպատակների համաձայն:

2.1.5 Ընդգրկել բնիկներին և տեղական համայնքներին և համապատասխան շահագրգիռ կողմերին մասնակցային պլանավորման և կառավարման մեջ՝ նկատի առնելով էկոհամակարգային մոտեցման սկզբունքները:

2.1.6 Ստեղծել կամ ուժեղացնել ազգային քաղաքականությունները պահպանվող տարածքների գենետիկական պաշարների հասանելիության և դրանց օգտագործման հետ կապված օգուտների արդարացի և հավասար բաշխման նպատակով՝ հաշվի առնելով, որքան նպատակահարմար է, Գենետիկական պաշարների հասանելության և դրանց օգտագործման հետ կապված օգուտների արդարացի և հավասար բաշխման վերաբերյալ Բոնnի ուղեցույցերը:

ԽՆԴԻՐ 2.2

Նպաստել և ապահովել բնիկների և տեղական համայնքների ու առնչվող շահագրգիռ կողմերի ներգրավումը

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2008թ. բնիկների և տեղական համայնքների լիարժեք և արդյունավետ մասնակցություն՝ հարգելով նրանց իրավունքները և ընդունելով նրանց պատասխանատվությունները, ազգային օրենքների և առնչվող միջազգային պարտավորությունների համաձայն, և համապատասխան շահագրգիռ կողմերի մասնակցություն գոյություն ունեցող պահպանվող տարածքների կառավարման և նորերի ստեղծման ու կառավարման հարցում:

Կողմերին առաջարկվող գործողություններ

2.2.1 Իրականացնել մասնակցային ազգային ընդհանուր ամփոփումներ վիճակի, կարիքների և համատեքստից բխող մեխանիզմների վերաբերյալ, որոնք կապված են պահպանվող տարածքների քաղաքականության և կառավարման հարցում շահագրգիռ կողմերի ընդգրկման հետ՝ ապահովելով գենդերային և սոցիալական հավասարություն, ազգային քաղաքականության, պահպանվող տարածքների համակարգերի և առանձին տարածքների մակարդակում:

2.2.2 Իրականացնել հատուկ պլաններ և նախաձեռնություններ պահպանվող տարածքների պլանավորման, ստեղծման, կառավարման և ղեկավարման բոլոր մակարդակներում բնիկների և տեղական համայնքների արդյունավետ ներգրավման համար՝ հարգելով նրանց իրավունքները, ազգային օրենսդրության և առնչվող միջազգային պարտավորությունների համաձայն, և շահագրգիռ կողմերի արդյունավետ ներգրավման համար, մասնավորապես շեշտելով բավարար մասնակցությանը խանգարող խոչընդոտների հայտնաբերումը և վերացումը:

2.2.3 Աջակցել շահագիգիռ կողմերի շրջանակում մասնկցային գնահատման գործողություններին՝ հասարակությունում առկա պահպանության առումով կարևոր գիտելիքների, հմտությունների, միջոցների և հաստատությունների հայտնաբերման և օգտագործման համար:

2.2.4 Նպաստել հնարավորություն ստեղծող պայմաններին (օրենսդրություն, քաղաքականություններ, հզորություններ և միջոցներ) որոշումների կայացման հարցում բնիկների և տեղական համայնքների և առնչվող շահագրգիռ կողմերի ներգրավման նպատակով, և պահպանվող տարածքների ստեղծման և կառավարման համար, ներառյալ համայնքների կողմից պահպանվող և մասնավոր պահպանվող տարածքները, նրանց հզորությունների և հնարավորությունների զարգացման նպատակով:

2.2.5 Ապահովել, որ պահպանվող տարածքների ստեղծման կամ կառավարման հետևանքով բնիկ համայնքների ցանկացած վերաբնակեցում տեղի է ունենում միայն նրանց նախնական հիմնավորված համաձայնության հիման վրա, որը կարող է տրվել ազգային օրենսդրության և առնչվող միջազգային պարտավորությունների համաձայն:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

2.2.6 Կողմերի համար հասանելի դարձնել պահպանվող տարածքներում շահագրգիռ կողմերի մասնակցության վերաբերյալ օրինակները, լավագույն պրակտիկան և այլ աղբյուրները:

2.2.7 Միջնորդության մեխանիզմի, տեխնիկական հրատարակությունների և այլ միջոցների միջոցով նպաստել պահպանության հարցերում շահագրգիռ կողմերի ներգրավման արդյունավետ մեխանիզմների և կառավարման ձևերի միջազգային փորձի փոխանակմանը, մասնավորապես կապված համակառավարվող պահպանվող տարածքների, բնիկների և տեղական համայնքների կողմից պահպանվող տարածքների և մասնավոր պահպանվող տարածքների հետ:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ 3. Հնարավորություններ ստեղծող գործողություններ

ԽՆԴԻՐ 3.1

Պահպանվող տարածքների համար ապահովել հնարավորություններ ստեղծող քաղաքականության, ինստիտուցիոնալ և սոցիալ-տնտեսական պայմաններ

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2008թ. ամփոփել և վերանայել քաղաքականությունները, ինչքան նպատակահարմար է, ներառյալ սոցիալական և տնտեսական գնահատման և խթանների օգտագործումը՝ ապահովելով նպաստավոր հնարավորություններ ստեղծող պայմաններ պահպանվող տարածքների և պահպանվող տարածքների համակարգերի ավելի արդյունավետ ստեղծման և կառավարման համար:

Կողմերին առաջարկվող գործողություններ

3.1.1 Մինչև 2006թ. հայտնաբերել օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերը և խոչընդոտները, որոնք խանգարում են պահպանվող տարածքների արդյունավետ ստեղծմանը և կառավարմանը, և մինչև 2009թ. արդյունավետ արձագանքել այդ բացերին և խոչընդոտներին:

3.1.2 Իրականացնել երկրի տնտեսության և մշակույթի, ինչպես նաև ազգային մակարդակում Հազարամյակի մարտահրավերների նպատակներին հասնելու համար պահպանվող տարածքների ներդրումների ազգային մակարդակի գնահատումներ՝ նկատի ունենալով, ինչքան նպատակահարմար է, շրջակա միջավայրի ծառայությունները, ինչպես նաև ինտեգրել տնտեսական գնահատման և բնական պաշարների հաշվառման գործիքներն ազգային պլանավորման գործընթացներում, որպեսզի հայտնաբերվեն պահպանվող տարածքների կողմից ապահովվող թաքնված և չթաքնված տնտեսական օգուտները և այդ օգուտների օգտագործողները:

3.1.3 Համապատասխանեցնել սեկտորային քաղաքականությունները և օրենքներն՝ ապահովելով, որ դրանք նպաստեն պահպանվող տարածքների համակարգի պահպանությանը և արդյունավետ կառավարմանը:

3.1.4 Հաշվի առնել ղեկավարման սկզբունքները, որոնցից են օրենքի գերակայությունը, ապակենտրոնացումը և որոշումների կայացման մասնակցային մեխանիզմները պատասխանատվության և վեճերի լուծման արդարացի հաստատությունների և ընթացակարգերի համար:

3.1.5 Հայտնաբերել և վերացնել սեկտորային քաղաքականությունների բացասական խթանները և անհամապատասխանությունները, որոնք ավելացնում են պահպանվող տարածքների վրա ազդող ճնշումները, կամ ձեռնարկել դրանց բացասական արդյունքների նվազեցման միջոցներ: Հնարավորության դեպքում փոխարինել դրանք պահպանության առումով դրական խթաններով:

3.1.6 Հայտնաբերել և ստեղծել դրական խթաններ, որոնք աջակցում են պահպանվող տարածքների ամբողջականությանը և պահպանությանը, ինչպես նաև բնիկների և տեղական համայնքների ու շահագրգիռ կողմերի ներգրավմանը պահպանության հարցում:

3.1.7 Ընդունել օրենսդրական շրջանակներ, որտեղ նպատակահարմար է, երկրների ազգային, տարածաշրջանային և ենթաազգային պահպանվող տարածքների համակարգերի համար:

3.1.8 Մշակել ազգային խթանման մեխանիզմներ, հաստատություններ և օրենսդրական շրջանակներ, որպեսզի նպաստել տարբեր տեսակի պահպանվող տարածքների ստեղծմանը, որոնք իրականացնում են կենսաբազմազանության պահպանության նպատակները, ներառյալ, որտեղ նպատակահարմար է, մասնավոր տարածքներում և մասնավոր արգելոցներում:

3.1.9 Հայտնաբերել և խթանել տնտեսական հնարավորությունները և շուկաները տեղական, ազգային և միջազգային մակարդակներում, որոնք առնչվում են պահպանվող տարածքների կողմից տրամադրվող ապրանքներին և ծառայություններին և/կամ կախված են պահպանվող տարածքների կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայություններից, համաձայն պահպանվող տարածքների նպատակներին, և նպաստել օգուտների հավասար բաշխմանը:

3.1.10 Մշակել անհրաժեշտ մեխանիզմներ կենսաբանական բազմազանության պահպանության համար տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում պատասխանատու հաստատությունների համար ինստիտուցիոնալ և ֆինանսական կայունությանը հասնելու նպատակով:

3.1.11 Համագործակցել հարևան երկրների հետ անդրսահմանային պահպանվող տարածքների և ազգային սահմանների երկարությամբ հարևան պահպանվող տարածքների և այլ նման մոտեցումների համար, ներառյալ տարածաշրջանային ցանցերը, հնարավորություններ ստեղծող պայմաններ ստեղծելու նպատակով:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

3.1.12 Համագործակցելով հիմնական գործընկերների հետ, որոնցից են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը, ԲՊՄՄ, ԲՀՀ և այլ կոնվենցիաների քարտուղարությունները՝ հավաքել տեղեկություններ խթանիչ միջոցների վերաբերյալ համապատասխան ուղեցույցերի, տարբեր նյութերի և այլ տեղեկությունների մասին, ներառյալ խթանման տարբերակների զարգացմանն առնչվող միջոցները:

3.1.13 Հավաքել և տարածել, միջնորդության մեխանիզմի և այլ միջոցների օգնությամբ, պահպանվող տարածքների կառավարման համար խթանիչ միջոցների օգտագործման վերաբերյալ լավագույն պրակտիկայի օրինակները:

3.1.14 Հավաքել և տարածել, միջնորդության մեխանիզմի և այլ միջոցների օգնությամբ, պահպանվող տարածքների կառավարման պլաններում, ծրագրերում և քաղաքականություններում խթանման միջոցների օգտագործումն ինտեգրելու ուղիների և միջոցների վերաբերյալ լավագույն պրակտիկան, ներառյալ բացասական խթանների վերացման կամ նվազեցման հնարավորությունները:

ԽՆԴԻՐ 3.2

Ստեղծել հզորություններ պահպանվող արածքների պլանավորման, ստեղծման և կառավարման համար

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2010թ. իրականացնել հզորությունների ստեղծման ընդգրկուն ծրագրեր և նախաձեռնություններ անհատական, համայնքային և ինստիտուցիոնալ մակարդակներում գիտելիքների և հմտությունների զարգացման և մասնագիտական ստանդարտների բարձրացման նպատակով:

Կողմերին առաջարկվող գործողություններ

3.2.1 Մինչև 2006թ. իրականացնել պահպանվող տարածքների հզորությունների կարիքների ազգային գնահատումներ և այդ գնահատումների հիման վրա մշակել հզորությունների ստեղծման ծրագրեր, ներառյալ պահպանվող տարածքների կառավարման վերաբերյալ անընդհատ ուսուցման համար ուսումնական ծրագրերի, ռեսուրսների և ծրագրերի մշակումը:

3.2.2 Ստեղծել արդյունավետ մեխանիզմներ պահպանվող տարածքների կառավարման վերաբերյալ գոյություն ունեցող գիտելիքների և փորձի փաստագրման համար, ներառյալ ավանդական գիտելիքները հոդված 8(j) և առնչվող դրույթների համաձայն, և հայտնաբերել գիտելիքների և հմտությունների բացերը:

3.2.3 Միջնորդության մեխանիզմի և այլ միջոցների միջոցով փոխանակել քաղած դասերը, տեղեկությունները և հզորությունների ստեղծման փորձն երկրների և համապատասխան կազմակերպությունների միջև:

3.2.4 Ավելացնել հաստատությունների հզորությունները պահպանվող տարածքների կառավարման համար միջսեկտորային համագործակցություն ստեղծելու նպատակով տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում:

3.2.5 Ավելացնել պահպանվող տարածքների հաստատությունների հզորությունները ֆինանսական խթանների, շրջակա միջավայրի ծառայությունների և այլ գործիքների միջոցով կայուն ֆինանսավորում զարգացնելու համար:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

3.2.6 Համագործակցել ԲՊՄՄ և այլ համապատասխան կազմակերպությունների հետ հասանելի տեղեկությունների հավաքագրման և տարածման համար:

3.2.7 Համագործակցել նախաձեռնությունների հետ, որոնցից են Պահպանվող տարածքների ուսումնական ցանցը (PALNet-IUCN) և ուսումնասիրել այդ փորձերից քաղած դասերը՝ համագործակցելով համապատասխան կազմակերպությունների հետ:

ԽՆԴԻՐ 3.3

Մշակել, կիրառել և փոխանցել պահպանվող տարածքներին վերաբերվող համապատասխան տեխնոլոգիաները

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2010թ. զգալի բարելավել պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման համապատասխան տեխնոլոգիաների և նորարարական մոտեցումների զարգացումը, հաստատումը և փոխանցումը՝ հաշվի առնելով Կողմերի Կոնֆերանսի որոշումները տեխնոլոգիաների փոխանցման և համագործակցության մասին:

Կողմերին առաջարկվող գործողություններ

3.3.1 Փաստագրել և Քարտուղարությանը ներկայացնել պահպանվող տարածքների կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման, ինչպես նաև պահպանվող տարածքների կառավարման համապատասխան տեխնոլոգիաները:

3.3.2 Գնահատել պահպանվող տարածքների կառավարման կարևոր տեխնոլոգիաների կարիքները՝ ներգրավելով բնիկներին և տեղական համայնքներին և շահագրգիռ կողմերին, որոնցից են հետազոտական հաստատությունները, ոչ կառավարական կազմակերպությունները և մասնավոր սեկտորը:

3.3.3 Խրախուսել համապատասխան տեխնոլոգիաների զարգացումը և օգտագործումը, ներառյալ բնական ապրելավայրերի վերականգնման, պաշարների քարտեզագրման, կենսաբանական գույքագրման և կենսաբազմազանության արագ գնահատման, մոնիտորինգի, in situ և ex situ պահպանության, կայուն օգտագործման և այլի վերաբերյալ բնիկների և տեղական համայնքների տեխնոլոգիաները՝ նրանց մասնակցությամբ, հավանությամբ և ներգրավմամբ հոդված 8(j) և առնչվող դրույթների համաձայն:

3.3.4 Նպաստել տեխնոլոգիայի փոխանցման համար հնարավորություններ ստեղծող պայմաններին՝ պահպանվող տարածքների կառավարման նպատակով տեխնոլոգիայի փոխանցման և համագործակցության մասին Կողմերի Կոնֆերանսի VII/29 որոշման համաձայն:

3.3.5 Բարելավել տեխնոլոգիայի փոխանցումը և համագործակցությունը պահպանվող տարածքների կառավարման բարելավման նպատակով:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

3.3.6 Հավաքել և տարածել Կողմերի և առնչվող միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկությունները պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման և պահպանվող տարածքների կենսաբանական բազմազանության պահպանության և կայուն օգտագործման վերաբերյալ համապատասխան տեխնոլոգիաները և մոտեցումները:

ԽՆԴԻՐ 3.4

Ապահովել պահպանվող տարածքների և պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի ֆինանսական կայունությունը

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2008թ. ապահովել պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի արդյունավետ վարման և կառավարման ծախսերը ծածկելու համար բավարար ֆինանսական, տեխնիկական և այլ միջոցներ, ներառյալ ազգային և միջազգային աղբյուրները, մասնավորապես զարգացող երկրների և անցումային տնտեսությամբ երկրների և զարգացող փոքր կղզի պետությունների կարիքներին աջակցելու նպատակով:

Կողմերին առաջարկվող գործողություններ

3.4.1 Մինչև 2005թ. իրականացնել առկա ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և պահպանվող տարածքների ազգային համակարգին առնչվող ֆինանսական կարիքների ուսումնասիրություն ազգային մակարդակում, և հայտնաբերել այդ կարիքներին արձագանքելու տարբերակներ ազգային և միջազգային միջոցների զուգակցմամբ և հաշվի առնելով բոլոր հնարավոր ֆինանսավորման գործիքները, որոնցից են հանրային ֆինանսավորումը, բնապահպանական գործողություններն արտաքին պարտքի դիմաց, բացասական խթանների և սուբսիդիաների վերացումը, մասնավոր ֆինանսավորումը, հարկերը և վճարներն էկոլոգիական ծառայությունների համար:

3.4.2 Մինչև 2008թ. մշակել և սկսել իրականացնել երկրի մակարդակով կայուն ֆինանսավորման պլաններ, որոնք աջակցում են պահպանվող տարածքների ազգային համակարգերին, ներառյալ անհրաժեշտ կանոնակարգող, օրենսդրական, քաղաքականության, ինստիտուցիոնալ և այլ միջոցառումները:

3.4.3 Աջակցել և ավելի զարգացնել միջազգային ֆինանսավորման ծրագրերը զարգացող երկրներում և անցումային տնտեսությամբ երկրներում և զարգացող փոքր կղզի պետություններում պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի իրականացմանն աջակցելու համար:

3.4.4 Համագործակցել այլ երկրների հետ պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի կայուն ֆինանսավորման ծրագրերի մշակման և իրականացման համար:

3.4.5 Համապատասխան հաստատություններին և մեխանիզմներին, ներառյալ Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի շրջանակներում հետագա ազգային հաշվետվությունների միջոցով, և Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազային, կանոնավոր ձևով տրամադրել տեղեկություններ պահպանվող տարածքների ֆինանսավորման վերաբերյալ:

3.4.6 Խրախուսել պահպանվող տարածքների կարիքների ինտեգրումն ազգային և, որտեղ նպատակահարմար է, տարածաշրջանային զարգացման և ֆինանսավորման ռազմավարություններում և զարգացման համագործակցության ծրագրերում:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

3.4.7 Կազմակերպել ինչքան հնարավոր է շուտ, բայց 2005 թ-ից ոչ ուշ դոնոր գործակալությունների և այլ համապատասխան կազմակերպությունների հանդիպում աշխատանքների ծրագրի իրականացման նպատակով զարգացող երկրներին և անցումային տնտեսությամբ երկրներին և փոքր կղզի զարգացող պետություններին նոր և լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու հնարավորությունների քննարկման համար:

3.4.8 Հավաքել և տարածել պահպանվող տարածքների ֆինանսավորմանն առնչվող օրինակներ և լավագույն պրակտիկաներ՝ միջնորդության մեխանիզմի և այլ միջոցների միջոցով:

3.4.9 Մինչև 2006թ. ամփոփել և տարածել ուսումնասիրություններ պահպանվող տարածքների կողմից մատուցվող էկոհամակարգային ծառայությունների գնահատման վերաբերյալ:

ԽՆԴԻՐ 3.5
Հզորացնել հաղորդակցությունը, կրթությունը և հանրային իրազեկությունը

ՆՊԱՏԱԿ
Մինչև 2008թ. զգալի բարձրացնել պահպանվող տարածքների կարևորության և օգուտների վերաբերյալ հանրային իրազեկությունը, ըմբռնումը և գնահատումը:

Կողմերին առաջարկվող գործողություններ

3.5.1 Մշակել կամ ուժեղացնել կրթության և հանրային իրազեկության ռազմավարությունները և ծրագրերը, որոնք վերաբերվում են պահպանվող տարածքների կարևորությանը կենսաբազմազանության պահպանության և կայուն սոցիալ-տնտեսական զարգացման դրանց դերի առումով՝ սերտորեն համագործակցելով Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի շրջանակներում Հաղորդակցության, կրթության և հանրային իրազեկության նախաձեռնության (ՀԿՀԻ) հետ և ուղղված բոլոր շահագրգիռ կողմերին:

3.5.2 Սահմանել պահպանվող տարածքներին առնչվող կրթության, իրազեկության և հաղորդակցության ծրագրերի հիմնական թեմաները, ներառյալ, մասնավորապես, դրանց ներդրումը տնտեսության և մշակույթի համար՝ կոնկրետ վերջնարդյունքներ ստանալու նպատակով, որոնցից են պաշար օգտագործողների կամ այլ շահագրգիռ կողմերի համաձայնությունը, կամ բնիկների և տեղական համայնքների և քաղաքականություն մշակողների կողմից գիտականորեն հիմնավորված գիտելիքների ավելի լավ ըմբռնումը, և բնիկների ու տեղական համայնքների կարիքների, առաջնայնությունների և արժեքների ավելի լավ ըմբռնումը, կառավարությունների, ոչ կառավարական կազմակերպությունների և այլ առնչվող շահագրգիռ կողմերի շրջանակում գիտելիքները, նորարարությունները և պրակտիկաները:

3.5.3 Հզորացնել և, որտեղ անհրաժեշտ է, ստեղծել տեղեկատվական մեխանիզմներ՝ ուղղված թիրախային խմբերին, որոնցից են մասնավոր սեկտորը, քաղաքականություն մշակողները, զարգացման հաստատությունները, համայնքային կազմակերպություններն, երիտասարդությունը, լրատվական միջոցները և լայն հասարակությունը:

3.5.4 Մշակել պահպանվող տարածքների կառավարողների միջև և պահպանվող տարածքների կառավարողների ու բնիկների և տեղական համայնքների և նրանց կազմակերպությունների և բնապահպանական ոլորտում կրթություն կազմակերպողների և այլ ընդգրկված կազմակերպությունների միջև կառուցողական երկխոսության և տեղեկությունների ու փորձի փոխանակման մեխանիզմներ:

3.5.5 Ընդգրկել պահպանվող տարածքների առարկան դպրոցական ուսումնական ծրագրերում որպես բաղկացուցիչ մաս, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության ոլորտում:

3.5.6 Ստեղծել մեխանիզմ և գնահատել հաղորդակցության, կրթության և հանրային իրազեկության ծրագրերի ազդեցությունները կենսաբազմազանության պահպանության վրա՝ ապահովելու համար, որ դրանք բարձնացնում են հանրային իրազեկությունը, փոխում են վարքը և աջակցում են պահպանվող տարածքների նպատակների իրականացմանը:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

3.5.7 Համագործակցել ԲՊՄՄ և այլ առնչվող կազմակերպությունների հետ, որպեսզի հավաքագրվեն և տարածվեն կրթական միջոցներ և նյութեր պահպանվող տարածքներին աջակցելու նպատակով դրանք հարմարացնելու և օգտագործելու համար՝ որպես կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործմանը հասնելու կարևոր միջոց:

3.5.8 Համագործակցելով ԲՊՄՄ և այլ համապատասխան գործընկերների հետ՝ ստեղծել նախաձեռնություն գլոբալ նորությունները և հաճելի ժամանցի ոլորտը (հեռուստատեսություն, ֆիլմեր, հանրածանոթ երաժշտություն, ինտերնետ և այլն) գլոբալ կամպանիայում ընդգրկելու համար՝ ուղղված կենսաբանական բազմազանության կորստի հետևանքների և կենսաբազանության պահպանության համար պահպանվող տարածքների կարևոր դերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԷԼԵՄԵՆՏ 4. Ստանդարտներ, գնահատում և մոնիտորինգ

ԽՆԴԻՐ 4.1

Մշակել և ընդունել պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի համար նվազագույն ստանդարտներ և լավագույն պրակտիկաներ

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2008թ. մշակել և ընդունել պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային համակարգերի պլանավորման, ընտրության, ստեղծման, կառավարման և ղեկավարման ստանդարտներ, չափանիշներ և լավագույն պրակտիկաներ:

Կողմերին առաջարկվող գործողություններ

4.1.1 Համագործակցել այլ Կողմերի և համապատասխան կազմակերպությունների, մասնավորապես ԲՊՄՄ-ի հետ, պահպանվող տարածքների պլանավորման և կառավարման, ղեկավարման և մասնակցության վերաբերյալ կամավոր ստանդարտների և լավագույն պրակտիկաների մշակման, փորձարկման, վերանայման և աջակցման նպատակով:

4.1.2 Մշակել և իրականացնել պահպանվող տարածքների համակարգերի միջոցով ստացված արդյունքների արդյունավետ և երկարաժամկետ մոնիտորինգի ծրագիր՝ կապված այս աշխատանքների ծրագրի խնդիրների և նպատակների հետ:

4.1.3 Հաշվի առնելով մոնիտորինգի արդյունքները՝ հարմարեցնել և բարելավել պահպանվող տարածքների կառավարումը՝ հիմնվելով էկոհամակարգային մոտեցման վրա:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

4.1.4 Համագործակցելով հիմնական գործընկերների հետ և հիմնվելով լավագույն պրակտիկաների վրա՝ նպաստել Կողմերին առկա ուղեցույցերի տրամադրման առումով՝ պահպանվող տարածքների և համակարգերի պլանավորման, ընտրության, ստեղծման, կառավարման և ղեկավարման նվազագույն ստանդարտների վերաբերյալ:

4.1.5 Հավաքել տեղեկություններ պահպանվող տարածքների արդյունավետ կառավարման վերաբերյալ լավագույն պրակտիկաների և օրինակների առումով, և տարածել դրանք միջնորդության մեխանիզմի միջոցով և նպաստել տեղեկությունների փոխանակմանը:

ԽՆԴԻՐ 4.2

Գնահատել և բարելավել պահպանվող տարածքների կառավարման արդյունավետությունը

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2010թ. Կողմերն ընդունել և իրականացնում են տարածքների, ազգային և տարածաշրջանային համակարգերի և անդրսահմանային պահպանվող տարածքների մակարդակներում պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության մոնիտորինգի, գնահատման և զեկուցման շրջանակներ:

Կողմերին առաջարկվող գործողություններ

4.2.1 Մինչև 2006թ. մշակել և ընդունել պահպանվող տարածքների կառավարման և ղեկավարման արդյունավետության գնահատման համապատասխան մեթոդներ, ստանդարտներ, չափանիշներ և ցուցանիշներ, և ստեղծել համապատասխան տվյալների բազա՝ հաշվի առնելով կառավարման արդյունավետության գնահատման ԲՊՄՄ-ՊՏՀՀ շրջանակը և այլ առնչվող մեթոդները, որոնք պետք

է հարմարեցվեն տեղական պայմաններին:

4.2.2 Մինչև 2010թ. իրականացնել յուրաքանչյուր Կողմի պահպանվող տարածքների առնվազն 30%-ի, ինչպես նաև պահպանվող տարածքների ազգային համակարգերի և, ինչքան նպատակահարմար է, էկոլոգիական ցանցերի կառավարման արդյունավետության գնահատումներ:

4.2.3 Պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության գնահատման արդյունքում ստացված տեղեկություններն ընդգրկել Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի շրջանակում ներկայացվող ազգային զեկույցներում:

4.2.4 Իրականացնել տարածքի և համակարգի մակարդակում կառավարման արդյունավետության գնահատումներից բխող հիմնական առաջարկությունները՝ որպես հարմարեցված կառավարման ռազմավարությունների բաղկացուցիչ մաս:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

4.2.5 Հավաքել և տարածել կառավարման արդյունավետության վերաբերյալ տեղեկություններ միջնորդության մեխանիզմի միջոցով, և ստեղծել պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության հետ կապված փորձագետների տվյալների բազա, և նկատի ունենալ պահպանվող տարածքների կառավարման արդյունավետության գնահատման համար համապատասխան մեթոդների, չափանիշների և ցուցանիշների վերաբերյալ միջազգային աշխատանքային հանդիպման կազմակերպման հնարավորությունը:

4.2.6 Համագործակցելով ԲՊՄՄ-ՊՏՀՀ և այլ առնչվող կազմակերպությունների հետ՝ հավաքել և տարածել տեղեկություններ պահպանվող տարածքների պլանավորման, ստեղծման և կառավարման լավագույն պրակտիկաների վերաբերյալ:

ԽՆԴԻՐ 4.3

Գնահատել և մոնիտորինգի ենթարկել պահպանվող տարածքների վիճակը և միտումները

ՆՊԱՏԱԿ

Մինչև 2010թ. ստեղծել ազգային և տարածաշրջանային համակարգեր, որոնք հնարավորություն են ստեղծում արդյունավետ մոնիտորինգի ենթարկել պահպանվող տարածքների ընդգրկման գոտին, կարգավիճակը և միտումներն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում, և աջակցել կենսաբազմազանության գլոբալ նպատակներին հասնելու գործում առաջընթացի գնահատմանը:

Կողմերին առաջարկվող գործողություններ

4.3.1 Իրականացնել պահպանվող տարածքների համակարգերի և տարածքների կենսաբազմազանության վիճակի և միտումների մոնիտորինգի և գնահատման ազգային և տարածաշրջանային ծրագրեր:

4.3.2 Գնահատել պահպանվող տարածքների նպատակներին հասնելու առումով առաջընթացը՝ հիմնվելով այդ նպատակների առումով առաջընթացի պարբերաբար իրականացվող մոնիտորինգի և զեկուցման վրա՝ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի շրջանակում ապագա ազգային զեկույցներում, ինչպես նաև 9-րդ Կողմերի Կոնֆերանսի թեմատիկ զեկույցում:

4.3.3 Բարելավել և թարմացնել պահպանվող տարածքների ազգային և տարածաշրջանային տվյալների բազաները և համալրել Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազան՝ որպես պահպանվող տարածքների վիճակի և միտումների գնահատման և մոնիտորինգի հիմնական աջակցող մեխանիզմներ:

4.3.4 Մասնակցել ՄԱՇՄԾ-ԲՄՀԿ կողմից վարվող Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազային, և Միավորված ազգերի Պահպանվող տարածքների ցուցակին և Երկրագնդի պահպանվող տարածքների վիճակի գնահատման գործընթացին:

4.3.5 Խրախուսել նոր տեխնոլոգիաների ստեղծումը և օգտագործումը, ներառյալ պահպանվող տարածքների մոնիտորինգի համար աշխարհագրական տեղեկատվական համակարգը և դիստանցիոն զոնդավորման միջոցները:

Քարտուղարությանն առաջարկվող աջակցող գործողություններ

4.3.6 Մշակել և ամրապնդել աշխատանքային համագործակցությունը համապատասխան կազմակերպությունների և հաստատությունների հետ, որոնք մշակել և վարում են պահպանվող տարածքների մոնիտորինգի համակարգեր և տվյալների բազաներ, մասնավորապես ՄԱՇՄԾ- ԲՄՀԿ և ԲՊՄՄ Պահպանվող տարածքների համաշխարհային հանձնաժողովի հետ:

4.3.7 Ուսումնասիրել Ջրաճահճային տարածքների մասին կոնվենցիայի, Համաշխարհային ժառանգության մասին կոնվենցիայի և ՄԱԿԳՄԿ Մարդը և կենսոլորտը ծրագրի և այլ տարածաշրջանային համակարգերի շրջանակում առանձնացված տարածքների վերաբերյալ զեկուցման համար ներդաշնակ համակարգի և ժամանակացույցի ստեղծման հնարավորությունը՝ հաշվի առնելով, ինչքան նպատակահարմար է, զեկուցման ներդաշնակեցման վերաբերյալ ՄԱՇՄԾ- ԲՄՀԿ ընթացիկ աշխատանքը և ԲՊՄՄ պահպանվող տարածքների կառավարման դասակարգման համակարգը՝ զեկուցման նպատակների համար:

4.3.8 Պատրաստել պահպանվող տարածքների վերաբերյալ թեմատիկ զեկույցի թարմացված ֆորմատ, ընդգրկելով, մասնավորապես, պահպանվող տարածքների և պահպանվող տարածքների ազգային համակարգերի ինտեգրումը համապատասխան սեկտորներում և տարածքային պլանավորման մեջ՝ հաշվի առնելով ազգային զեկույցների մասին VII/25 որոշումը:

ԽՆԴԻՐ 4.4

Ապահովել, որ գիտական տվյալները նպաստեն պահպանվող տարածքների և պահպանվող տարածքների համակարգերի ստեղծմանը և արդյունավետությանը

ՆՊԱՏԱԿ

Պահպանվող տարածքներին առնչվող գիտական տվյալները զարգանում են որպես ներդրում դրանց ստեղծման, արդյունավետության և կառավարման համար:

Կողմերին առաջարկվող գործողություններ

4.4.1 Բարելավել պահպանվող տարածքների հետ կապված հետազոտական, գիտական և տեխնիկական համագործակցությունն ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

4.4.2 Նպաստել միջդիսցիպլինար հետազոտություններին պահպանվող տարածքների էկոլոգիական, սոցիալական և տնտեսական ասպեկտների ըմբռնումը բարելավելու համար, ներառյալ պահպանվող տարածքներից ստացվող ապրանքների և ծառայությունների գնահատման մեթոդները և տեխնիկաները:

4.4.3 Խրախուսել կենսաբանական բազմազանության տարածման, վիճակի և միտումների վերաբերյալ գիտելիքների բարելավմանն ուղղված ուսումնասիրությունները:

4.4.4 Խրախուսել պահպանվող տարածքների ստեղծման և արդյունավետ կառավարման հետ կապված համագործակցային հետազոտությունները գիտնականների և բնիկների ու տեղական համայնքների միջև 8 (j) հոդվածի համաձայն:

4.4.5 Նպաստել պահպանվող տարածքներում առաջացող և դրանց վերաբերվող գիտական տվյալների տարածմանը՝ ընդգրկելով միջնորդության մեխանիզմը:

4.4.6 Նպաստել գիտական և տեխնիկական տեղեկությունների, մասնավորապես պահպանվող տարածքների մասին հրատարակությունների տարածմանը և հեշտացնել դրանց հասանելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով զարգացող երկրների և անցումային տնտեսությամբ երկրների, մասնավորապես առավել պակաս զարգացած երկրների և զարգացող փոքր կղզի պետությունների կարիքների վրա:

4.4.7 Զարգացնել և ամրապնդել աշխատանքային համագործակցությունը համապատասխան կազմակերպությունների և հաստատությունների հետ, որոնք իրականացնում են պահպանվող տարածքներում կենսաբազմազանության ըմբռնման բարելավմանն ուղղված հետազոտական ուսումնասիրություններ: